ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ԱՊՐԻԼ 2014

Լիահոնա

Ուրախություն և երախտագիտություն հարություն առած Փրկչի համար, էջ 16

Մարգարեին հետևելու հինգ ուղի, էջ 22

Քահանայության օրհնությունները հասու են բոլորին, էջեր 46, 50, 53, 54, 60

«Մի՞թե կինը կմոռանա իր կաթնակեր մանուկին, որ չգթա իր որովայնի ծննդեան վրա. նրանք եթե մոռանան էլ, բայց ես քեզ չեմ մոռանալ: Սիա ես իմ ձեռքի մեջ եմ փորագրել քեզ»:

Եսայիա ԽԹ.15–16:

Լիահոնա, Ապրիլ 2014

16

ՈՒՂԵՐՁՆԵՐ

4 **Առաջին Նախագահության Ուղերձ. Ամուր գցված խարիսխ**
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

7 **Այցելող Ուսուցիչների Ուղերձ. Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելությունը՝ Փրկիչ և Քավիչ**

ԸՆՏՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

12 **Մենք Տիրոջ ձեռքերն ենք**
Նիլ Ք. Նյուել
Սրբերը Բրազիլիայից, Էկվադորից, Ֆիլիպիններից և Ռուսաստանից ցույց են տալիս, թե ինչ է նշանակում ծառայել նրանց, ովքեր կարիքի մեջ են:

16 **Հատուկ Վկաները վկայում են կենդանի Քրիստոսի մասին**
Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամները վկայում են Փրկչի մասին:

22 **Հետևել մարգարեին**
Երեց Վիլիամ Ռ. Վոքեր
Մենք պետք է սովորենք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի անձնական օրինակից այս հինգ դասերը:

26 **Ռահվիրաներ ամեն երկրում. Ֆիլիպիններ՝ Հոգևոր ուժ ծովի կղզիների վրա**
Չնայած բնական աղետներին և տնտեսական ճգնաժամին Ֆիլիպիններում, Սրբերը ականատես եղան այնտեղ հրաշալի աճին:

32 **Օգտագործել Փրկության ծրագիրը հարցերին պատասխանելու համար**
Լա Ռեն Փորթեր Գանթ
Փրկության ծրագիրը կարող է օգնել մեզ պատասխանել կյանքի որոշ հիմնարար հարցերին:

ԲԱԺԻՆՆԵՐ

8 **Հին Կտակարանի մարգարեները. Մովսես**

10 **Մեր տները, մեր ընտանիքները. Յոթ օր մինչև Զատիկը**

36 **Վերջին Օրերի Սրբերի ձայները**

80 **Մինչև նոր հանդիպում. Հույս տեսնել ապագայում**
Սթան Փագսլի

ԿԱԶՄԻ ՎՐԱ
Առջևում. *Գերեզմանաքարը,* Ջ. Քրրք
Ռիչարդս, չբազմացնել: Առջևի կազմի ներսում. Լուսանկարը՝: Ջոն Լյուքի

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՉԱՓԱՀԱՍՆԵՐ

40

40 **Եթե ձեր աչքն ուղղված լինի միայն Իմ փառքին**
Քեթրին Նելսոն և Հեյդի Մակքոնկի
Համեստ անձնավորություն լինելը պահանջում է ավելին, քան ճիշտ հագուստ կրելը:

44 **Երիտասարդ չափահասների դիմանկարները. Դարձ և զոհաբերություն Ֆինլանդիայում**
Մելիսա Զենտենո

Տեսեք, թե կարող եք գտնել այդ համարում թաքնված Լիահոնան: Որո՞նք են նրա սիրված բաները:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

46 **Տղամարդիկ և կանայք Տիրոջ աշխատանքում**
Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Եվ տղամարդիկ և կանայք պետք է հասկանան Աստծո արքայությունում կանանց դերերի մասին այս ճշմարտությունները:

50 **Նախապատրաստվել ծառայելու, ծառայել՝ նախապատրաստվելու**
Դեյվիդ Լ. Բեք
Ձեր Միարոնյան Քահանայության ծառայությունը չափանիշ կսահմանի ձեր ողջ կյանքի համար: Սիա, թե ինչպես:

53 **Զորություն՝ օրհնելու բոլոր մարդկանց**

54 **Ձեր տուն բերեք Քահանայության օրհնությունները**
Բոնիի Օսկարսոն
Անկախ ձեր սեռից և ընտանեկան պայմաններից, դուք կարող եք օգտվել քահանայությունից ձեր ընտանիքին օրհնելու համար:

56 **Արժանավորության վստահություն**
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Երբ դուք կանչվում եք օգտագործելու քահանայությունը, արդյո՞ք վստահություն ունեք պատասխանելու:

60 **Դուռը և ուղին**

62 **Հարցեր և պատասխաններ**
«Ի՞նչ պետք է անեմ ես, երբ դպրոցում բարձրացվում է մի թեմա, որը դեմ է ավետարանի ուսմունքներին, ինչպես օրինակ արհեստական վիժեցումը»:

64 **Ճի՞շտ է, թե սխալ**
Դեյվիդ Ա. Էդվարդս
Մասնակցեք վիկտորինային և տեսնեք ավելին այն մասին, թե ինչպես է Սատանան ստում մեզ:

ԵՐԵԽԱՆԵՐ

68

67 **«Դա շատ հեշտ է, պապիկ»:**
Երեց Էնրիկե Ռ. Ֆալաբելլա
Ռաքելը չէր հավատում, որ բավականին մեծ է Մորմոնի Գիրքը կարդալու համար:

68 **Փորթերի խոստումը**
Քերոլ Մ. Սթեֆենս
Փորթերը պահում էր իր ուխտերը և անգամ չէր գիտակցում այդ մասին:

70 **Տուն բերենք Երեխաների խմբի դասը. Ընտանիքն առանցքային դեր ունի Երկնային Հոր ծրագրում**
Ջեն Թեյլոր

72 **Պայծառ միտք**

73 **Տեղաշարժել քարը**
Երեց Տերենս Մ. Վինսոն
Տերն ուզում է օգնել մեզ լուծել մեր խնդիրները, անգամ փոքրերը:

74 **Ընկերներ ողջ աշխարհում: Ես Դրիան եմ, Ֆիլիպիններից.**

76 **Փոքր երեխաների համար**

81 **Մարգարեի բնութագիրը. Հովարդ Վ. Հանթեր**

ԱՊՐԻԼ 2013 ՀԱՏՈՐ 15 ՀԱՄԱՐ 1
ԼԻԱՀՈՆԱ 10984 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Բոյդ Քֆ. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն

Խմբագիր. Քրեյգ Ա. Քարդոն

Խորհրդատուներ. Խոսե Լ. Ալոնսո, Մերվին Բ. Առնոլդ, Շեյն Մ. Բոուեն, Սթենլի Գ. Էլլիս, Քրիստոֆել Գոլդեն

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Տ. Ուորներ

Ընտանիքների և անդամների աջակցման տնօրեն. Վինսենթ Ա. Վոգն

Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Ալան Ռ. Լոյբորգ

Գործարար ղեկավար. Գարֆ Քենոն

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն

Գլխավոր խմբագրի օգնական. Ռայան Քար

Գրողներ և խմբագրողներ. Սյուզան Բարեթ, Բրիթանի Բիթի, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Մինդի Ռեյ Ֆրիդմեն, Լորի Ֆուլեր, Գարեթ Հ. Գարֆ, Լառեն Փորթեր Գանթ, Ջենիֆեր Գրեյս Ջոնս, Մայքլ Ռ. Մորիս, Սալլի Ջոնսոն Օդրիք, Ջոշուա Ջ. Փերքի, Ջեն Փինբորո, Ռիչարդ Մ. Ռոմնի, Փոլ Վանդենբերգ, Մարիսա Վիդիսոն

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն

Արվեստի տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն

Ձևավորում. Ջանեթ Էնդրյուս, Ֆեյ Պ. Անդրուս, Մենդի Մ. Բենթլի, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլդ, Նեյթ Ջինս, Քոլլին Հինքլի, Էրից Պ. Ջոնսեն, Սյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մույ, Մարք Վ. Ռոբինսոն, Բրեդ Թիլր, Կ. Նիկոլ Վոլկենհորստ

Մտավոր սեփականության համակարգող. Քոլթ Նեբեքեր Օն

Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս

Հրատարակում. Քեվին Ս. Բենքս, Քոննի Բոթորփ Բրիջ, Ջուլի Բըրդեթ, Բրայըն Վ. Գիջի, Դենիզ Քըրքի, Գինսի Ջ. Նիլսոն, Գեյլ Թեյթ Ռաֆերթի

Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Կ. Սեջվիկ

Բաշխման տնօրեն. Սթեֆեն Ռ. Քրիսչենսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար այցելեք store.lds.orgstore.lds.org կամ դիմեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոն կամ ծխի/ճյուղի ղեկավարին:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona*, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլգարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորեերեն, հաիթերեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամոերեն, սինհալա, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբերվում է ըստ լեզուների:)

© 2014 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և տեսողական նյութերը կարո են բազմացվել եկեղեցում կամ տանը առանձին, ոչ-առևտրային օգտագործման նպատակով: Տեսողական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սեփականության հատուկ նշում է արված: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada: April 2014 Vol. 15 No. 1. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 707.4.12.5). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

Մտքեր ընտանեկան երեկոյի համար

Այս համարը պարունակում է հոդվածներ և միջոցառումներ, որոնք կարող են օգտագործվել ընտանեկան երեկոյի համար: Ահա երկու օրինակ:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՂԵՑԿՈՒ ՍԹՈՔԵՐԻ

«Յոթ օր մինչև Զատիկը», էջ 10, և **«Հատուկ Վկաները վկայում են կենդանի Քրիստոսի մասին»,** էջ 16. Գուցե կցանկանաք օգտագործել այս հոդվածներում զետեղված նյութերը ձեր ընտանիքի հետ ամենօրյա հոգևոր ժամ անցկացնելու համար Զատկին նախորդող շաբաթվա ընթացքում: Սկսելով Զատկին նախորդող կիրակի օրից կարդացեք Առաջին Նախագահության ուղերձները՝ էջ 17 և հետևեք «Յոթ օր մինչև Զատիկը» հրահանգներին: Այնուհետև ամեն օր կարդացեք երկու Առաքյալների վկայությունները և օգտագործեք սուրբ գրությունները, երգերը և «Յոթ օր մինչև Զատիկը» միջոցառման ուղերձով կիսվեք ձեր ընտանիքի հետ: Զատկի կիրակի օրը , դուք կարող եք դիտել Աստվածաշնչի մասին տեսանյութը «Նա հարություն է առել», որը կարելի է գտնել՝ lds.org/bible-videos ում (մատչելի է մի քանի լեզուներով):

«Դա շատ հեշտ է, պապիկ»՝ էջ 67. Այս հոդվածը կարդալուց հետո, գուցե դուք ևս ցանկություն ունենաք հանել ձեր վայրկենաչափը: Կարող եք ընտանիքով կարդալ Մորմոնի Գրքից մեկ էջ և չափել ժամանակը, որպեսզի տեսնեք, թե որքան է դա տևում: Ունենալով այդ ժամանակը կարող եք հաշվել, թե Մորմոնի Գիրքը կարդալու համար ձեր ընտանիքից որքան ժամանակ կպահանջվի: Դուք կարող եք նպատակ դնել միասին կարդալ Մորմոնի Գիրքը: Գրաֆիկ ստեղծելը, ինչպես օրինակ ամեն օր սահմանված ժամին կարդալը, կարող է օգնել ձեզ հասնել ձեր նպատակին:

ՁԵՐ ԼԵԶՎՈՎ

Լիահոնան և Եկեղեցու այլ նյութերը տարբեր լեզուներով մատչելի են **languages.lds.org** կայքում**:**

ԱՅՍ ՀԱՄԱՐԻ ԹԵՄԱՆԵՐԸ

Համարները ցույց են տալիս հոդվածի առաջին էջը:

Սկնածանք, *76*
Անհատական արժանավորություն, *7, 12*
Գերագույն համաժողով, *4*
Դարձ, *26, 44*
Եկեղեցու պատմություն, *26*
Զանազանել, *64*
Զատիկ, *10, 16*
Ընտանիք, *46, 50, 54, 70*
Լեզու, *3940*
Ծառայություն, *12, 36, 38, 50*
Կանայք, *46*
Համեստություն, *3940*
Հանթեր, Հովարդ Վ., *81*
Հին Կտակարան, *8*
Հիսուս Քրիստոս, *4, 7, 10, 16, 76*
Հույս, *80*
Մարգարեներ, *8, 22*
Միսիոներական աշխատանք, *26, 62*
Մոնսոն, Թոմաս Ս., *22*
Մորմոնի Գիրք, *67*
Ուխտեր, *68*
Վիշտ, *37, 39*
Վկայություն, *62*
Տաճարներ, *26, 44*
Փրկության ծրագիր, *32, 37, 39, 70*
Քահանայություն, *46, 50, 53, 54, 56, 60*
Քավություն, *7, 10, 16, 32, 76*
Օրինակ, *22*
Բարօրություն, *12, 36*

Նախագահ
Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական

ԱՄՈՒՐ ԳՑՎԱԾ խարիսխ

Ոչ շատ առաջ ես հնարավորություն ունեցա նավարկել մի մեծ նավով Ալյասկայի սքանչելի ծովածոցում, ԱՄՆ: Մինչ նավապետը պատրաստում էր նավը՝ գիշերելու մի հեռավոր կուսական ծովախորշում, նա ուշադիր զննում էր տեղանքը և հանգամանքները, ինչպես օրինակ մակընթացությունների հաջորդականությունը, ջրերի խորությունը և հեռավորությունը վտանգավոր խոչընդոտներից: Երբ բավարարվեց, նա խարիսխը գցեց, որպեսզի նավը ամուր և ապահով խարսխված մնար, ուղևորներին հնարավորություն տալով հիանալու Աստծո արարչագործությունների տեսարժան գեղեցկությամբ:

Երբ նայում էի ծովածոցի եզրագծին, ես սկսեցի հասկանալ, որ նավը գրեթե աննկատելիորեն շարժվում էր ամենաթեթև չափի քամուց և ստորջրյա հոսանքից: Այնուամենայնիվ, նավը մնում էր ամուր և կայուն՝ մի հաստատուն շրջագծի ներսում, որը պայմանավորված էր խարսխի գծի լայնությամբ և խարսխի ուժով:

Նավապետը խարիսխը չէր պահել նավի վրա, պատրաստ դրված՝ իջեցնելու միայն այն ժամանակ, երբ որ փոթորիկ սկսվեր: Ոչ, նա խարսխել էր նավը որպես կանխարգելիչ միջոց և պահպանել նավը դեպի անապահով ջրեր շարժվելուց կամ դանդաղորեն քշվելուց դեպի ծանծաղուտ, մինչ ուղևորներն ու անձնակազմը ապահով էին զգում:

Երբ ես խորհրդածում էի այս տեսարանի շուրջ, գլխումս մի միտք ծագեց, որ եթե սա առիթ չէ այլաբանության համար, ապա ես երբեք ինքնաթիռ չեմ վարել:

Ինչո՞ւ են մեզ պետք խարիսխներ

Խարսխի նպատակը նավն ապահով և անվտանգ պահելն է ցանկացած տեղանքում կամ օգնելը վերահսկելու նավը վատ եղանակի ժամանակ: Սակայն այս կենսական նպատակներն իրականացնելու համար, ուղղակի խարիսխ ունենալը բավական չէ: Խարիսխը պետք է լինի ամուր, հուսալի և ինչպես հարկն է օգտագործվի ճիշտ ժամանակին և ճիշտ վայրում:

Անհատներն ու ընտանիքները ևս խարիսխների կարիք ունեն:

Ձախորդությունները կարող են գալ որպես մեծ փոթորիկ՝ մեզ դուրս շպրտելու ուղուց և սպառնան զարկել մեզ ժայռերին: Բայց երբեմն մենք վտանգի մեջ ենք լինում նաև, երբ ամեն ինչ թվում է ապահով՝ քամին մեղմ և ջրերը հանդարտ: Փաստորեն, մենք կարող ենք լինել մեծագույն վտանգի մեջ, երբ մենք դանդաղորեն քշվում ենք դեպի ծանծաղուտ և շարժումն այնքան թեթևակի է, որ մենք հազիվ ենք զգում այն:

Ավետարանը մեր խարիսխն է

Խարիսխները պետք է լինեն ամուր, ուժեղ և լավ պահպանված՝ անհրաժեշտության դեպքում կիրառելու պատրաստ: Բացի այդ, դրանք պետք է կցված լինեն մի հիմքի, որը կարողանա կրել հակադիր ուժերի ծանրությունը:

Իհարկե, Հիսուս Քրիստոսի ավետարանը այդպիսի խարիսխ է: Այն պատրաստվել է տիեզերքի Արարչի կողմից՝ աստվածային նպատակով և նախատեսված է ապահովել անվտանգություն և առաջնորդություն Իր զավակներին:

Ի վերջո, ի՞նչ է ավետարանը, Իր զավակներին փրկագնելու Աստծո ծրագրից և նրանց Իր ներկայություն ետ բերելուց բացի:

Իմանալով, որ բոլոր բաների էության մեջ կա շեղվելու միտում, մենք պետք է մեր խարիսխներն ամուր դնենք ավետարանի ճշմարտության վեմի վրա: Դրանք չպետք է թեթևակիորեն իջեցվեն հպարտության ավազների մեջ կամ հազիվ դիպչեն մեր համոզմունքների մակերեսին:

Այս ամիս մենք հնարավորություն ունենք Եկեղեցու գերագույն համաժողովում լսելու Աստծո ծառաներին: Նրանց խոսքերը, միացած սուրբ գրություններին և

Հոգու հուշումներին, ապահովում են անվտանգ և կայուն հավերժական արժեքների և սկզբունքների կայուն հիմք, որին մենք կարող են կցել մեր խարիսխները, որպեսզի անսասան և ապահով մնանք կյանքի մաքառումների և փորձությունների մեջ:

Հնում մարգարե Հելամանն ուսուցանել է. «Եվ, այժմ, իմ որդինե՛ր, հիշեք, հիշեք, որ դա մեր Քավչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը. որ, երբ դևն առաջ ուղարկի իր զորեղ քամիները, այո, իր նետերը պտտահողմում, այո, երբ նրա ողջ կարկուտը և զորեղ փոթորիկը հարվածի ձեզ, այն զորություն չի ունենա ձեր վրա՝ քաշելու ձեզ վար՝ դեպի թշվառության ու անվերջ վայի անդունդը, այն վեմի շնորհիվ, որի վրա դուք կառուցված եք, որը հաստատուն հիմք է, հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն ընկնի» (Հելաման 5.12):

Ամուր դրված խարիսխների արժեքը

Կյանքը միտում ունի ստուգելու մեր խարիսխները և գայթակղելու մեզ շեղվել: Սակայն եթե մեր խարիսխները ճիշտ են դրված մեր Քավչի վեմի մեջ, դրանք կպահեն, անկախ քամու ուժից, մակընթացության զորությունից կամ ալիքների բարձրությունից:

Իհարկե նավը նախատեսված չէ անշարժ մնալու նավահանգստում, այլ ավելի շուտ բարձրացնելու խարիսխը և նավարկելու կյանքի ծովերում: Բայց դա այլաբանություն է մեկ այլ դեպքի համար:

Այժմ ես ինձ հանգիստ եմ զգում իմանալով, որ ավետարանի խարիսխը և մեր Քավչի վեմը կպահեն մեզ կայուն և ապահով:

Այդպիսի խարիսխը կպահի մեզ դեպի վտանգը և դժբախտությունը շեղվելուց: Այն կընձեռի մեզ փառահեղ հնարավորություն՝ վայելելու անընդհատ փոփոխվող և կյանքի վսեմ տեսարանի անզուգական գեղեցկությունները:

Կյանքը գեղեցիկ է և արժե այն ապրել: Քամին, փոթորիկը և ահագնացող հոսանքները կարող են մեզ գայթակղել շեղվել դեպի տեսանելի և ոչ տեսանելի վտանգներ, բայց ավետարանի ուղերձը և դրա աստվածային ուժը կպահի մեզ դեպի ետ մեր Երկնային Հոր ապահով նավահանգիստը տանող մեր ուղու վրա:

Եկեք ուրեմն ոչ միայն *լսենք* ապրիլյան գերագույն համաժողովի ելույթները, այլ նաև *կիրառենք* նրանց ուղերձները՝ որպես ամուր զցված խարիսխ մեր ամենօրյա կյանքում:

Թող Աստված օրհնի և ուղեկցի մեզ այս նշանավոր և հիմնական ջանքում: ■

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Մտածեք քննարկել խարիսխների կարևորության մասին դեպի խոստացված երկիր Լեքիի ընտանիքի նավարկության ենթատեքստում (տես 1 Նեփի 18): Դուք կարող եք նշել 1 Նեփի 18.11–15 հատվածները, մի ժամանակ, երբ Նեփին կապված էր, Լիահոնան դադարեց աշխատել և նավը քշվում էր կատաղի հողմերից: Ի՞նչ հետևանքների ենք մենք հանդիպում, երբ մենք ապահովությամբ խարսխված չենք ավետարանին: Դուք կարող եք նաև նշել 1 Նեփի 18.21–22 հատվածները և քննարկել, թե ինչպես մենք կարող ենք ապահովություն գտնել՝ դառնալով դեպի Տերը:

ԼՈՒՍԱԼՈՒՅՍԸ՝ STOCKTREK IMAGES/THINKSTOCK

Ես և համաժողովը

Սառա Դիքս

Ես սովորաբար մտածում էի, որ գերագույն համաժողովի շաբաթավերջը երկար էր և ձանձրալի, բայց ժամանակի հետ ես սկսեցի սիրել և անհամբեր սպասել դրան: Գերագույն համաժողովի շաբաթավերջը կարող է հոգեպես լիցքավորող լինել, բայց հեշտ է թույլ տալ, որ այս զգացումները թոշնեն, երբ նորմալ կյանքը շարունակվում է երկուշաբթի օրը: Հետևյալ գաղափարներից մի քանիսն օգնել են ինձ ստանալ որքան հնարավոր է շատ բան համաժողովից:

Ես պատրաստում եմ ինձ համաժողովի համար՝ գրի առնելով հարցեր, և ապա նշումներ անում, երբ իմ հարցերը պատասխանվում են: Այնուհետև ես սիրում եմ ներբեռնել գերագույն համաժողովի ելույթներն ու երաժշտությունը LDS.org ից և դնում դրանք MP3 նվագարկչի վրա, որպեսզի կարողանամ լսել ելույթը կամ օրհներգը, երբ ես իմ ամենօրյա գործերով եմ զբաղվում: Ես նաև սիրում եմ ուսումնասիրել *Լիահոնայի* համաժողովին նվիրված համարը: Ես նշումներ և գրառումներ եմ անում իմ անձնական օրինակի լուսանցքներում: Մինչև մյուս համաժողովի մոտենալը, իմ ամսագիրը լավ օգտագործված է լինում: Երբեմն ընտանիքով միասին ուսումնասիրում ենք ուղերձները ընտանեկան երեկոյի ժամանակ:

Պահելով հոգին, որը մենք զգացել ենք համաժողովի ընթացքում մեզ հետ և շարունակելով սովորել ուղերձներից, աշխատանք է պահանջում, բայց այս անելը մեծ օրհնություն է եղել ինձ համար: Ես այնքան շատ ուժ եմ ստացել և առաջնորդություն կարիքի ժամանակ՝ ուսումնասիրելով գերագույն համաժողովի ուղերձները, և ես գիտեմ, որ այս ուղերձները ոգեշնչված են:

Հեղինակն ապրում է Տրոնտոյում, Կանադա:

Դրեք ձեր խարիսխը

Ի՞նչը ձեզ կպահի խարսխված ավետարանին: Գծեք մի գիծ տղայի ձեռքում գտնվող պարանից մինչև այն իրերը, որոնք, ըստ Նախագահ Ուխդորֆի, ապահով վայրեր են ձեր խարիսխը դնելու համար:

ՀԱՅԵՐԵՆ ԼՈՒՍԱՆԱՎԱՐՍՔԱՐԴՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐԵՆՔՏԵ ԹԵՍԵՑԻ, ՆԱՎԱՐՍՔԱՐԴՈՒՄՆԵՐԸ՝ ՔԵԹԻ ՍԱՔՈՒՐ

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և ձգտեք հասկանալ, թե ինչով կիսվել: Ինչպե՞ս կարող է Փրկչի կյանքի ու առաքելության մասին հասկացողությունը մեծացնել ձեր հավատքը Նրա նկատմամբ և օրհնել նրանց, ում մասին հոգ եք տանում այցելությամբ ուսուցանման միջոցով: Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք reliefsociety.lds.org:

Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելությունը՝ Փրկիչ և Քավիչ

Սա Այցելող Ուսուցիչների Ուղերձների այն շարքից է, որը նվիրված է Փրկչի առաքելության տարբեր ոլորտներին:

«Հիսուս Քրիստոսին տրված ամենակարևոր կոչումների շարքում Քավիչն է,- ասել է Երեց Դ. Թոդ Քրիսթոֆերսոնը Տասներկու Առաքյալների Քվորումից,- *Փրկագնել* նշանակում է վճարել պարտավորությունը կամ պարտքը: *Փրկագնել* կարող է նաև նշանակել ազատել կամ ազատ արձակել փրկագին վճարելու միջոցով: . . . Այս իմաստներից յուրաքանչյուրը ներկայացնում է Մեծ Փրկագնման տարբեր կողմերը, որոնք իրականացրել է Հիսուս Քրիստոսն Իր Քավության միջոցով, որը ներառում է՝ բառարանի բառերով «ազատել մեղքից և դրա տույժերից, որպես մեղավորի համար արված զոհաբերություն»:[1]

Լինդա Ք. Բըրթոնը, Սփոփող Միության գերագույն նախագահը, ասել է. «Երկնային Հայրը . . . ուղարկեց Իր Միածին և կատարյալ Որդուն տառապելու մեր մեղքերի, մեր վշտերի և այն ամենի համար, ինչն անարդար է թվում մեր իսկ անձնական կյանքում:

. . . Մի կին, որը եղել էր տարիներ շարունակ փորձության և վշտի մեջ,

ասել է իր արցունքների միջից. «Ես հասկացա, որ նման եմ մի հին 20 դոլարանոցի՝ ճմրթված, պատռված, կեղտոտ, գործածված և բծոտված: Բայց . . . ես դեռ արժեմ լրիվ 20 դոլար»: Այս կինը գիտի որ նա . . . բավականաչափ արժեր [Աստծո] համար, որպեսզի Նա ուղարկեր Իր Որդուն քավելու անհատապես նրա համար: Եկեղեցում յուրաքանչյուր քույր պետք է իմանա այն, ինչ այս կինը գիտի»:[2]

Սուրբ գրություններից

2 Նեփի 2.6, Հելաման 5.11–12, Մոսիա 1.39

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Փրկագնում», *Լիահոնա,* մայիս 2013, 109:
2. Լինդա Կ. Բըրթըն, «Արդյոք Հիսուս Քրիստոսի Քավության հանդեպ հավատքը գրվա՞ծ է մեր սրտերում», *Լիահոնա,* նոյ. 2012, 114:

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ինչպե՞ս կարող ենք մենք երախտագիտություն ցույց տալ Փրկիչ և Քավիչ՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ:
2. Ինչպե՞ս կարող ենք մենք ճաշակել Փրկչի քավող զոհաբերության օրհնություններից մեր կյանքում:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Մեր պատմությունից

Նոր Կտակարանը ներառում է պատմություններ մի կնոջ մասին, ով հավատք գործադրեց Հիսուս Քրիստոսի հանդեպ, սովորեց և ապրեց Նրա ուսմունքներով և վկայեց Նրա ծառայության, հրաշքների և վեհափառության մասին:

Հիսուսն ասաց կնոջը ջրհորի մոտ.

«Ամեն այդ ջրիցը խմողը դարձեալ կծարաւի. Բայց ով որ խմէ այն ջրիցը, որ ես կտամ նորան, նա յաւիտեան չի ծարաւիլ: Այլ այն ջուրը, որ ես կտամ նորան, աղբիւր կլինի նորանում, որ յաւիտենական կեանքի համար կբղխէ:

Կինը նորան ասեց. Տէր, տուր ինձ այն ջուրը, որ չծարաւիմ. Եւ չգամ այստեղ ջուր հանելու: . . .

Գիտեմ, որ Մեսիան պիտի գայ, որ Քրիստոսն է, երբոր նա կգայ, ամեն բան կպատմէ մեզ:

Ես եմ, որ քեզ հետ խօսում եմ»:

Նա «էլ իր կուժը թողեց» և վկայություն բերեց Նրա մասին քաղաքում: (Տես Հովհաննես Դ.6–30:)

ՄՈՎՍԵՍ

«Այնքան մեծ էր Մովսեսը, որ նույնիսկ Քրիստոսը նկարագրվում է որպես Իսրայելի զորքերի հնադարյան առաջնորդի նման Մարգարե»:[1]— Տասներկու Առաքյալների Քվորումից՝ Երեց Բրյուս Ռ. Մակ-Քոնկի (1915–85)

Ես ծնվել եմ Եգիպտոսում այն ժամանակ, երբ իմ ժողովուրդը՝ Իսրայելացիները, գերության մեջ էին: Վախենալով Իսրայելացի ստրուկների աճող թվերից, Փարավոնը հրամայեց, որ բոլոր արու Իսրայելացիներին ծննդյան ժամանակ սպանեն: Ինձ պահպանելու համար մայրս իմ ծննդից հետո երեք ամիս թաքցրեց ինձ, նախքան զամբյուղի մեջ կդներ Նեղոսի եղեգնուտում: Փարավոնի դուստրը հայտնաբերեց ինձ և մեծացրեց որպես իր որդի:[2]

Երբ ես մեծացա, հեռացա Եգիպտոսից և ապրեցի Մադիամի երկրում: Այնտեղ ես շնորհ գտա Հոթորի՝ մի հովվի և քահանայի մոտ և ամուսնացա նրա դստեր՝ Սեպփորայի հետ: Հոթորից ես ստացա Մելքիսեդեկյան Քահանայություն:[3]

Մի օր, երբ ես արածեցնում էի Հոթորի հոտը, Տերը հայտնվեց ինձ այրվող մորենու միջից և կանչեց ինձ ազատելու Իսրայելի զավակներին ստրկությունից:[4]

Ես վերադարձա Եգիպտոս և ասացի Փարավոնին, որ ազատ արձակի Տիրոջ ժողովրդին, բայց նա ընդհակառակը շատացրեց նրանց բեռները: Տերը մի քանի պատուհասներ ուղարկեց Եգիպտացիների վրա, բայց Փարավոնը կարծրացրեց իր սիրտը և շարունակեց մերժել ազատել Իսրայելացիներին: Վերջին պատուհասը կործանիչ հրեշտակն էր, որը սպանեց Եգիպտոսի ամեն մի ընտանիքի անդրանիկ որդուն: Իսրայելացիները պաշտպանվեցին կործանիչ հրեշտակից՝ քսելով անբիծ գառի արյունը իրենց դռան դրանդիներին և մնալով տանը: Իմ միջոցով Տերը հաստատեց Զատկի տոնը որպես մի արարողություն՝ օգնելու Իսրայելացիներին ամեն տարի հիշել այս հրաշքը:[5]

Վերջին պատուհասը փափկացրեց Փարավոնի սիրտը, և նա ազատ արձակեց Իսրայելացիներին: Բայց Փարավոնը հետագայում կարծրացրեց իր սիրտը և ուղարկեց իր զորքերը հեռացող Իսրայելացիների ետևից: Տերն ինձ օրհնեց զորությամբ, ոպեսզի բաժանեմ Կարմիր ծովը, և մենք փախանք չոր գետնի վրայով, մինչ ծովը հեղեղեց Փարավոնի բանակը:[6]

Այնուհետև Տերն առաջնորդեց

ՄՈՎՍԵՍԸ ԵՂԵԳՆՈՒՏՈՒՄ © PROVIDENCE COLLECTION; ՄՈՎՍԵՍԸ ԲԱԺԱՆՈՒՄ Է ԿԱՐՄԻՐ ԾՈՎԸ, ՌՈԲԵՐՏ Թ. ԲԱՐԵՏԻ, ՄՈՎՍԵՍԸ ԵՎ ՔԱՐԵ ՏԱԽՏԱԿՆԵՐԸ, ՋԵՐԻ ՀԱՐՍԹՈՆԻ, ՄՈՎՍԵՍԸ ՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ Է ԿԱՆՉՈՒՄ ԱՀԱՐՈՆԻՆ, ՀԱՐԻ ԱՆԴԵՐՍՈՆԻ, ՄՈՎՍԵՍԸ ԵՎ ԱՐՈՒՅՐԵ ՕՁԸ, ՋՈՒԴԻԹ Ա.ՄԵՀՐԻ

մեզ անապատով ցերեկը ամպի միջից, իսկ գիշերը՝ կրակի սյունի: Նա ապահովեց մեզ ջրով, մանանայով և լորով:[7]

Ես բարձրացա Սինայ սարը, որտեղ ես մնացի 40 օր և ստացա Տասը Պատվիրանները Տիրոջից: Երբ ես վերադարձա սարից, Իսրայելացիները հեռացել էին Աստծուց և սարքել մի ոսկե հորթ՝ երկրպագելու համար: Նրանք այլևս արժանի չէին ստանալու Աստծո օրենքը, որ Նա տվել էր ինձ, այնպես որ ես կոտրեցի քարե տախտակները, որոնք պարունակում էին այն: Ես վերադարձա սար, որտեղ Տերը տվեց ինձ ավելի ցածր օրենքը, որը կոչվում է իմ անունով՝ Մովսեսի օրենք:[8]

Անապատում Տերը հայտնեց ինձ խորան՝ կամ շարժական տաճար կառուցելու նախագիծը: Մենք տանում էինք խորանը մեզ հետ, մեր ճանապարհորդությունների ընթացքում, որպեսզի կարողանայինք երկրպագել դրա մեջ: Խորանում մարդիկ ստանում էին արարողություններ և ես խոսում էի Տիրոջ հետ «դեմ առ դեմ, ինչպես մի մարդ իր բարեկամի հետ կխոսե»:[9] Տերը նաև ցույց տվեց ինձ, թե ինչպես պետք է սարքեի ուխտի տապանակը, մի սուրբ մասունք, որը դրված էր խորանի ամենասրբազան մասում, Սրբության Սրբոցում:[10]

Երբ Տերն ուղարկեց «կիզող օձեր» Իսրայելացիներին պատժելու համար, ինձ պատվիրվեց մի արույրե օձ պատրաստել և բարձրացնել վերևում ձողի վրա, որպեսզի բոլոր նրանք, ովքեր խայթվել էին օձերի կողմից, նայեին դրան և բժշկվեին: Բայց իրենց հպարտության և հանձնարարության պարզության պատճառով, շատերը չկամեցան նայել և այդ պատճառով մահացան:[11]

Տերը ստիպեց Իսրայելացիներին թափառել անապատում 40 տարի, նախքան թույլ կտար մտնել խոստացված երկիր:[12] Ես չմտա, այլ «վերցվեցի Հոգու կողմից» Տիրոջ մոտ:[13] ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Bruce R. McConkie, *Mormon Doctrine,* 2nd ed. (1966), 515; տես նաև Երկրորդ Օրինաց ԺԸ.15–19:
2. Տես Ելից Ա, Բ.1–10:
3. Տես Ելից Բ.11–22, Վարդապետություն և Ուխտեր 84.6:
4. Տես Ելից Գ, Դ.1–17:
5. Տես Ելից Ե–ԺԲ, Եզեկիել ԽԵ.21:
6. Տես Ելից ԺԴ:
7. Տես Ելից ԺԳ.21–22, ԺԵ.22–27, ԺԶ, ԺԷ.1–7:
8. Տես Ելից ԻԴ.18, ԼԱ.18, ԼԲ, ԼԴ:
9. Ելից ԼԳ.11:
10. Տես Ելից ԻԵ–ԻԹ, Խ.21:
11. Տես Թվոց ԻԱ.6–9, 1 Նեփի 17.41, Ալմա 33.19–20:
12. Տես Թվոց ԺԴ.33–34:
13. Ալմա 45.19:

ՓԱՍՏ ԱՐԿՂ. ՄՈՎՍԵՍ

Մովսեսի գրվածքները. Բացի Թանկագին Մարգարիտում Մովսեսի Գրքից, Մովսեսը հեղինակել է Աստվածաշնչի առաջին հինգ գրքերը՝ Ծննդոց, Ելից, Ղեւտացոց, Թվոց և Երկրորդ Օրինաց:

Նախամահկանացու դերը. ընտրվեց նախագահելու մի տնտեսության վրա (տես Աբրահամ 3.22–23)

Մահկանացու դերեր. Եգիպտոսից դուրս է առաջնորդում Իսրայելացիներին, ստանում օրենքը Սինայ լեռան վրա (տես Ելից ԺԲ, Ի)

Հետմահկանացու դերեր. հայտնվեց Փոխակերպության սարի վրա, տալով քահանայության բանալիներ Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին (տես Սուրբ Գրությունների Ուղեցույց, «Փոխակերպում», scriptures.lds.org), հայտնվեց Կիրթլենդի տաճարում Օհայո, ԱՄՆ, ապրիլի 3, 1836թ., Իսրայելի հավաքման բանալիները հանձնելով Ջոզեֆ Սմիթին (տես ՎԵՈՒ 110.11)



ՅՈԹ ՕՐ ՄԻՆՉԵՎ ԶԱՏԻԿԸ

Դուք և ձեր ընտանիքը կարող են սովորել այն մասին, թե ինչ արեց Հիսուսը, երբ Նա ապրում էր երկրի վրա: Սկսեք Զատկին նախորդող կիրակի օրից: Ամեն օր կարդացեք սուրբ գրությունը, կատարեք միջոցառումը, կամ երգեք երգը (կամ որևէ այլ երգ այդ թեմայի վերաբերյալ): Ապա կտրեք հանեք Հիսուսի նկարը և սոսնձեք մի դատարկ վանդակի մեջ, որը համընկնում է տվյալ սուրբ գրության պատմությանը: Երբ բոլոր վանդակները լրացվեն, Զատիկն այստեղ կլինի: ■

Օր 1

Երկնային Հայրն ուղարկեց Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, ծնվելու երկրի վրա:

- Ղուկ. Բ.4-7
- «Նա ուղարկեց Իր Որդուն» (*Երեխաների Երգարան*, 34):

Օր 2

Հիսուսը մանկիկ էր մի ժամանակ: Մենք կարող ենք Նրան նմանվել՝ բարի և գթասիրտ լինելով:

- Ղուկ. Բ.40, 52
- «Երբ Հիսուսը մանկիկ էր փոքրիկ» (*Երեխաների Երգարան*, 55):

Օր 3

Հիսուսը պահում էր Երկնային Հոր բոլոր պատվիրանները, ներառյալ մկրտվելու պատվիրանը:

- Մատթեոս Գ.13–17
- «Երբ Հիսուս Քրիստոսը մկրտվեց» (*Երեխաների Երգարան* 102)

Օր 4

Հիսուսը կատարեց բազմաթիվ հրաշքներ, ինչպես օրինակ բժշկելով մարդկանց, ովքեր հիվանդ էին, օգնելով կույր մարդկանց կրկին տեսնել և դադարեցնելով փոթորիկը:

- Մարկոս Դ.36-39
- «Պատմեք ինձ Հիսուսի պատմությունները» (*Երեխաների Երգարան*, 57):

ՆԿԱՐՆԵՐԸ՝ Բեթ Ս. Վոթքերի

օր 5 Վերջին ընթրիքին Հիսուսը խնդրեց Իր աշակերտներին ճաշակել հաղորդությունից որպես Իրեն հիշելու մի ձև: Ամեն շաբաթ ընդունելով հաղորդությունը, մենք ևս կարող ենք հիշել Փրկչին:

- Ղուկաս ԻԲ.19-20
- Խոսեք ձեր ծնողների հետ, թե ինչ կարող եք անել, որը կօգնի ձեզ մտածել Հիսուսի մասին հաղորդության ընթացքում այս կիրակի:

օր 6 Քանի որ Երկնային Հայրն ու Հիսուսը սիրում են մեզ, Հիսուսը եկավ երկիր տառապելու մեր մեղքերի համար, որպեսզի մենք կարողանանք ներվել և վերադառնալ Երկնային Հոր մոտ:

- Ղուկաս ԻԲ.41–44
- Ի՞նչ կարող ենք անել այսօր՝ ցույց տալու Հիսուսին, որ դուք երախտապարտ եք Նրա զոհաբերության համար:

օր 7 Երեք օր գերեզմանում լինելուց հետո, Հիսուսը հարություն առավ: Քանի որ Նա հարություն է առել, մենք էլ կարող ենք հարություն առնել:

- Հովհաննես Ի.15–17
- Ղուկաս 24.36-40
- «Մի՞թե կրկին Հիսուսն ապրեց» (*Երեխաների Երգարան*, 64)

Դուք կարող եք լսել երգերն այս միջոցառման ժամանակ lds.org/music

ՄԵՆՔ

Տիրոջ ձեռքերն ենք

Հայտնաբերել աղքատին և ծառայել նրանց, ովքեր տառապում են, պարտադիր քայլեր են Հիսուս Քրիստոսի հետևորդ լինելու համար:

Նիլ Ք. Նյուել
Բարօրության Ծառայություններ

Անցած ճգնաժամի սկզբներին վեց ցցի նախագահներ Սոլթ Լեյքի հովտից միմյանց միացան պայքարելու աղքատության և սովի մթագնող ամպերի դեմ, որոնք սպառնում էին պարուրել այնքան շատ Եկեղեցու անդամների:[1] Չնայած տնտեսական ճգնաժամը ազդել էր մարդկանց վրա ամենուրեք, Յուտան առանձնապես էր ամայացել:[2]

Այդ ժամանակ Եկեղեցու ղեկավարները քիչ ռեսուրսներ ունեին օգնելու կարիքի մեջ գտնվողներին: Նրանք կարող էին օգտագործել ծոմի զոհաբերությունները իհարկե, բայց խրոնիկական կարիքը անցում էր ամեն բան, որը նրանք երբևէ տարել էին: Նախագահող Եպիսկոպոսության ղեկավարության ներքո 1900-ականների սկզբում հիմնադրվել էր Դեզերեթի Աշխատանքի Վարչությունը: Բայց այն համապատասխանաբար սարքավորված չէր՝ այդպիսի վիթխարի կարիքը վերացնելու համար:

Այս վեց քահանայության առաջնորդները գիտեին, որ եթե իրենց ցցերի մարդկանց պետք էր օգնել, նրանք չէին կարող սպասել: Նրանք պետք է անհապաղ գործի անցնեին: Նրանք սկսեցին մարդկանց աշխատանքի դնելով: Նրանք կազմակերպեցին մարդկանց և տարան նրանց դաշտեր, որտեղ նրանք կկարողանային բերք հավաքել: Իրենց աշխատանքի դիմաց երախտապարտ ֆերմերները առատաձեռնորեն ուտելիք էին նվիրաբերում տղամարդկանց: Ավելցուկը տարվում էր պահեստ և բաշխվում ուրիշներին, ովքեր սոված էին: Երբ նվիրատվությունները շատացան Սրբերը սկսեցին պահածոյացնել ուտելիքը՝ այն պահպանելու համար: Սա մեր օրերի բարօրության ծրագրի սկիզբն էր:

Ութ տասնամյակ անց մեր օրերի Եկեղեցու ղեկավարները ողջ աշխարհում հետևում են իրենց համայնքներին և զգում կարիքավորներին օգնության հասնելու նույն վճռականությունը:

2011 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովում Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը Առաջին Նախագահության Երկրորդ խորհրդականը, ասել է. «Շատ հաճախ մենք նկատում ենք մեր շրջապատում գտնվողների կարիքները, հուսալով, որ հեռու տեղից ինչ-որ մեկը հրաշքով կհայտնվի՝ բավարարելու այդ կարիքները: Հավանաբար, մենք սպասում ենք գիտակների՝ առանձնահատուկ գիտելիքներով լուծելու այդ հատուկ խնդիրները: Երբ մենք անում ենք դա, մենք զրկում ենք մեր հարևանին այն ծառայությունից, որը մենք կարող էինք մատուցել, իսկ մենք զրկվում ենք ծառայելու հնարավորությունից: Չնայած ոչ մի սխալ չկա գիտակների հետ կապված, եկեք անկեղծորեն գնահատենք դա, երբևէ չեն լինի նրանցից բավականաչափ մարդիկ լուծելու բոլոր խնդիրները: Փոխարենը, Տերը դրել է Իր քահանայությունը և դրա կազմակերպությունը մեր դռների մոտ ամեն ազգում, որտեղ Եկեղեցին հաստատվել է»:[3]

Եկեղեցու տեղական ղեկավարներին և անդամներին ուղղված այս կոչը՝ գործի անցնել ոգեշնչվելով Սուրբ Հոգու կողմից, շատերին է ողջ աշխարհով մեկ առաջնորդել, ինչպես Նախագահ Ուխդորֆն է ասել, «որոշել դա [ինքնուրույն]»:[4] Նրանք ծալել են իրենց թևքերը և վճռել «բոլոր բաներում հիշել աղքատներին

և կարիքավորներին, հիվանդներին ու չարչարվածներին» (ՎևՈւ 52.40)։

Էկվադոր

Երբ Եպիսկոպոս Ջոնի Մորանտեն Գվայակվիլում, Էկվադոր, նայում էր իր ծխի անդամներին, նրա սիրտը ծանրանում էր։ Խիստ շատ ընտանիքներ էին մաքառում ունենալ նույնիսկ կյանքի ամենաանհրաժեշտ բաները։ Նա ուզում էր օգնել նրանց, այսպիսով նա խորհրդակցեց ծխի ղեկավարների հետ և Տիրոջը ներկայացրեց խնդիրը։

Քանի որ աշխատանքի հնարավորությունները տարածքում սուղ էին, նա սկսեց աշխատել 11 քույրերից բաղկացած մի խմբի հետ, խրախուսելով նրանց օգտվել փոքր բիզնեսի հնարավորության առիթից։ Այս քույրերը նկատեցին, որ կար որակյալ, ցածր գնով տան մաքրման պարագաների պահանջարկ և նրանք հետաքրքրվում էին, թե ինչպես կարող էին արտադրել և վաճառել դրանք իրենց համայնքում։ Բայց ինչպես սովորեին պատրաստել այդ պարագաները։

Այդ ընթացքում Եպիսկոպոս Մորանտեն տեղեկացավ իր ծխում մի գործազուրկ քրոջ մասին, որն աշխատել էր որպես դեղագործ քիմիկոս։ Երբ 11 քույրերը խնդրեցին նրան, թե նա կարող էր օգնել, նա հաճույքով ուսուցանեց նրանց, թե ինչպես պատրաստեն անվտանգ, բարձրորակ պարագաներ։

Նրանք գրեցին բիզնես պլան, բաժանեցին համայնքում ոլորտները, որը յուրաքանչյուր քույր պետք է սպասարկեր, ընտրեցին արտադրանքները, որ պետք է արտադրեին և նախագծեցին փաթեթավորումը և պիտակները։

Մի քանի ամսից նրանք ստեղծեցին հաճախորդների բազա և ստանում էին բավականաչափ եկամուտներ թեթևացնելու իրենց աղքատությունը և օգնելու ապահովել իրենց ընտանիքների կարիքները։

Երբ տեղական դեղագործական ընկերության տնօրեններն իմացան այդ ձեռնարկության մասին, նրանց հետաքրքրեց գործազուրկ դեղագործ քիմիկոսը։ Նրանք ի վերջո հարցազրույց անցկացրեցին նրա հետ և նրան աշխատանքի ընդունեցին ղեկավարելու իրենց սեփական ձեռնարկությունը։

Ռուսաստան

Ռեչնոյ Ծխում Մոսկվա Ռուսաստան, Գալինա Գանչարովան, որը ծառայում էր որպես ծխի պատմաբան, սայթաքեց սառույցի վրա և կոտրեց երկու ձեռքերը։ Նրան տարան հիվանդանոց, որտեղ նրա ձեռքերը գիպսի մեջ դրեցին։ Նա չէր կարողանում ուտել կամ հագնվել։ Նա չէր կարողանում սանրել իր մազերը կամ նույնիսկ պատասխանել հեռախոսին։

Երբ նրա ծխի ընկերակից անդամներն իմացան այն մասին, թե ինչ էր պատահել, նրանք անմիջապես արձագանքեցին։ Քահանայությունը կրողները նրան օրհնություն տվեցին և աշխատեցին Սփոփող Միության քույրերի հետ՝ ստեղծելու գրաֆիկ այդ լավ քրոջը այցելելու և նրա կարիքները հոգալու համար։

Վլադիմիր Նիչիպորովը՝ ծխի միսիոներական աշխատանքի ղեկավարն ասաց. «Մենք հիշում ենք մի ելույթ, որը տրվեց գերագույն համաժողովի ժամանակ Քրիստոսի մի արձանի մասին, որը ձեռքեր չուներ։[5] Արձանի

Գալինա Գոնչարովան սայթաքելուց և իր ձեռքերը կոտրելուց հետո, նրա Սփոփող Միության քույրերը ծառայեցին որպես նրա ձեռքեր։

ներքևում ինչ որ մեկը մի ցուցանակ էր դրել, որն ասում էր. «Դուք եք իմ ձեռքերը»։ Մի քանի շաբաթ այս լավ քույրը անգործունակ էր դարձել, Ռեչնոյ Ծխի անդամները նմանություն էին գտնում այդ պատմության հետ։ Մենք տառացիորեն դարձանք նրա ձեռքերը»։

Ֆիլիպիններ

Երբ արևադարձային Վաշի փոթորիկը հարվածեց Ֆիլիպիններին 2011 թվականին, այն ողողեց տարածքը ջրի և քամու ջրհեղեղով։ Մոտ 41,000 տուն վնասվեց և ավելի քան 1,200 մարդ կորցրեցին իրենց կյանքը։

Նախքան հեղեղումը Մաքս Սաավեդրան Կագայան դե Օրո Ֆիլիպինների Ցցի նախագահը, հուշում զգաց ստեղծել ցցի շտապ օգնության թիմ։ Նա կազմակերպեց հանձնաժողովներ տարբեր

հանձնարարություններ կատարելու համար, ամեն ինչ՝ որոնումից և փրկելուց սկսած մինչև առաջին օգնություն՝ ապահովելով սննդով, ջրով և հագուստով:

Երբ հեղեղաջրերն իջան անվտանգ մակարդակի, եկեղեցու ղեկավարներն ու անդամները հավաքվեցին: Նրանք պատասխանատու էին յուրաքանչյուր անդամի համար և հաշվեցին վնասը: Մի անդամ բերեց ռետինե լաստանավեր՝ ծանծաղուտի մեջ խրված անդամներին ապահով վայր հասցնելու համար: Ժողովատները բաց էին ապաստան ապահովելու բոլոր նրանց, ովքեր ուտելիքի, հագուստի, վերմակների և ժամանակավոր կացարանի կարիք ունեին: Մաքուր ջուրը ծայրահեղ պահանջ էր, այսպիսով Նախագահ Սաավեդրան կապվեց մի տեղական գործարարի հետ, որն ուներ հակահրդեհային մեքենա և նրանք մաքուր ջուր մատակարարեցին ժողովատան տարհանման կենտրոններին: Մասնագիտացված բժշկական փորձառությամբ անդամները, արձագանքեցին նրանց, ովքեր վնասվել էին:

Քանի որ Եկեղեցու անդամները պատասխանատու էին, Նախագահ Սաավեդրան և նրա թիմը այցելեցին քաղաքի մյուս տարհանման կենտրոններ և առաջարկեցին օգնել: Նրանք ուտելիք և այլ պարագաներ բերեցին նրանց համար: Անդամներից շատերը, չնայած նրանք կորցրել էին իրենց սեփական տները, փոթորիկից հետո անձնազոհաբար ծառայում էին մյուսներին: Երբ անձրևները դադարեցին և գետինը չորացավ, Մորմոնական Օգնող Ձեռքերը՝ երեք ցցերից կամավորներ, գնացին աշխատելու, բաժանելով պարագաներ, ինչպես նաև օգնելով մաքրման աշխատանքներին:

Բրազիլիա

Մեթե Լագաս քաղաքում, Բրազիլիա, կա հաշմանդամ կանանց համար ապաստան, որոնց կյանքն աղճատվել է թմրադեղերի չարաշահումից: Ամեն օր նրանք մաքառում են գոյատևելու համար: Նրանք մի փոքրիկ ջեռոց ունեին, որն օգտագործում էին արտադրելու օրեկան 30 հաց: Չնայած կանայք որոշ օգնություն էին ստացել տեղի մարդասիրական ընկերությունից, նրանց հազիվ էին հարողանում իրենց կերակրել: Երբ Եկեղեցու Մեթե Լագաս Ցցի ղեկավարներն իմացան այս կանանց կարիքների մասին, նրանք կամեցան օգնել:

Նրանք խոսեցին կանանց հետ նրանց կարիքների մասին: Կանայք ասացին, որ եթե իրենք կարողանային թխել ավելի շատ հաց, նրանք ոչ միայն ավելի լավ կկերակրեին իրենց, այլ գուցե կարողանային մի քանի հաց վաճառել և վաստակել որոշ խիստ անհրաժեշտ եկամուտ:

Եկեղեցու ղեկավարները և անդամները աշխատեցին տեղի ռազմական ոստիկանության և տեղի դպրոցի հետ՝ բարելավելու այս կանանց պայմանները: Եկեղեցու մարդասիրական դրամաշնորհի և Եկեղեցու կամավորների ու համայնքի օգնությամբ, նրանք կարողացան ստեղծել մի նոր հացի փուռ, այնպիսին, որը թույլ տվեց կանանց օրական արտադրել 300 բոքոն:

Իրենց ստացած շահույթից փոքր կանայք կարողացան վարձել իրենց առաջին աշխատողին՝ ապաստանի կանանցից մեկին:

Բարության աշխատանքը

Տասնամյակներ առաջ Եկեղեցու ոգեշնչված առաջնորդների նման, ովքեր տեսան մեծ կարիք իրենց շրջապատում և հրաժարվեցին անտեսել այն, Եկեղեցու առաջնորդներն ու անդամները ողջ աշխարհում այսօր անում են նույնը իրենց սեփական տարածքներում և իրենց իսկ ձևով:

Երբ Նախագահ Ուխդորֆը խոսեց Եկեղեցու համար՝ մյուսներին հոգ տանելու մասին, նա ասաց. «Տիրոջ ուղին առվի կողքին նստելն ու սպասելը չէ, որ ջուրն անցնի նախքան մեր անցնելը: Դա միաբանվելն է, թևքերը քշտելը, աշխատելու գնալը և կամուրջ կամ նավակ կառուցելը մեր մարտահրավերների ջրերն անցնելու համար»:[6]

Փնտրելով աղքատներին և ծառայելով նրանց, ովքեր տառապում են, անխուսափելի մասն է նրա, ինչ նշանակում է լինել Քրիստոսի հետևորդ: Դա այն աշխատանքն է, որ Հիսուս Քրիստոսն Ինքն է արել, երբ Նա ծառայեց Իր օրերի մարդկանց: «Տիրոջ ուղով ապահովելու Տիրոջ այս աշխատանքը պարզապես ևս մեկ կետ չէ Եկեղեցու ծրագրերի քարտարանում», եզրակացնում է Նախագահ Ուխդորֆը: «Դա չի կարող անտեսվել կամ մի կողմ դրվել: Դա առանցքային է մեր վարդապետությունում, դա մեր կրոնի էությունն է»:[7] ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Այս ցցի նախագահներից չորսը՝ —Հյու Բ. Բրաունը, Հարոլդ Բ. Լին, Հենրի Դ. Մոյլը, և Մարիոն Գ. Ռոմնին— հետագայում կանչվեցին որպես Առաքյալներ, բոլոր չորսը հետագայում ծառայեցին Եկեղեցու Առաջին Նախագահությունում: Հարոլդ Բ. Լին դարձավ Եկեղեցու11 րդ Նախագահը:
2. 1930 թվականին Յուտան ուներ երկրորդ ամենաբարձր գործազրկության մակարդակը Միացյալ Նահանգներում: Տես Գարթ Լ. Մանգում և Բրյուս Դ. Բլումել, *Աղքատության դեմ Մորմոնների պատերազմը. ՎՕՍ Բարօրության մի Պատմություն 1830–1990* (1993), 95:
3. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Տիրոջ ուղով ապահովելը», *Լիահոնա,* նոյ. 2011, 54:
4. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Տիրոջ ուղով ապահովելը», 55:
5. Տես Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Դուք Իմ Ձեռքերն եք», *Լիահոնա,* մայիս 2010, 68:
6. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Տիրոջ ուղով ապահովելը», 55:
7. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Տիրոջ ուղով ապահովելը», 55–56:

Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամները մեր օրերի մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ են, ովքեր կանգնում են որպես «Քրիստոսի անվան հատուկ վկաներ ողջ աշխարհում» (ՎԿՈՒ 107.23)։ Որպես այդպիսիք նրանք ունեն պատասխանատվություն վկայելու Հիսուս Քրիստոսի աստվածայնության և Նրա առաքելության մասին՝ որպես աշխարհի Փրկիչ և Քավիչ։

Մեջբերումներում, որոնք հետևում են, այս ընտրված և ուղարկված մարդիկ կիսվում են Փրկչի Քավության, Հարության և կենդանի իրականության մասին իրենց վկայություններով։

Հատուկ Վկաները վկայում են Կենդանի Քրիստոսի մասին

Հիսուսը մեր Քավիչն է

Իմ ողջ սրտով և հոգուս ողջ կորովով ես բարձրացնում եմ իմ վկայության ձայնը՝ որպես հատուկ վկա և հայտարարում եմ, որ Աստված ապրում է: Հիսուսը Նրա Որդին է, մարմնի մեջ Հոր Միածինը: Նա մեր Քավիչն է, Նա մեր և Հոր միջև մեր Միջնորդն է: Նա էր, որ մահացավ խաչի վրա մեր մեղքերը քավելու համար: Նա դարձավ Հարության առաջին պտուղը: Որովհետև Նա մահացավ, մենք կրկին կապրենք»: «Այնպես ցնծում է իմ հոգին, Գիտեմ ապրում է Փրկիչն իմ»: [«Գիտեմ ապրում է Փրկիչն իմ», *Հիմներ և մանկական երգեր*, էջ 38]:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն, «Գիտեմ ապրում է Փրկիչն իմ» *Լիահոնա*, մայիս 2007, 25:

Ես վկա եմ

«Ես Տիրոջ Հարության վկան եմ, այնպես անկասկած կարծես ես եղել եմ այնտեղ, այն երեկո երկու աշակերտների հետ՝ Էմմաուսի ճանապարհի վրայի տանը: Ես նույնքան անկասկած գիտեմ, որ Նա ապրում է, ինչպես Ջոզեֆ Սմիթը, երբ Նա տեսավ Հորը և Որդուն պայծառ առավոտվա լույսի մեջ Պալմիրայի ծառերի պուրակում: . . .

. . . Այսպես եմ ես վկայում որպես հարյալ Փրկչի և մեր Քավչի վկա»:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ, Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, «Եկեք ինձ մոտ», *Լիահոնա*, մայիս 2013, 25:

Քավությունը և Փրկությունը

«Հայր Աստվածը ավետարանի հեղինակն է, դա Աստծո փրկության ծրագրի կամ փրկագնման ծրագրի կարևոր մասն է: Այն կոչվում է Հիսուս Քրիստոսի ավետարան, որովհետև Հիսուս Քրիստոսի Քավությունն է, որ հնարավոր է դարձնում փրկագնումն ու փրկությունը: Քավության միջոցով բոլոր տղամարդիկ, կանայք և երեխաները անվերապահորեն փրկագնվում են ֆիզիկական մահից և բոլորը կփրկագնվեն իրենց սեփական մեղքերից Հիսուս Քրիստոսի ավետարանն ընդունելու և հնազանդվելու պայմանով. . . :

Այս մասին ես վկայություն եմ բերում իմ ողջ սրտով և մտքով»:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ, Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական, «Մի՞թե չունենք պատճառ հրճվելու» *Լիահոնա*, նոյ. 2007, 19, 21:

ՍՈՒՔՆՈՐԴԻՐ, ԲԱՐԻ ԼՈՒՅՍ, ԱԱՅՍՈՒ ՊՅՈՒՐԻ © ALTUS FINE ART; ԵՏԻՆ ՊԱՆԸ ԷՐԻԿ ՋՈՆՍՈՆԻ

Հիսուսը Քրիստոսն է

«Ես գիտեմ, որ Աստված մեր Հայրն է: Նա ներկայացրեց Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին Ջոզեֆ Սմիթին: Ես հայտարարում եմ ձեզ, որ ես գիտեմ, որ Հիսուսը Քրիստոսն է: Ես գիտեմ, որ Նա ապրում է: Նա ծնվել է ժամանակների գագաթնակետին: Նա ուսուցանեց Իր ավետարանը և փորձվեց: Նա տառապեց և խաչվեց և հարություն առավ երրորդ օրը: Նա, Իր Հոր նման, ունի մսից և ոսկրից մարմին: Նա կատարել է Իր Քավությունը: Նրա մասին ես բերում եմ վկայություն: Ես Նրա վկան եմ»:

Նախագահ Բոյդ Ք. Փաքեր, Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ, «Տասներկուսը», *Լիահոնա,* մայիս 2008, 87:

Փրկագին մարդկության ընտանիքի համար

«[Հիսուս Քրիստոսը] Հոր հավերժական ծրագրի առանցքային մասն է, Փրկիչը, ով տրվեց որպես փրկագին մարդկության համար: Աստված ուղարկեց Իր Սիրելի Որդուն՝ հաղթահարելու Ադամի և Եվայի անկումը: Նա երկիր եկավ որպես մեր Փրկիչ և Քավիչ: Նա հաղթահարեց ֆիզիկական մահվան խոչընդոտը՝ տալով Իր սեփական կյանքը մեզ համար: Երբ Նա մահացավ խաչի վրա, Նրա հոգին առանձնացավ Իր մարմնից: Երրորդ օրը Նրա հոգին և Նրա մարմինը վերամիավորվեցին հավերժորեն՝ երբեք այլևս չբաժանվելու»:

Երեց Լ. Թոմ Փերի Տասներկու Առաքյալների Քվորումից, «Փրկության Ծրագիրը» *Լիահոնա,* նոյ. 2006, 71:

Մարդկության պատմության կենտրոնական իրադարձությունը

«[Փրկչի] Քավությունը գործվեց Գեթսեմանիում, որտեղ Նրա քրտինքը հոսում էր արյան մեծ կաթիլներով (տես Ղուկաս ԻԲ.44), և Գողգոթայում (կամ Գագաթում), որտեղ Նրա մարմինը բարձրացվեց խաչի վրա «Գան[գ]ի տեղ» - ում, որը խորհրդանշում էր մահը (Մարկոս ԺԵ.22, Մատթեոս ԻԷ.33, տես նաև3 Նեփի 27.14): Այս անսահման Քավությունը կազատեր մարդուն մահվան անսահմանությունից (տես 2 Նեփի 9.7): Փրկչի Քավությունը իրականություն դարձրեց հարությունը, իսկ հավերժական կյանքը հնարավորություն բոլորի համար: Նրա Քավությունը դարձավ ողջ մարդկության պատմության կենտրոնական իրադարձությունը»:

Երեց Ռասել Մ. Նելսոն Տասներկու Առաքյալների Քվորումից, «Փրկչի ապրելու մասին իմանալու խաղաղությունն ու ուրախությունը» *Լիահոնա,* դեկ. 2011, 22:

Զոհաբերություն մեղքի համար

«Հիսուս Քրիստոսը դիմացավ աներևակայելի տառապանքի՝ իրեն զոհաբերելով բոլորի մեղքերի համար: Այդ զոհաբերությունը մատուցեց մեծագույն բարիքը՝ անբիծ անարատ Գառը, մեծագույն աստիճանի չարիքի համար՝ ողջ աշխարհի մեղքերի համար: . . .

Այդ զոհաբերությունը՝ Հիսուս Քրիստոսի Քավությունը, փրկության ծրագրի կենտրոնում է: . . .

Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսը Հավերժական Հայր Աստծո Միածին Որդին է: Ես գիտեմ, որ Նրա քավող զոհաբերության շնորհիվ, մենք ունենք անմահության համոզվածությունը և հավերժական կյանքի հնարավորությունը: Նա մեր Տերն է, մեր Փրկիչը և մեր Քավիչը»:

Երեց Դալլին Հ. Օուքս՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, «Զոհաբերություն», *Լիահոնա,* մայիս 2012, 19, 22:

Փրկիչն առաջնորդում է Իր Եկեղեցին այսօր

«Հիսուս Քրիստոսի Քավությունը Իր Որդու երկրային առաքելության և մեր փրկության համար մեր Երկնային Հոր ծրագրի անփոխարինելի մասն է»: Որքան երախտապարտ պետք է լինենք, որ մեր Երկնային Հայրը չմիջամտեց, այլ ավելի շուտ զսպեց Իր Միրելի Որդուն ազատելու իր հայրական բնազդը: Ձեր և իմ հանդեպ Նրա հավերժական սիրո շնորհիվ, Նա թույլ տվեց Հիսուսին ավարտի հասցնել մեր Քավիչը դառնալու Իր նախասահմանված առաքելությունը: . . .

Հիսուս Քրիստոսը՝ ողջ մարդկության Փրկիչն ու Քավիչը չի մահացել: Նա ապրում է՝—Աստծո հարություն առած Որդին ապրում է—սա է իմ վկայությունը և Նա է առաջնորդում Իր Եկեղեցու գործերն այսօր»:

Երեց Մ. Ռասել Բալլարդ՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, «Քավությունը և մեկ հոգու արժեքը» *Լիահոնա*, մայիս 2004, 85, 86:

Մեր Հույսը, մեր Միջնորդը, մեր Քավիչը

«Մեր ապահովությունը [մեր Երկնային Հոր] և Նրա Միրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի մեջ է: Ես գիտեմ, որ Փրկիչը սիրում է ձեզ: Նա կհաստատի ձեր ջանքերը՝ զորացնելու ձեր վկայությունը, այնպես որ այն դառնա անհաղթահարելի ուժ ձեր կյանքում, ուժ, որը կհաստատի ձեզ ամեն կարիքի դեպքում և կտա ձեզ խաղաղություն և համոզվածություն այս անկայուն ժամանակներում:

Որպես Նրա Առաքյալներից մեկը, որը լիազորված է վկայություն բերել Նրա մասին, ես հանդիսավոր ձևով վկայում եմ, որ գիտեմ, որ Փրկիչն ապրում է, որ Նա հարություն առած, փառավորված, կատարյալ սիրով անձնավորություն է: Նա մեր հույսն է, մեր Միջնորդը, մեր Քավիչը»:

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, «Ուժեղ վկայության ուժը», *Լիահոնա*, Հուն. 2002, 103:

Խմել դառը գավաթը

«Գեթսեմանի պարտեզում մեր Փրկիչն ու Քավիչը չընկրկեց Քավության դառը բաժակը խմելուց: [տես ՎԿՈՒ 19.16–19]: Իսկ խաչի վրա Նա կրկին տառապեց Իր Հոր կամքը կատարելու համար, մինչև վերջապես Նա կարողացավ ասել. «Կատարուած է»: [Հովհաննես ԺԹ.30]: Նա դիմացավ մինչև վերջ: Ի պատասխան՝ Փրկչի հաստատուն կանգնելու կատարյալ հնազանդությանը, մեր Երկնային Հայրը հայտարարեց. «Ահա իմ Միրելի Որդին, որից ես շատ գոհ եմ, որով ես փառավորեցի իմ անունը» [3 Նեփի 11.7]:

. . . Եկեք փառավորենք Աստծո անունը՝ անսասան կանգնելով մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հետ»:

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս՝ Տասներկու Առաքյալների Քվորումից. «Հաստատ կանգնեք Սուրբ Տեղերում», *Լիահոնա*, մայիս 2013, 51:

Աստծո միակ կատարյալ զավակը

«Ես գիտեմ, որ Աստված մեր սիրող, ներողամիտ Երկնային Հայրն է՝ բոլոր ժամանակներում, բոլոր ձևերով և բոլոր պայմաններում: Ես գիտեմ, որ Հիսուսը Նրա միակ կատարյալ զավակն էր, ում կյանքը զոհաբերվեց սիրով՝ և Հոր և Որդու կամքի համաձայն, մեզանից բոլոր մնացածների փրկագնման համար, ովքեր կատարյալ չենք: Ես գիտեմ Նա մահից հարություն է առել, որ կրկին ապրի, և Նրա շնորհիվ, դուք և ես նույնպես կապրենք»:

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, «Հավատում եմ, Տէր», *Լիահոնա*, մայիս 2013, 95:

Գիտեմ ապրում է Փրկիչն իմ

«Ես հայտարարում եմ իմ վկայությունը և երախտագիտությունը Տեր Հիսուս Քրիստոսի անսահման ու հավերժական զոհաբերության համար: Ես գիտեմ, որ Փրկիչն ապրում է: Ես զգացել եմ և Նրա փրկող զորությունը, և Նրա հնարավորություն տվող զորությունը, և ես վկայում եմ, որ այս զորությունները իրական են և հասանելի մեզանից յուրաքանչյուրի համար: Իսկապես, «Տիրոջ ուժով» մենք կարող ենք անել և հաղթահարել բոլոր բաները, մինչ մենք առաջ ենք գնում մահկանացու մեր ճամփորդության մեջ»:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար՝ Տասներկու Առաքյալների Քվորումից «Քավությունը և մահկանացու կյանքի ճամփորդությունը», *Լիահոնա*, ապր. 2012, 19:

Քրիստոսը կատարեց Իր առաքելությունը

«[Փրկիչը] Իր վրա վերցրեց «մարդկության մեղքերի բեռը» և «սարսափները, որ սատանան . . . կարող է պատճառել» [James E. Talmage, *Jesus the Christ,* 613]: Այդ ընթացքում Նա դիմացավ խարդախությամբ հորինված փորձություններին և սոսկալի, ողբերգական իրադարձություններին, որոնք հանգեցրին Նրա Խաչելությանը: Ի վերջո, այն ավարտվեց Քրիստոսի հաղթական Հարությամբ՝ Զատկի կիրակի օրը: Քրիստոսը կատարեց Իր սրբազան առաքելությունը որպես Փրկիչ և Քավիչ: Մենք հարություն կառնենք մահից և մեր հոգիները կվերամիավորվեն մեր մարմիններին: . . .

Ես բերում եմ իմ առաքելական վկայությունը, որ Հիսուս Քրիստոսն ապրում է, Նա Փրկիչն է և Քավիչը աշխարհի: Նա ապահովել է ուղին դեպի ճշմարիտ երջանկություն»:

Երեց Քվենթին Լ. Քուք՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, «Մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսին», *Լիահոնա*, մայիս 2010, 83–84, 86:

Փրկիչը փրկագնել է մեզ

«Գեթսեմանիում Փրկչի տառապանքը և խաչի վրա Նրա հոգևարքը փրկագնում են մեզ մեղքից՝ բավարարելով մեզ համար արդարադատության պահանջները: Նա կարեկցում, ներում և սրբազործում է նրանց, ովքեր ապաշխարում են: Քավությունը նաև վճարում է արդարադատության պարտքը մեզ՝ բժշկելով և փոխհատուցելով մեր անմեղորեն կրած տառապանքները: «Քանզի ահա, նա տանում է բոլոր մարդկանց, այո, ամեն մի ապրող արարածի ցավերը՝ և տղամարդկանց, և կանանց, և երեխաների, որոնք պատկանում են Ադամի ընտանիքին» (2 Նեփի 9.21, տես նաև Ալմա 7.11–12). . . .

. . . Կատարյալ փրկագնումը Հիսուս Քրիստոսի և միայն Նրա մեջ է: Ես խոնարհ և երախտապարտ ընդունում եմ Նրան որպես Քավիչ»:

Երեց Դ. Թոդ Քրիսթոֆերսոն՝ Տասներկու Առաքյալների Քվորումից «Փրկագնում», *Լիահոնա*, մայիս 2013, 110, 112:

Հարությունը և կյանքը

«Առաջին հերթին մենք հռչակում ենք մեր Փրկիչ և Քավիչ Հիսուս Քրիստոսին: Այն ամենի համար, ինչպիսին մենք կանք և ինչպիսին երբևէ կլինենք, մենք պարտական ենք Նրան: . . .

Նրա խոսքերն արձագանքում են դարեր ի վեր.

«Ես եմ յարութիւնը եւ կեանքը, ինձ հաւատացողը թէեւ մեռնի էլ, կապրի:

Եւ ամեն ով որ կենդանի է եւ ինձ հաւատում է, յաւիտեան չի մեռնիլ» (Հովհաննես ԺԱ.25–26):

Եղբայրներ և քույրեր, նա ապրում է: Նա հարություն է առել: Նա առաջնորդում է Իր սուրբ աշխատանքը երկրի վրա»:

Երեց Նիլ Լ. Անդերսեն՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, «Եկեք Նրա մոտ», *Լիահոնա*, մայիս 2009, 80:

ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՀԱՐՑԵՐԻՆ

Ինչպիսի՞ տեսք ունի հարություն առած անձնավորությունը:

«Այս կյանքով անցնելուց հետո, մենք . . . կունենանք մեր մարմինները փառավորված, զերծ ամեն հիվանդությունից և հյուծվածությունից և դարձած ամենագեղեցիկը: Չկա ավելի գեղեցիկ բան, քան նայել հարություն առած տղամարդու կամ կնոջ վրա: Չկա ավելի սքանչելի բան, որ ես կարող եմ պատկերացնել, քան տղամարդը [կամ կինը] կարող են ունենալ, քան հարություն առած մարմինը: Չկա ոչ մի Վերջին Օրերի Սուրբ . . . որն իհարկե չունենա առաջին հարության առավոտյան դուրս գալու, փառավորվելու և վեհացվելու հեռանկարը Աստծո ներկայության մեջ»:

Նախագահ Լորենզո Սնոու (1814–1901), in Conference Report, Oct. 1900, 4:

ՄՇԱՐԻՉ ՀԵՏ, ԱԱՅՄՊ. ՂՅՈՒԻ® ALTUS FINE ART

Երեց
Վիլիամ Ռ. Վոքեր
Յոթանասունից

Հետևել Մարգարեին

Մի քանի տարի առաջ, հենց գերագույն համաժողովից առաջ, Նախագահ Թոմաս Ս.Մոնսոնը ուսուցանեց մի սքանչելի դաս: Այս անգամ այն հավաքված գերագույն Իշխանավորներին էր ուղղված, ովքեր եկել էին Սոլթ Լեյք Սիթի, Յուտա, շատերը գալով ողջ աշխարհի տարբեր վայրերից, որտեղ նրանք ծառայում են Տարածքի նախագահություններում: Մենք հավաքվել էինք միասին, ինչպես հրահանգվել էինք Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների կողմից:

Երբ ժողովի ժամանակը մոտեցավ, բոլորը թվում էր ներկա էին, բացի Նախագահ Մոնսոնից: Ժողովի սկսվելուց մի քանի րոպե առաջ մենք դադարեցինք միմյանց հետ զրուցելը և նստեցինք ակնածալի, լսելով նախերգանքային երաժշտությունը, սպասելով որ մարգարեն ամեն րոպե կարող էր ժամաներ:

Մենք համբերատարությամբ սպասեցինք մինչև դարձավ առավոտյան ժամը 9:00, իսկ հետո անց: Ինչ որ մեկը դուրս եկավ կողքի դռնից՝ հավանաբար տեսնելու, թե արդյոք ինչ որ օգնության կարիք կար: Վերադառնալով նա ասաց. «Նախագահ Մոնսոնը շուտով կմիանա ձեզ»:

Մոտ 15 րոպե հետո Նախագահ Մոնսոնը մտավ սենյակ: Հարգանքից ելնելով մենք ոտքի կանգնեցինք, երբ նա ներս մտավ: Մենք երջանիկ էինք տեսնել նրան և գոհ էինք, որ նա լավ տեսք ուներ: Չկար ակնհայտ պատճառ, թե ինչու նա պետք է ուշանար:

Նախագահ Մոնսոնն ուղիղ գնաց դեպի ամբիոնը և ասաց. «Եղբայրներ, ցավում եմ, որ ուշացա, բայց կինս այս առավոտ իմ կարիքն ուներ»:

Ես խորապես տպավորվեցի և խոնարհացած զգացի, և չէի կարողանում դադարել այս խոսքերի մասին մտածելուց:

Դա շատ կարևոր ժողով էր: Եկեղեցու ողջ ավագ ղեկավարությունը հավաքվել էր, բայց Նախագահ Մոնսոնը օրինակ հանդիսացավ բոլորիս համար: Նրա կինը իր կարիքն ուներ, և նա հատկացրեց անհրաժեշտ ժամանակը նրան հոգ տանելու համար: Դա մեծ քարոզ էր: Ես չեմ հիշում որևէ բան, որ այդ օրն ասվեց, բայց ես հիշում եմ այդ քարոզը. «Կինս իմ կարիքն ուներ»:

Երբ մենք հետևենք Նախագահ Մոնսոնին և փորձենք նմանվել նրան, մենք անպայման հաջողության կհասնենք՝ լինելով Տեր Հիսուս Քրիստոսի ավելի հավատարիմ աշակերտներ:

Հետևել մարգարեի օրինակին

Ես կկամենայի առաջարկել հինգ ուղիներ, որոնցով կարող ենք հետևել Նախագահ Մոնսոնի օրինակին:

1. Մենք կարող ենք դրական լինել, և մենք կարող ենք երջանիկ լինել:

Թանկագին Մարգարիտում Մարգարե Ջոզեֆ Սմիթը նկարագրում է իր «ուրախ բնավորությունը» (Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.28): «Ուրախ» բառը հատկանշական է նաև Նախագահ Մոնսոնի համար:

Մի առիթով Նախագահ Մոնսոնն ասել է. «Մենք . . . կարող ենք ընտրել դրական վերաբերմունք ունենալ: Մենք չենք կարող կառավարել քամին, բայց մենք կարող ենք հարմարեցնել առագաստները: Այլ խոսքով ասած, մենք կարող ենք ընտրել երջանիկ լինել և դրական, անկախ նրանից, թե ինչ կարող է հայտնվել մեր ճանապարհին»:[1]

Մի օր ես սպասում էի Առաջին Նախագահության նիստերի դահլիճի մոտ: Ես հրավիրվել էի այնտեղ մասնակցելու ժողովին՝ քննարկելու տաճարային հարցեր: Ես միայնակ լուռ նստած էի դրսի սենյակում: Ես

Յուրաքանչյուր տաճարային նվիրագործման ժամանակ Նախագահ Մոնսոնը կենտրոնանում է երեխաների վրա: Նա սիրում է ներգրավել նրանց անկյունաքարի ծիսակատարության մեջ:

կարծում էի, որ Առաջին Նախագահությունը արդեն ժողով էր անում, և որ ես կհրավիրվեմ միանալու իրենց մի քանի րոպեից:

Երբ ես նստած էի այնտեղ, ես լսեցի ինչ որ մեկի սուլելով դահլիճով ներքև քայլելու ձայնը: Ես մտքումս մտածեցի «Ինչ որ մեկը ճիշտ չի հասկանում պատշաճ վարվելակարգի կանոնները: Չի կարելի սուլելով քայլել Եկեղեցու Նախագահի գրասենյակի մոտակայքում»:

Մի րոպե հետո սուլողը հայտնվեց անկյունից՝ դա Նախագահ Մոնսոնն էր: Նա երջանիկ էր և դրական: Նա ջերմորեն ողջունեց ինձ և ասաց. «Ենթադրում եմ, մի քանի րոպեից ժողովը կսկսենք»:

Նույնիսկ ողջ Եկեղեցու ծանրությունն ունենալով իր ուսերին, նա օրինակ է երջանկության, և նա միշտ դրական վերաբերմունք ունի: Մենք էլ այդպիսին պետք է լինենք:

2. Մենք կարող ենք լինել բարի և սիրալիր երեխաների հանդեպ:

Հիսուսը հաճախ էր խոսում երեխաների մասին: Նրա մարգարեն՝ Նախագահ Մոնսոնը, նույնպես, հաճախ է խոսում երեխաների մասին: Ես տեսել եմ հատկապես տաճարների նվիրագործման ժամանակ, ինչպես է նա սիրում երեխաներին և իր օրինակով ուսուցանում մեզ, թե ինչպես վարվել նրանց հետ: Յուրաքանչյուր տաճարային նվիրագործման ժամանակ նա կենտրոնանում է երեխաների վրա: Նա սիրում է ներգրավել նրանց անկյունաքարի ծիսակատարության մեջ և միշտ հրավիրում է նրանցից մի քանիսին դնել մի քիչ կիր անկյունաքարի մեջ՝ տաճարի խորհրդանշական ավարտին մասնակցելու համար: Դա նրանց համար դարձնում է զվարճալի և հիշարժան: Նա խրախուսում է և գովում նրանց: Հիանալի է տեսնել այդ:

Նրա ջերմ ողջույնները սովորաբար ներառում են ափով ափին զարկելը, ականջները շարժելը և խրախուսելը՝ ծառայել միսիայում և ամուսնանալ տաճարում:

Մի քանի տարի առաջ Նախագահ Մոնսոնին նշանակել էին նվիրագործել Օքուիր Մաունթի, Յուտա Տաճարը իր ծննդյան օրը: Երբ նա ժամանեց տաճար և մոտեցավ տաճարի շքամուտքին երիտասարդների մի խումբ էր հավաքվել: Ակնհայտորեն նրանք գիտեին, որ Նախագահ Մոնսոնի ծննդյան օրն էր, որովհետև նրանք սկսեցին նրա համար երգել «Ծնունդտ շնորհավոր»: Նա կանգ առավ և նրանց դիմավորեց լայն ժպիտը դեմքին: Նա նույնիսկ սկսեց ձեռքերը շարժել կարծես չափ էր տալիս նրանց երգեցողությանը: Վերջում նրանք ավելացրեցին կրկներգը «Եվ շատ ավելին»: Նա ասաց ինձ. «Դա իմ սիրելի մասն է»:

Եկեղեցու երեխաները և երիտասարդները սիրում են նրան, և նրանք չեն կասկածում, որ նա էլ իրենց է սիրում:

3.Մենք կարող ենք հետևել Հոգու հուշումներին:

Նախագահ Մոնսոնը գեղեցիկ է նկարագրել իր նվիրվածությունը Տիրոջը և Հոգու հուշումներին հետևելու իր պարտավորությունը այս խոսքերով. «Ամենաքաղցր փորձառությունը, որ ես գիտեմ այս կյանքում հուշում զգալն է և դրա համաձայն գործելը և հետագայում պարզելը, որ դա ինչ որ մեկի աղոթքի պատասխանն էր կամ ինչ որ մեկի կարիքը: Եվ ես միշտ կամենում եմ, որ Տերն իմանա, որ եթե Նա ուզում է, ինչ-որ մի հանձնարարություն կատարվի, Թոմ Մոնսոնը կկատարի այդ հանձնարարությունն Իր համար»:[2]

Սա մի օրինակ է, որին մեզանից յուրաքանչյուրս պետք է կամենա հետևել:

4. Մենք կարող ենք սիրել տաճարը:

Նախագահ Մոնսոնը կմնա պատմության մեջ, որպես Եկեղեցու պատմության մեջ մեծ տաճար կառուցողներից մեկը: Եկեղեցու Նախագահ դառնալուց ի վեր 2008 թվականի փետրվարին նա շարունակել է տաճարներ կառուցելու մեծ գործը: Մարգարե լինելու վեց տարիների ընթացքում Նախագահ Մոնսոնը հայտարարել է 33 նոր տաճարներ կառուցելու ծրագրեր:

Նախագահ Մոնսոնն ասել է. «Թող որ մեզանից յուրաքանչյուրն արժանի կյանքով ապրի, մաքուր ձեռքեր և անաղարտ սիրտ ունենա, որպեսզի տաճարը կարողանա դիպչել մեր կյանքին և մեր ընտանիքներին»:[3]

Նա նաև տվել է այս հիանալի խոստումը. «Երբ մենք սիրում ենք տաճարը, զգում տաճարը և հաճախում

տաճար, մեր կյանքը կարտացոլի մեր հավատքը: Երբ մենք գալիս ենք Աստծո այս սուրբ տունը, երբ մենք հիշում ենք ուխտերը, որ անում ենք դրանց ներսում, *մենք կկարողանանք տանել ամեն փորձություն և հաղթահարել ամեն գայթակղություն*»:[4]

Եկեք հետևենք տաճարը սիրելու մարգարեի օրինակին:

5. Մենք կարող ենք լինել բարի, հոգատար և սիրալիր:

Նախագահ Մոնսոնը ուրիշներին սիրելու հիանալի օրինակ է: Նրա ողջ ծառայությունը լցված է եղել տներ այցելելով, ձեռքները գլուխներին դնելով և օրհնություններ տալով, անսպասելի զանգեր կատարելով՝ սփոփելով և խրախուսելով, քաջալերանքի նամակներ ուղարկելով, զովասանքի խոսքեր ասելով և շնորհակալություն հայտնելով, հիվանդանոցներ և խնամքի կենտրոններ այցելելով և ժամանակ գտնելով թաղումների և ցավակցությունների գնալով, չնայած իր շատ զբաղված գրաֆիկին:

Ճիշտ ինչպես Փրկիչը կաներ, Թոմաս Մոնսոնը շրջել է բարիք անելով (տես Գործք Ժ.38) և օրհնելով ու մյուսներին սիրելով, սա է եղել նրա կյանքի շարժիչ ուժը:

Նախագահ Մոնսոնի բարության մի նշանակալի օրինակ տեղի ունեցավ 2012թվականին: Երբ Յուտայի Բրիգամ քաղաքի Տաճարը մոտենում էր ավարտին, ես հանդիպեցի Առաջին Նախագահության հետ քննարկելու պլաններ դրա նվիրագործման կապակցությամբ: Բրիգամ քաղաքը լինելով ընդամենը մեկ ժամվա ճանապարհ Սոլթ Լեյք քաղաքից դեպի հյուսիս, շատ հեշտ կլիներ Նախագահ Մոնսոնի համար ճանապարհորդել այնտեղ նվիրագործման համար:

Սակայն Նախագահ Մոնսոնն ասաց. «Բրիգամ քաղաքը Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հայրենի քաղաքն է՝ այդ մեծ Առաքյալի, ով այդքան երկար տարիներ իմ կողքին է նստել Տասներկուսի հետ: Ես կամենում եմ, որ նա ունենա իր հայրենի քաղաքի տաճարի նվիրագործման պատիվն ու օրհնությունը: Ես հեռու կմնամ և կնշանակեմ Նախագահ Փաքերին նվիրագործել Բրիգամ քաղաքի տաճարը: Ես ուզում եմ, որ դա լինի նրա օրը»:

Դա Նախագահ և Քույր Փաքերների համար մի սքանչելի օր էր, ով նույնպես մեծացել էր Բրիգամ քաղաքում: Ես շատ զգացված էի իր ընկեր Առաքյալի հանդեպ Նախագահ Մոնսոնի բարի և մեծահոգի քայլից: Մենք բոլորս կարող ենք լինել այդպիսին: Մենք կարող ենք կիսվել, բարի լինել և ավելի շատ մտածել մեր շուրջը գտնվողների մասին:

Մարգարեի օրինակը

Նախագահ Մոնսոնը գերագույն համաժողովի ժամանակ իր սքանչելի և ոգեշնչող ուղերձներով

Ճիշտ ինչպես որ Փրկիչը կաներ, Նախագահ Մոնսոնը շրջել է բարիք գործելով և օրհնելով ու սիրելով ուրիշներին, սա եղել է շարժիչ ուժ նրա կյանքում:

ուսուցանել է մեզ, թե ինչպես ապրենք մեր կյանքը: Նա ուսուցանել է մեզ, թե ինչպես լինենք Հիսուս Քրիստոսի հետևորդներ իր նշանավոր և սքանչելի անձնական օրինակով: Իսկապես, Տերը տվել է մեզ օրինակ բոլոր բաներում, և օրինակներից մեկը, որին մենք պետք է ձգտենք հետևել, դա մեր սիրելի մարգարեն է:

Ես վկայում եմ, որ կա Աստված երկնքում, ով գիտի մեզ և սիրում է մեզ: Նա տվել է մեզ մարգարե՝ առաջնորդելու մեզ, ուսուցանելու մեզ, և առաջնորդելու մեզ այս վերջին օրերում: Ես հավատում եմ, որ Տերն ակնկալում է մեզանից սիրել մարգարեին, հաստատել նրան և հետևել նրա օրինակին:

Ես մեծ օրհնություն եմ համարում ապրել այն ժամանակահատվածում, երբ Թոմաս Ս. Մոնսոնն է Տիրոջ մարգարեն: Երբ հետևենք և փորձենք նմանվել նրան, մենք անխուսափելիորեն հաջողության կհասնենք լինելով Տեր Հիսուս Քրիստոսի ավելի հավատարիմ աշակերտներ: ■

Բրիգամ Յանգի Համալսարանում Եկեղեցու Կրթական համակարգի հոգևոր հավաքույթումիողված ելույթից՝ Այդահո, մայիս, 2013: Ամբողջական ելույթի համար այցելեք՝ lds.org/broadcasts:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Ոգեշնչված ուղերձներ Նախագահ Մոնսոնից», *Church News,* սեպտ. 2, 2012, 2:
2. *Տիրոջ հանձնարարության ներքո* (DVD, 2008):
3. Թոմաս Ս. Մոնսոն, «Տաճարի օրհնությունները», *Լիահոնա,* հոկտ. 2010, 19:
4. Thomas S. Monson, *Be Your Best Self* (1979), 56; emphasis added.

Ֆիլիպիններ՝

ՀՈԳԵՎՈՐ ՈՒԺ ԾՈՎԻ ԿՂԶԻՆԵՐԻ ՎՐԱ

53 տարիների կարճ ժամանակահատվածում Եկեղեցին ձեռք է բերել վիթխարի ուժ և աճ Ֆիլիպիններում, որը հայտնի է որպես «Արևելքի Մարգարիտ»:

Ագուստո Ա. Լիմին Միացյալ Նահանգներից երկու երիտասարդ միսիոներների կողմից ներկայացված ուղերձը թվում էր հաստատեց այն սկզբունքները, որոնք նա արդեն գիտեր, որ ճշմարիտ են: Լինելով երիտասարդ իրավաբան և Քրիստոնյա, Ագուստոն նկատեց, որ այնպիսի վարդապետություններ, ինչպիսիք են շարունակական հայտնությունը, «բաներ էին, որ նույնիսկ, երբ ես ավագ դպրոցում էի և քոլեջում, հավատում էի»: [1]

Մի քանի ամիս անց Ագուստոն համաձայնվեց հաճախել կիրակնօրյա ծառայություններին և ընդունեց աղոթելու և Մորմոնի Գիրքը կարդալու մարտահրավերը: «Ես սկսեցի լրջորեն կարդալ Մորմոնի Գիրքն այն նույն ոգով, որը Մորոնին է մեզ խորհուրդ տալիս [ունենալ]: Երբ ես դա արեցի մի ցանկությամբ՝ իմանալու թե արդյոք այն ճիշտ է, մի քանի տող կարդալուց հետո, ես սկսեցի վկայություն ստանալ», հիշում է նա:[2]

1964 թվականի հոկտեմբերին Ագուստո Լիմը մկրտվեց և դարձավ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ռահվիրան Ֆիլիպիններում, ոչ շատ անց միանալով իր կնոջ և ընտանիքի հետ: Այսօր, տասնամյակներ Եկեղեցում հավատարիմ ծառայությունից հետո, որը ներառում է մի կանչ 1992 թվականին ծառայելու որպես Գերագույն Իշխանավոր՝ լինելով այդ պաշտոնում ծառայող առաջին ֆիլիպինցին, Եղբայր Լիմն արտացոլում է «Արևելքի Մարգարիտում» ապրող հարյուր հազարավոր Վերջին Օրերի Սրբերի հավատքն ու նվիրումը:

Բերքատու հող

Հիսուս Քրիստոսի ծննդից մոտ 550 տարի առաջ, Տերը խոստացավ Մորմոնի Գրքի մարգարե Նեփիին. «Ես հիշում եմ նրանց, ովքեր ծովի կղզիների վրա են» և «ես հայտնի եմ դարձնում իմ խոսքը մարդկանց զավակներին, այո, այսինքն՝ երկրագնդի բոլոր ազգերին» (2 Նեփի 29.7): Շատերի համար, ովքեր կարդացել են այս ընտիր խոսքերը, «ծովի կղզիների մի խումբ», որ միտքներս է գալիս՝ Ֆիլիպիններն է:

100 միլիոնին մոտեցող բնակչությամբ Ֆիլիպինների հանրապետությունը մի մեծ կղզիախումբ է մոտ 7,100 կղզիներով, որը գտնվում է Ասիայի հարավարևելյան ափին: Այն գեղեցիկ մերձարևադարձային երկիր է՝ բնակեցված հաճելի և խոնարհ մարդկանցով: Սակայն երկիրը ենթարկվում է երկրաշարժերի, թայֆունների, հրաբխային ժայթքումների, մակընթացության ալիքների և այլ բնական աղետների և կքված է մի շարք հասարակատնտեսական խնդիրների տակ: Լայնատարած աղքատությունը կրկնվող մարտահրավեր է և ֆիլիպինցիները ունեցել են քաղաքական անկայունության շրջաններ և տնտեսական ճգնաժամեր:

Բայց նրանց համար, ովքեր ծանոթ են Տիրոջ ուղիներին, Ֆիլիպինները բերքատու հող է՝ ավետարանի սերմերը ցանելու համար: Տագալոգի և մյուս տեղական լեզուների հետ շատ Ֆիլիպինցիներ խոսում են անգլերեն, որը նույնպես ազգային լեզու է: Իսպանական երկարատև կառավարման պատճառով բնակչության ավելի քան 90 տոկոսը Քրիստոնյա են, փոքրամասնության նշանակալի մասը մահմեդականներ են:

Եկեղեցին Ֆիլիպիններում ներկայացնելու առաջին փորձը կատարվեց 1898 թվականին Իսպանաամերիկյան պատերազմի ընթացքում Ուիլլարդ Քոլի և Ջորջ Սիմանի կողմից, ովքեր ծառայողներ էին Յուտայից, ովքեր ձեռնադրվել էին որպես միսիոներներ նախքան իրենց մեկնումը: Երբ հնարավորություններ էին լինում,

ՆԱԽԿԻՐ ԼՈՒՍԱՆԿԱՐ © GETTY IMAGES, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐ ՖԻԼԻՊԻՆՆԵՐԻ ՄԱՆԻԼԱՅԻ ՏԱՃԱՐԻ ՄՈՏ՝ ՂԱՆԻՐՈՎ ՍՈՒՆԵՏՅԱՑԻ ԿՈՂՄԻՑ

Կառուցելով ավետարանի սկզբունքների վրա երիտասարդ չափահասները Ֆիլիպպիններում հասնում են հաջողության և դառնում ուժեղ առաջնորդներ Տիրոջ Եկեղեցում:

նրանք քարոզում էին ավետարանը, բայց մկրտություններ չէին կատարվում:

II Համաշխարհային պատերազմի ժամանակ Վերջին Օրերի Սրբերը շարժվեցին կղզիներով առաջ գնալով Դաշնակից ուժերի հետ: 1944 և 1945 թվականներին ռազմական խմբերը եկեղեցական ժողովներ էին անցկացնում շատ վայրերում և բազմաթիվ ՎՕՍ ծառայող անդամներ դեռ Ֆիլիպպիններում էին, երբ պատերազմն ավարտվեց:Նրանց շարքում էին Մաքսինե Թաթեն և վերջին նորադարձներից Ջերոմ Հորովիտզը: Երկուսն էլ օգնեցին ներկայացնել ավետարանը Անիսետա Ֆաջարդոյին: Երբ օգնում էին վերակառուցել Անիսետայի տունը Մանիլայի մի ռմբակոծված շրջանում, Եղբայր Հորովիտզը կիսվեց իր նոր գտած հավատքով Անիսետայի և նրա դստեր՝ Ռութի հետ:

Անիսետան ձեռք բերեց վկայություն և ցանկացավ մկրտվել, բայց Եկեղեցին չէր լիազորում մկրտություններ Ֆիլիպպինցիների համար այդ ժամանակ, որովհետև չկային մնայուն Եկեղեցու միավորներ այդ կղզիներում: Երեց Հարոլդ Բ. Լին (1899–1973) Տասներկու Առաքյալների Քվորումից տեղյակ դարձավ Անիսետայի ցանկության մասին և իր պաշտոնում որպես Գերագույն Ծառայողների Հանձնաժողովի Նախագահ, Երեց Լին հավանություն տվեց Անիսետայի մկրտությանը: 1946 թվականի Զատկի առավոտյան Անիսետա Ֆաջարդոն մկրտվեց ծառայող Լորեն Ֆերրի կողմից և այժմ համարվում է որպես առաջին հայտնի ֆիլիպպինցին, որը դարձավ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ:

Միսիոներական աշխատանքի մեկնարկը

Պատերազմից հետո, Եկեղեցու խմբեր կազմակերպվեցին երկու ԱՄՆ ռազմական բազաներում՝ Քլարկի օդային ուժերի բազայում և Սուբիկ Բեյ ռազմածովային բազայում. քանի որ Վերջին Օրերի Սրբերի ծառայող անդամները սպասում էին Եկեղեցու ավելի պաշտոնական ներկայության հաստատմանը Ֆիլիպպիններում: 1955 թվականի օգոստոսի 21-ին Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը (1876–1972) նվիրագործեց Ֆիլիպպինները ավետարանի քարոզման համար: Սակայն պաշտոնական սահմանափակումները հետաձգեցին միսիոներների ժամանումը մինչև 1961 թվականը:

1960թվականին Երեց Գորդոն Բ. Հինքլին (1910–2008), այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի Օգնական, այցելեց Ֆիլիպպիններ մի քանի օրով. «Ես արտահայտեցի այն կարծիքը, որ միսիոներական աշխատանքը կլինի . . . այնքան բերքառատ, ինչպես այն եղել է աշխարհի շատ այլ վայրերում:[3] Հաջորդ տարի մեծ նախապատրաստություններից և թղթային աշխատանքից հետո, որոնք արվեցին այնպիսի անդամների կողմից, ինչպիսին էին՝ Մաքսինե Թաթե Գրիմը և Նախագահ Ռոբերթ Ս. Թեյլորը Հեռավոր Արևելքի Հարավային միսիայից, ինչպես նաև Եկեղեցուց դուրս ընկերների կողմից, Երեց Հինքլին վերադարձավ կղզիներ վերանվիրագործելու Ֆիլիպպինները միսիոներական աշխատանքը սկսելու համար:

1961 թվականի ապրիլի 28-ին, Մանիլայի արվարձաններից դուրս, Երեց Հինքլին հանդիպեց ծառայող անդամների մի փոքր խմբի հետ, Ամերիկացի բնակիչների և մեկ Ֆիլիպպինցի անդամ՝ Դեյվիդ Լանգմանի հետ և հղեց մի հատուկ աղոթք, «որ կլինեն շատ հազարավորներ, ովքեր կստանան այս ուղերձը և կօրհնվեն դրանով»:[4] Այդ խոսքերը, որոնք արտաբերվեցին Տիրոջ ճշմարիտ ծառայի կողմից, շուտով դարձան մարգարեական:

Առաջին չորս միսիոներները—Ռեյմոնդ Լ. Գուդսանը, Հարրի Ջ. Մուրեյը, Քենթ Ս. Լովեն, և Նեսթեր Օ. Լեդեսմանը—ժամանեցին Մանիլա մի քանի շաբաթ անց: «Ֆիլիպպինցիները շատ պատրաստակամորեն ընդունեցին ավետարանը», նշել է Երեց Լովեն: «Երբ ընտանիքի ղեկավարը որոշում էր միանալ Եկեղեցուն, շատ դեպքերում ողջ ընտանիքը միանում էր Եկեղեցուն»:[5]

Եկեղեցին առաջընթաց է ապրում

Աշխատանքն այնպիսի առաջընթաց էր ապրում, որ Ֆիլիպպինների միսիան կազմակերպվեց մինչև 1967 թվականը: Մինչև այդ տարվա վերջը կային 3,193 անդամներ միսիայում, որոնցից 631-ը դարձի էին եկել այդ տարի: Մինչև 1973 թվականը Ֆիլիպպիններում

Եկեղեցին ընդարձակվել էր գրեթե 13 հազար անդամով: 1973 թվականին ստեղծվեց Մանիլայի Ֆիլիպպինների Ցիցը, Ագուստո Ա. Լիմը որպես նախագահ: 1974 թվականին միսիան կիսվեց, ստեղծելով Ֆիլիպպինների Մանիլայի Միսիան և Ֆիլիպպինների Սեբու Քաղաքի Միսիան

1975 թվականի օգոստոսին Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը (1895–1985) եկավ Մանիլա նախագահելու Ֆիլիպպինների առաջին տարածքային համաժողովում: Օգոստոսը փոթորկոտ ամիս էր, ճանապարհորդելն առավել դժվար դարձնելով նրանց համար, ովքեր գալիս էին Մանիլայից դուրս գտնվող վայրերից: Լառագ քաղաքից մի ավտոբուս լիքը Սրբեր գրեթե չկարողացան դա անել, բայց Սրբերը դուրս հրեցին իրենց մեքենան ցեխի փոսի միջից և աղաչեցին վարորդին ետ չդառնալ: Սրբերի մեկ այլ խումբ քաջաբար դիմացան փոթորկոտ ծովերին երեք օր շարունակ, որովհետև այն ամենը, ինչ իսկապես նշանակություն ունի, ինչպես մի քույր ասաց, Աստծո կենդանի մարգարեին տեսնելն էր և լսելը:

Նախագահ Քիմբալը կրկին այցելեց Ֆիլիպպիններ 1980 թվականին նախագահելու մեկ այլ տարածքային համաժողովում, և նա նաև կարճ հանդիպում ունեցավ Ֆիլիպպինների նախագահ Ֆերնանդ Մարկոսի հետ: Այս հանդիպումը ուղի բացեց Եկեղեցու համար ի վերջո բացել միսիոներական ուսուցողական կենտրոն Ֆիլիպպիններում 1983 թվականին և հաջորդ տարի նվիրագործել Ֆիլիպպինների Մանիլայի Տաճարը: 1987 թվականին հաստատվեց Ֆիլիպպիններ/Միկրոնեզիա Տարածքը, իսկ վարչությունը՝ Մանիլայում:

Մորմոնի գրքի ընտրանին թարգմանվեց Տագալոգով 1987 թվականին: Այժմ Մորմոնի Գրքի թարգմանությունները Ֆիլիպպինների մի քանի լեզուներով են՝ ներառյալ քեբուանոն:

Տաճարի օրհնությունները

1980 թվականի դեկտեմբերին Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը ուղարկեց Եկեղեցու անշարժ գույքի բաժանմունքի տնօրենին Մանիլա՝ գտնելու մի պատշաճ հողամաս տաճարի համար: Մի քանի հողամասեր նայելուց հետո տնօրենը խնդրագիր ներկայացրեց գնելու 3.5 ակր (1.4 հա) Քուեզոն քաղաքում: Վայրը նայում է դեպի Մարիկինա հովիտ և հողատարածքը գնվեց 1981 թվականի հունվարին: Եկեղեցու խնդրանքով փողոցի անունը փոխվեց Temple Drive:

Հողատարածքի բացման ծիսակատարության համար 1982 թվականի օգոստոսի 25-ին, չնայած թայֆունի սպառնալիքին, մոտ 2000 Եկեղեցու անդամներ հավաքվեցին կղզիների բոլոր մասերից նավակներով, գնացքով և ավտոբուսով: Շուտով սկսվեց տաճարի շինարարությունը և այն պատրաստ էր նվիրագործվելու 1984 թվականի օգոստոսին:

Մոտավորապես 27,000 անդամներ և ոչ անդամներ ուղևորություն կատարեցին տաճար՝ նախքան նրա նվիրագործումը: Նրանք եկան չնայած երկու թայֆուններին, մեկը մյուսից ուղիղ 48 ժամ հետո, որը հարվածել էր Ֆիլիպպիններին մի քանի օր առաջ: Սրբերը հեռու շրջաններից ժամանեցին հոգնած, բայց աշխույժ: Շատ դեպքերում նրանք դեպի Մանիլա շրջանցիկ ճանապարհներ էին ստիպված եղել անցնել, որովհետև ճանապարհները հեղեղված էին և կամուրջները վնասված ափերից դուրս եկած գետերով:

Տաճարի գեղեցկությունը ցնցեց այցելուներին, ներառյալ շատ նշանավոր Ֆիլիպպինցիների: Գրող Սելսիո Կարունունգանը նշել է. «սրբության մի զգացողություն, որ երբ ներս եք մտնում պատրաստվում եք դեմ առ դեմ հանդիպել ձեր Արարչի հետ»: Գեներալ Բիենվենիդո Կաստիլիոն՝ Ֆիլիպպինների ոստիկանության գլխավոր կապելլանը, ասել է, որ տաճարը «մի վայր է, որտեղ կարող եք խորհել երկնային բաների մասին, որովհետև դուք գտնվում եք այդպիսի միջավայրում»: Երկու միանձնուհիներ զգացել են, որ «տաճարն իսկապես Տիրոջ տունն է»: Եվա Էստրադա Կալոն՝ Ֆիլիպպինների խորհրդարանի մի անդամ, ասել է ուղեկցորդներին. «Ես կցանկանայի, որ դուք ավելի շատ տաճարներ կառուցեիք այստեղ»:[6]

ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ

1898. Երկու ՎՕՍ ծառայող անդամներ քարոզում են ավետարանը Ֆիլիպպիններում Իսպանո-Ամերիկյան պատերազմի ընթացքում

1944–45. Ավելի շատ ՎՕՍ ծառայության անդամներ են քարոզում II Հաանաշխարհային Պատերազմի ժամանակ

1946. Անիսետա Ֆաջարդոն դառնում է առաջին հայտնի մկրտված և հաստատված Ֆիլիպպինցի Եկեղեցու անդամը:

1955. Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը նվիրագործում է Ֆիլիպպինները ավետարանի քարոզման հանար

ՖՈՏՈԳՐԱՖԻԱՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ISTOCKPHOTO/THINKSTOCK

Նախագահ Հինքլին՝ այդ ժամանակ Առաջին Նախագահության Երկրորդ խորհրդականը, ղեկավարում էր ծառայությունները երեքշաբթի, 1984 թվականի սեպտեմբերի 25-ին՝ դնելու անկյունաքարը: Հետևեցին ինքն նվիրագործման նիստեր, որոնք տեղի ունեցան սելեստիալ սենյակում: Խաղաղօվկիանոսյան Տարածքի մոտ 6,500 Սրբեր 16 ցցերից և 22 շրջաններից մասնակցեցին տարբեր նիստերի:

Վերջին նվիրագործման նիստն ավարտվելուն պես Պաոլո Վ. Մալիթ Կրտ.ը և Էդնա Ա. Յասոնան դարձան առաջին զույգը, ովքեր ամուսնացան Մանիլա Ֆիլիպպինների Տաճարում, վաճառել իրենց տունը՝ վճարելու ուղևորության համար, որպեսզի նրանք և իրենց երեխաները կարողանային կնքվել որպես հավերժական ընտանիք: Իրենց տունը և իրենց ունեցվածքի մեծ մասը վաճառելուց հետո, նրանք կարողացան հավաքել ճիշտ այնքան գումար, որ վճարեին դեպի Մանիլա նավի ճանապարհածախսը՝ իրենց ինը հոգուց բաղկացած ընտանիքի համար: Լեոնիդեսը անհանգստացած էր, որովհետև նրանք տուն չէին ունենա վերադառնալիս: Բայց Բերնարդոն հավաստիացրեց նրան, որ Տերը կապահովեր: Նրանք կնքվեցին որպես ընտանիք ժամանակի և ողջ հավերժության համար

1961. Ֆիլիպպինները պաշտոնապես բացվում է միսիոներական աշխատանքի համար, ժամանում են առաջին չորս միսիոներները

1967. Կազմակերպվում է Ֆիլիպպինների Միսիան

1973. Կազմակերպվում է Ֆիլիպպինների Մանիլայի Ցիցը

1974. Ֆիլիպպինների Միսիան բաժանվում է՝ ստեղծվում է Ֆիլիպպինների Մանիլայի Միսիան և Ֆիլիպպինների Սեբու քաղաքի Միսիան

1975. Առաջին տաղաձքային համաժողովը տեղի է ունենում Մանիլայում

1983. Մանիլայում բացվում է միսիոներական ուսուցման կենտրոն

1984 թվականի սեպտեմբերի 27-ին: Այդ տաճարի առաջին նախագահը Վ. Գարթ Անդրուսը, վեհացրեց ամուսնության ծիսակատարությունը:

Եկեղեցու անդամների բազմություններ հերթ էին կանգնել ստանալու իրենց օժտումները, սկսած արարողապետերից: Տաճարային աշխատանքը շարունակվեց ողջ գիշեր՝ մինչև մյուս օրը:

Անդամները տաճար մտնելու աճող ցանկություն էին զգում: Նրանք, ովքեր հեռու էին ապրում Մանիլայից, ստիպված էին շատ բան զոհաբերել ճանապարհորդելու այդ մեծ տարածությունը՝ մակույկով կամ ավտոբուսով:

Ջեներալ Սանտոսից Բերնարդոյի և Լեոնիդես Օբեդոզայի համար հեռավոր Մանիլա տաճար գնալը անհնարին էր թվում: Բայց այն վաճառականի նման, որը գնաց և վաճառեց այն ամենը, ինչ ուներ՝ գնելու թանկարժեք մարգարիտը (տես Մատթեոս ԺԳ.45–46), այս զույգը որոշեց

Սփոփող Միության ժողովը, որը նվիրված էր արտակարգ իրավիճակների համար նախապատրաստվածությանը, տալիս է արժեքավոր տեղեկություններ քույրերի համար, ովքեր ապրում են մի երկրում, որը բնական աղետների հակում ունի:

ՖԻԼԻՊՊԻՆՆԵՐՈՒՄ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԱՃԸ

Եկեղեցու ընդհանուր անդամությունը՝ 675 166*

Ծխեր և ճյուղեր՝ 1, 134

Միսիաներ՝ 17

Տաճարներ՝ 2 (մյուսը կառուցման ընթացքում է)

Ընտանեկան պատմության կենտրոններ՝ 167

** Ըստ 2013թ. տվյալների*

տաճարում 1985 թվականին: Այն արժեր ամեն զոհաբերություն, որ նրանք արեցին, քանի որ տաճարում նրանք գտան ուրախություն, որն անզուգական էր՝ իրենց անգին մարգարիտը: Եվ Բերնարդոյի խոսքերի համաձայն, Տերն իսկապես ապահովեց: Մանիլայից վերադառնալուց հետո, բարի ծանոթները նրանց մնալու տեղ տվեցին: Նրանց երեխաներն ավարտեցին իրենց դպրոցը և ընտանիքը ի վերջո ձեռք բերեց իրենց սեփական տունը նոր վայրում:

2006 թվականի ապրիլի 18-ին Առաջին Նախագահությունը հայտարարեց Ֆիլիպպիններում Սեբու քաղաքի Տաճարի կառուցման մասին: Այդ նորությունը լսելով շատ Եկեղեցու անդամներ ուրախության արցունքներ թափեցին: «Մենք օրհնված ենք, որովհետև Տերն ընտրել է Սեբու քաղաքը՝ լինելու հաջորդ տաճարի

1984. Նվիրագործվում է Ֆիլիպպինների Մանիլայի Տաճարը

1987. Հիմնադրվում է Ֆիլիպպիններ/Միկրոնեզիա Տարածքը, վարչությունը Մանիլայում



1987.Մորմոնի Գրքից մասեր են թարգմանվում Տագալոգով

2010. Նվիրագործվում է Ֆիլիպպինների Սեբու քաղաքի Տաճարը

վայրը»,- ասաց Սեզար Պերես Կրտ.-ը՝ Սեբու քաղաքի Կրոնի Ինստիտուտի տնօրենը:

Ֆիլիպպիններում Սեբու քաղաքի Տաճարի նվիրագործումից մի քանի ամիս հետո, Ֆիլիպպինցի Վերջին Օրերի Սրբերը մեկ անգամ ևս ուրախանալու պատճառ ունեցան: 2010 թվականի հոկտեմբերի 2-ին իր բացիչ խոսքի ժամանակ գերագույն համաժողովում Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հայտարարեց Ուրդանետայի Ֆիլիպպինների Տաճարի կառուցման մասին:

Լավագույնը դեռ պիտի գա

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Ֆիլիպպիններում համեմատաբար երիտասարդ է, համեմատած մյուս երկրներում նրա ներկայության հետ, բայց նրա ճակատագիրը կղզու ազգաբնակչության համար փառահեղ է: Եկեղեցու աճը սքանչելի է եղել և լավագույնը դեռ պիտի գա: Երեց Մայքլ Ջոն Ու. Թեհը՝ Յոթանասունից, երկրորդ Ֆիլիպպինցին, որը կանչվել է ծառայելու որպես Գերագույն Իշխանավոր, ասել է. «Մենք [Ֆիլիպպինցի Վերջին Օրերի Սրբերս] պետք է հոգեպես ավելի լավ պատրաստվենք, քան երբևէ նախկինում, որովհետև աշխատանքը առաջ կշարժվի մեր կամ առանց մեր օգնության»:[7]

Իսկապես մինչ 21-րդ դարն առաջ է գլորվում, վերականգնված Եկեղեցին կշարունակի աճել չափերով և ազդեցությամբ, երբ ավելի ու ավելի շատ Ֆիլիպպինցիներ կընդունեն նրա ուղերձը և կդառնան օրհնություն այս ընտիր ժողովրդի համար ծովի կղզիների վրա: Երեց Թեհի և ֆիլիպպինցի Սրբերի համար այժմ իրականանում են «Տիրոջ . . . մեծ խոստումները նրանց համար, ովքեր ծովի կղզիների վրա են» (2 Նեփի 10.21): ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Augusto A. Lim, in R. Lanier Britsch, "'Faithful, Good, Virtuous, True': Pioneers in the Philippines," *Liahona,* Feb. 1998, 44.
2. Augusto Lim, in Gelene Tobias, "Augusto Lim: The Man of Many Firsts," countrywebsites.lds.org/ph/index.php/dateline-philippines/jubilee-2011.
3. See Sheri L. Dew, *Go Forward with Faith: The Biography of Gordon B. Hinckley* (1996), 213–15.
4. Gordon B. Hinckley, "Commencement of Missionary Work in the Philippines," *Tambuli,* Apr. 1991, 18.
5. Interview of Kent Clyde Lowe by James Neil Clark, Sept. 3, 2007.
6. Francis M. Orquiola, "Temple Dedication Rewards Faith of Filipino Saints," *Ensign,* Nov. 1984, 107.
7. Michael John U. Teh, "Scriptures and Spiritual Preparation" [Area Presidency Messages, May 2011]; lds.org.ph/index.php/literature.



ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Օգտագործել հարցերին պատասխանելու համար

Լա Ռեն Փորթեր Գանթ
Եկեղեցու ամսագրեր

Մենք ապրում ենք հուզումնալի ժամանակներում: Հիսուս Քրիստոսի վերականգված ավետարանը «խավարից դուրս» է գալիս (ՎԵՌՈՒ 1.30): Արդյունքում ավելի շատ Երկնային Հոր զավակներ, ովքեր մեր հավատքից չեն, լսում են «Մորմոնների» մասին: Ոմանք լսում են բաներ, որոնք տարօրինակ են թվում և շփոթեցնող: Մյուսները լսում են բաներ, որոնք ծանոթ են երևում և սփոփող: Երկու խմբի անդամներն էլ կարող են գալ մեզ մոտ՝ որոնելով պատասխաններ իրենց հարցերին: Շատ պատասխաններ գտնվում են փրկության ծրագրում, որը նաև հայտնի է որպես «երջանկության մեծ ծրագիր» (Ալմա 42.8):

Ամենահաճախ տրվող հարցերից երեքն են՝ «Ես որտեղի՞ց եմ եկել», «Ինչո՞ւ եմ այստեղ» և «Ո՞ւր եմ գնալու այս կյանքից հետո»: Բոլոր այս հարցերը կարող են պատասխանվել փրկության ծրագրում գտնվող ճշմարտություններով: Այս հոդվածը ներկայացնում է որոշ պատասխաններ, որոնք սուրբ գրությունները և մերմարգարե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն են տվել այդ հարցերի վերաբերյալ:

Հավատք առ Հիսուս Քրիստոս
Ապաշխարություն

ՆԱՐՈՒԱՐԴՈՒՄՆԵՐԸ ՈՐԵՐՏ ԱԴԱՄՈՒՆ

Որտեղի՞ց եմ ես եկել:

Մենք հավերժական էակներ ենք: Մենք ապրել ենք Աստծո հետ այս կյանքից առաջ որպես Նրա հոգևոր զավակներ: «Պողոս Առաքյալն [ուսուցանել է], որ «մենք Աստուծոյ ազգիցն ենք» [Գործք ԺԷ.29]», ասել է Նախագահ Մոնսոնը: «Որովհետև գիտենք, որ մեր ֆիզիկական մարմինները մեր մահկանացու ծնողների ժառանգներն են, մենք պետք է մանրամասն քննենք Պողոսի խոսքերի նշանակությունը: Տերը հայտարարել է, որ «ոգին ու մարմինը՝ մարդու հոգին են»: Ուստի, հոգին Աստծո ժառանգն է: Եբրայեցիների գրողը Նրան անվանում է՝ «հոգիների Հայր»: Բոլոր մարդկանց հոգիները Նրա «ծնված որդիներն ու դուստրերն են» [ՎԵՈՒ 88.15]: Այսպիսով հոգին է, որ Աստծո զավակն է: Եբրայեցիս գրքի գրողն ակնարկում է Նրան որպես «հոգիների Հայր» [Եբրայեցիս ԺԲ.9]:[1]

Ինչո՞ւ եմ ես այստեղ:

Նախագահ Մոնսոնը երկրի վրա մեր կյանքի մասին ասել է. Որքան երախտապարտ պետք է լինենք մենք, որ իմաստուն Արարիչը ստեղծեց Երկիրը և մեզ դրեց այստեղ մոռացության վարագույրով առանձնացնելով նախկին գոյությունից, որպեսզի անցնենք ժամանակի փորձությունով, փորձվելու հնարավորություն ունենանք, և արժանի դառնանք ստանալու այն ամենը, ինչ Աստված պատրաստել է մեզ համար:

Երկրի վրա մեր գոյության կարևոր նպատակն է՝ ձեռք բերել մսից ու ոսկորներից մարմին: Մեզ նաև տրվեց ազատ կամքի պարգևը: Հազարավոր միջոցներով, մենք արտոնություն ունենք ինքնուրույն ընտրելու: Այստեղ մենք սովորում ենք մեր կյանքի դժվար փորձառություններից: Մենք տարբերում ենք բարին չարից: Մենք տարբերում ենք, որն է դառը, և որը քաղցր: Մենք հայտնագործում ենք, որ մեր գործողություններին հաջորդում են հետևանքներ»:[2]

Ո՞ւր եմ գնալու այս կյանքից հետո:

Մահը գալիս է մարդկային ընտանիքի բոլոր անդամներին: Բայց «եթէ մարդս մեռաւ, մի՞թէ կկենդանա յ» Հոբ ԺԴ.14): «Մենք գիտենք, որ մահը վերջը չէ», ասել է Նախագահ Մոնսոնը: «Այս ճշմարտությունն ուսուցանվել է ապրող մարգարեների կողմից դարերի ընթացքում»: Այն նաև գտնվում է մեր սուրբ գրություններում: Մորմոնի Գրքում մենք կարդում ենք առանձնահատուկ և սփոփող խոսքեր.

Երբ ուրիշները հարցեր են ունենում Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին, արդյոք մենք գիտե՞նք, թե որտեղ պետք է գտնենք այդ հարցերի պատասխանները:

ՈՐՏԵՂԻ՞Ց ԿԱՐՈՂ ԵՄ ԱՎԵԼԻՆ ՍՈՎՈՐԵԼ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ:

1. Փրկության ծրագրի մասին ուսուցանվում է առավել պարզ ձևով Մորմոնի Գրքում, Վարդապետություն և Ուխտերում և Թանկագին Մարգարիտում:
2. Ապրող մարգարեների խոսքերը գտնվում են conference.lds.org ում: Դուք կարող եք որոնել բառակապակցություններով, ինչպիսիք են՝ փրկության ծրագիր, երջանկության ծրագիր, քավություն, վեհացում, արդարադատություն և ողորմածություն, ապաշխարություն և հարություն:
3. Տես «Դաս 2. Փրկության Ծրագիր», գլուխ 3, *Քարոզիր Իմ Ավետարանը. Միսիոներական Ծառայության Ուղեցույց:*

«Այժմ, հոգու վիճակի վերաբերյալ մահվան և հարության միջև: Ահա, ինձ համար հայտնի դարձվեց հրեշտակի կողմից, որ բոլոր մարդկանց հոգիները, հենց որ նրանք հեռանում են այս մահկանացու մարմնից, այո, բոլոր մարդկանց հոգիները՝ լինեն նրանք բարի, թե չար, տարվում են տուն՝ այն Աստծո մոտ, որը նրանց կյանք էր տվել:

Եվ հետո պիտի լինի այնպես, որ նրանց հոգիները, ովքեր արդար են, ընդունվում են երջանկության մի վիճակի մեջ, որը կոչվում է դրախտ՝ հանգստության մի վիճակ, խաղաղության մի վիճակ, որտեղ նրանք պիտի հանգստանան բոլոր իրենց տագնապներից և բոլոր մտահոգություններից, և վշտից»: [Ալմա 40.11–12]»:[3]

Մեր հարությունից հետո, մենք գնում ենք սելեստիալ արքայություն՝ արևի փառքի նման, թերեստրիալ արքայություն՝ լուսնի փառքի նման, թելեստիալ արքայություն՝ աստղերի փառքի նման, կամ արտաքին խավար (տես ՎԿՈՒ 76):

Իրականում կա՞ Աստված: Միթե՞ սատանան իրական է:

Երկնային Հայրը, Հիսուս Քրիստոսը և սատանան բոլորը Երկնային մեծ Խորհրդի մասն էին կազմում, որը տեղի ունեցավ նախքան մեր ծնվելը: Որպես Փրկության ծրագրի մաս Երկնային Հայրը խնդրեց մեկին գնալ երկիր և քավել մեր մեղքերի համար: Նա ասաց. «Ո՞ւմ ուղարկեմ: Եվ մեկը [Հիսուս Քրիստոսը] Մարդու Որդու նման պատասխանեց. «Ահա ես, ինձ ուղարկիր: Եվ մեկ ուրիշը [սատանան] պատասխանեց և ասաց. «Ահա ես, ինձ ուղարկիր»: Եվ Տերն ասաց. Ես կուղարկեմ առաջինին:

Եվ երկրորդը բարկացավ, և չպահեց իր առաջին վիճակը. և այդ օրը շատերը հետևեցին նրան» (Աբրահամ 3.27–28, տես նաև ՎԿՈՒ 29.36–37, Մովսես 4.1–4):

Արդյոք մենք ունե՞նք իշխանություն դիմադրելու սատանայի գայթակղություններին:

Ոգիների մեկ երրորդը, ովքեր ընտրեցին հետևել սատանային, Երկնային խորհրդից հետո, նրա հետ դուրս գցվեցին: Նրանք և սատանան մնում են ոգիներ առանց ֆիզիկական մարմինների: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է. «Բոլոր էակները, ովքեր մարմիններ ունեն, իշխանություն ունեն նրանց վրա, ովքեր մարմին չունեն:[4] Ուստի սատանան կարող է գայթակղել մեզ, բայց մենք իշխանություն ունենք դիմադրելու:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴՈՍՈՍՈՏ

Ինչո՞ւ է երբեմն այնպես թվում, որ Երկնային Հայրը չի պատասխանում իմ աղոթքներին:

«Աղոթքը այն գործողությունն է, որի միջոցով Հոր կամքը և զավակի կամքը բերվում են համապատասխանության մեկը մյուսի հետ: Աղոթքի նպատակը Աստծո կամքը փոխելը չէ» (Սուրբ Գրքերի ուղեցույց «Աղոթք», էջ 7): Աղոթքը մի միջոց է, որն օգնում է մեզ որոշել, թե արդյոք մենք կօգտագործենք մեր ազատ կամքը՝ համաձայնեցնելու մեր կամքը Աստծո հետ (տես Աբրահամ 3.25): Երկնային Հայրը միշտ պատասխանում է մեր աղոթքներին, բայց այդ պատասխանները կարող են գալ այո, ոչ կամ դեռ ոչ-ի տեսքով: Ժամանակը կարևոր է:

Ինչո՞ւ եմ ես մարտահրավերներ ունենում, երբ ես ձգտում եմ ապրել լավ կյանքով:

Մարտահրավերները փրկության ծրագրի մասն են կազմում: Դրանք մեզ ավելի ուժեղ են դարձնում, զտում մեզ և մաքրագործում են մեզ, երբ մենք ապավինում ենք Հիսուս Քրիստոսին և Նրա ավետարանին: Երկնային Հայրը օգնում է մեզ մեր մարտահրավերների ընթացքում: Մեր փորձությունները «կտան [մեզ] փորձառություն, և կլինեն [մեր] օգտի համար» (ՎևՈՒ 122.7):

Ինչպե՞ս կարող եմ իմանալ, թե ինչն է ճիշտ և ինչը սխալ:

Բոլոր Աստծո զավակները ծնվել են Քրիստոսի Լույսով, որն օգնում է մեզ «բարին տարբերել չարից» (Մորոնի 7.16): Բացի այդ Սուրբ Հոգին կարող է վկայություն բերել մեզ ճշմարտության մասին մեր մտքում և սրտում խաղաղության և ջերմության զգացումներով (տես ՎևՈՒ 8.2–3):

Կարո՞ղ եմ ներվել, նույնիսկ, եթե լուրջ սխալ եմ գործել:

Աստված գիտեր, որ մենք բոլորս կմեղանչենք, երբ սովորում էինք տարբերել ճիշտը սխալից:[5] Այնուամենայնիվ բոլոր մեղքերը ունեն իրենց կցված պատիժ: Արդարադատությունը պահանջում է, որ պատիժը տարվի: Իր ողորմածությամբ Երկնային Հայրը թույլ տվեց Հիսուս Քրիստոսին Քավություն կատարել և բավարարել արդարադատության պահանջները մեզ բոլորիս համար (տես Ալմա 42): Այլ խոսքով Քրիստոսի տառապանքը Գեթսեմանիում և մահը Գողգոթայում վճարեց գինը բոլոր մեր մեղքերի համար, եթե մենք հասնենք Քրիստոսի Քավությանը ապաշխարելով և ընդունելով ավետարանի արարողությունները: Մեր մեղքերը կներվեն (տես ՎևՈՒ 1.31–32): ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թոմաս Ս. Մոնսոն, «Կյանքի մրցավազք», *Լիահոնա,* մայիս 2012, 91, տես նաև Աբրահամ 3.22–26:
2. Թոմաս Ս. Մոնսոն, «Կյանքի մրցավազք», 91–92, տես նաև Ալմա 34.32–34:
3. Թոմաս Ս. Մոնսոն, «Կյանքի մրցավազք», 93, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 76.59–111:
4. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 379:
5. Փոքր երեխաները չեն կարող մեղանչել, «մինչև նրանք հաշվետու չդառնան» (տես ՎևՈՒ 29.46–47):

ԻՆՉՊԵ՞Ս ԷԻՆ ՆՐԱՆՔ ԻՄԱՑԵԼ

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը՝ Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդականը, մի ուղերձ հղեց Սփոփող Միության քույրերին 2011 թվականի Սփոփող Միության գերագույն ժողովում, որը հուզեց իմ սիրտը և տվեց ինձ խաղաղություն: Նա խոսեց անմոռուկ փոքրիկ ծաղկի մասին և թե ինչպես դրա հինգ թերթիկները ներկայացնում են հինգ բաներ, որոնք մենք պետք է միշտ հիշենք:[1]

Ժողովից հետո իմ դուստր Ալիսան պատմեց ինձ մի պատմություն իր ընկերուհի Ջեսսիի մասին, որը փոքր հասարակական սննդի սպասարկման բիզնես ուներ: Սփոփող Միության ղեկավարները Ջեսսիին խնդրվել էին աղանդեր պատրաստել՝ Սփոփող Միության գերագույն ժողովից հետո մատուցելու համար: Ջեսսին ասաց Ալիսային, որ անմիջապես հասկացել էր, թե ինչ պետք է պատրաստեր՝ 250 կեքս: Ալիսան կամավոր օգնեց տեղափոխել կեքսերը ցցի կենտրոն:

Ժողովի օրը եկավ, և երբ Ալիսան գնաց օգնելու, նա Ջեսսիին գրեթե արտասվելիս գտավ: Կեքսերը պատրաստ էին, բայց Ջեսսին ուղարկել էր դրանց նկարը իր մի բարեկամին, որն ասել էր, որ դրանք բավականաչափ շքեղ չէին ժողովի համար:

Ջեսսին սկսեց իրեն կասկածել: Նա եզրակացրեց, որ ցցի Սփոփող Միության ղեկավարները գուցե կակնկալեին ինչ որ ավելի նրբաճաշակ մի բան, քան իր հասարակ կեքսերը: Նա համառորեն փորձում էր մի ուղի գտնել վերազարդարելու կեքսերը, բայց ժամանակ չկար: Նա և Ալիսան վերցրեցին կեքսերը ինչպես որ կային, զգալով, որ քույրերին հիասթափություն էին պատճառելու, մինչև սկսեց խոսել Նախագահ Ուխդորֆը:

Երբ նա խոսեց փոքրիկ անմոռուկ ծաղկի մասին, այդ փոքրիկ կապույտ ծաղկի նկարը հայտնվեց էկրանին: Դա այնքան հասարակ ծաղիկ էր, բայց այնքան գեղեցիկ իր նրբորեն ճյուղավորված թերթիկներով: Նախագահ Ուխդորֆի ուղերձը հուզեց բոլորի սրտերը, երբ նա աղերսեց մեզ շատ չկլանվել մեր շրջապատում գտնվող մեծ արտասովոր ծաղիկներով, և մոռանանք հինգ պարզ, բայց կարևոր ճշմարտությունները, որոնք նա ուսուցանում էր մեզ:

Փակիչ աղոթքից հետո քույրերն իրենց քայլերն ուղղեցին դեպի մշակութային դահլիճ: Երբ Ալիսան և Ջեսսին ներս մտան, նրանք բոլորին գտան դեսերտի սեղանի շուրջ կանգնած և հարցնելիս. «Նրանք ինչպե՞ս էին իմացել»:

Յուրաքանչյուր կեքս պատված էր սպիտակ խիտ շաքարահյութով և զարդարված մեկ հասարակ, գեղեցիկ, նուրբ, հնգաթերթիկ անմոռուկ ծաղկով: ■

Գեյլ Աշքրոֆթ, Արիզոնա, ԱՄՆ

Կեքսերը պատրաստ էին, բայց Ջեսսին ուղարկել էր դրանց նկարը իր մի բարեկամին, որն ասել էր, որ դրանք բավականաչափ շքեղ չէին Սփոփող Միության ժողովի համար:

ՀՂՈՒՄ

1. Տես Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Անմոռուկ», *Լիահոնա,* նոյ. 2011, 120:

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ

ԽՈՍՏՈՒՄՆ ԻՆՁ ՀՈՒՅՍ ՏՎԵՑ

Ամուսնուս հետ ամուսնանալուց հետո, մենք շուտով օրհնվեցինք՝ ունենալով որդի: Երբ ես նայում էի նրա ժպիտին և նայում նրա աչքերի մեջ, ես պարտական էի զգում Երկնային Հորը: Մեր որդին ինձ կատարյալ էր թվում: Ամուսինս և ես շնորհակալություն էինք հայտնում Տիրոջն ամեն օր՝ այդպիսի թանկարժեք նվերի համար:

2009 թվականի փետրվարի 19-ին հավաքեցի իրերս վերադառնալու համալսարան ավարտական տարվա դասերիս համար: Ամուսինս և ես չգիտեինք, որ հաջորդ օրը մեր սիրելի որդին տենդի մեջ կընկնի և կհեռանա այս մահկանացու կյանքից:

Ինձ համար դժվար էր դիմանալ այդ փորձությանը: Մեր ծխի անդամները եկան մեր տուն մեզ մխիթարելու սուրբ գրություններով և օրհներգերով և աղոթելու մեզ հետ: Ես շնորհակալ էի նրանց գթառատ ցավակցությունների համար, բայց իմ վիշտը որդուս համար մնում էր: Երբ որ նրա մասին մտածում էի, աչքերս ծանրանում էին արցունքներից:

Նրա մահից չորս օր անց ես ոգեշնչվեցի ուսումնասիրել *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ:* Երբ գիրքը ձեռքս էի վերցրել, բացվեց «Մխիթարության և հույսի խոսքեր մահվան ժամանակ» գլուխը: Ես սկսեցի կարդալ և խորապես ազդվեցի Ջոզեֆի և Էմմայի ողբերգական կորուստներից, որ նրանք տարան, երբ նրանք սկսում էին իրենց ընտանիքը: Երբ ես հասա այն հատվածին, որտեղ Մարգարեն մահախոսական էր ասել երկու տարեկան աղջկա թաղմանը, ես զգացի, որ կարծես սառը ջուր լցրեցին գլխիս, հովացնելով իմ վշտահար մտքերը:

Ես կանչեցի ամուսնուս: Մենք կարդացինք միասին. «Ես . . . տվել եմ այդ հարցը, թե ինչու են մանկիկները, անմեղ երեխաները վերցվում մեզանից: . . . Տերը շատերին է տանում, նույնիսկ մանուկ հասակում, որ նրանք խուսափեն . . . այս ներկա աշխարհի վշտերից ու չարիքից, նրանք շատ մաքուր են, շատ զեղեցիկ երկրի վրա ապրելու համար, ուստի, եթե ճիշտ մտածենք, սգալու փոխարեն մենք պատճառ ունենք ուրախանալու, երբ նրանք ազատվում են չարից, և շուտով մենք նրանց կրկին կունենանք»:

Մարգարեն ավելացնում է. «Կարող է հարց տրվի. «Արդյո՞ք մայրերը կունենան իրենց զավակներին հավերժության մեջ»: Այո, Այո, Մայրեր, դուք կունենաք ձեր երեխաներին, քանի որ նրանք կունենան հավերժական կյանք, քանի որ նրանց համար պարտքը վճարված է»:[1]

Այն ժամանակից ի վեր, ինչ մենք կարդացինք այդ գեղեցիկ խոսքերը, մեր ընտանեկան աղոթքները լցվեցին շնորհակալությամբ այն խոստման համար, որ Հիսուս Քրիստոսի Քավությամբ մենք կրկին կլինենք մեր որդու հետ:

Այսօր մենք ունենք երեք սքանչելի երեխաներ, եղբայր և քույր մեր մահացած որդու համար: Մենք ուսուցանում ենք նրանց ճշմարիտ և հավիտենական ավետարանը, որը կառաջնորդի նրանց ետ՝ դեպի իրենց Երկնային Հայրը և դեպի նրանց Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը:

Ես գիտեմ, որ մահից հետո կյանքի մասին Մարգարե Ջոզեֆ Սմիթի ուղերձը ճշմարիտ է: Ես երախտապարտ կլինեմ հավիտյան այն հույսի, խաղաղության, ուրախության և երջանկության համար, որ այն բերում է մեր ընտանիք—վարագույրի երկու կողմում էլ: ■

Ջուլիանա Ֆեյեհան, Լագոս, Նիգերիա

ՀՂՈՒՄ

1. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 142:

Երբ գիրքը ձեռքս էի վերցրել, բացվեց «Մխիթարության և հույսի խոսքեր մահվան ժամանակ» գլուխը:

ԵՍ ԿԻՍՎԵԼՈՒ ՇԱՏ ԲԱՆ ՈՒՆԵԻ

Ես միշտ մտածել էի արտակարգ իրավիճակներին պատրաստված լինելու մասին, որ կարողանայի հոգ տանել իմ ընտանիքի և իմ մասին: Սակայն 1992թ. մի կիրակի հարավային Ֆլորիդայում սովորեցի այլ տեսանկյունից նայել պատրաստվածությանը: Էնդյրու փոթորիկը, որը Միացյալ Նահանգների համար ամենակործանարար և մեծ վնասներ հասցնող փոթորիկներից մեկն էր, վրա հասավ մի գեղեցիկ ամառային օր Մայամիում, Ֆլորիդա:

Ես ժամանակավորապես միայնակ ապրում էի ծովափնյա բնակարանում և մասնակցում էի եռամսյա վերապատրաստման ծրագրին: Երբ փոթորկի նախազգուշացումը եկավ, տեղեկացնելով, որ պետք է մինչև կեսօր էվակուացնեինք մեր բնակարանային համալիրը, մեր գործընկերը հյուրանոցային համարներ էր պատվիրել բոլոր աշխատակիցների և ինձ համար: Ես փակեցի իմ պատուհանները և հավաքեցի իմ անձնական իրերը:

Նախապատրաստվելով կնոջս և երեխաներիս մեկշաբաթյա այցին՝ նախորոք բավականին ուտելիք և ջուր էի գնել իմ վեցհոգանոց ընտանիքի համար: Անհանգստությունս անցավ, երբ իմացա, որ ապահով վայր եմ գնալու և ունեի այնքան ուտելիք, որ մի քանի շաբաթ կբավարարեր:

Երբ 10:30-ին պատրաստվում էի դուրս գալ բնակարանից, զգացի, որ ամեն ինչ կարգին էր: Ծնկի իջա՝ աղոթքով շնորհակալություն հայտնելով Երկնային Հորը իմ օրհնությունների համար և խնդրելով Նրա օգնությունը սպասվող փոթորկի ժամանակ: Երբ աղոթքս ավարտում էի, Հոգին հուշեց ինձ ասել. «Եթե կա մեկը, որն օգնության կարիք ունի, խնդրում եմ օգնիր ինձ գտնել նրան»:

Մի քանի րոպե չէր անցել, երբ իմ դուռը թակեց 80-ն անց մի այրի: «Կներեք,- ասաց նա,- ես շփոթել եմ սենյակը: Ես ընկերոջս եմ փնտրում»:

Նա հյուծված տեսք ուներ: Երբ հարցրեցի, թե ինչով կարող եմ օգնել, նա շփոթված ասաց, որ չգիտի՝ ինչ անի և ուր գնա: Ես հարցրեցի, թե որտեղ է ապրում, և մենք միասին գնացինք նրա բնակարան, գնահատեցինք իրավիճակը և արագ դիտարկեցինք նրա տարբերակները:

Ես ասացի նրան, որ իմ ընկերությունը գուցե կարողանա հյուրանոցի սենյակներից մեկում տեղ հատկացնել իրեն և հրավիրեցի նրան մնալ մեր խմբի հետ: Նա թեթևացած շունչ քաշեց: Մենք արագ հավաքեցինք նրա իրերը, ապահով փակեցինք բնակարանը և ես մեր աշխատակիցներից մեկին խնդրեցի նրա մեքենան հյուրանոց տանել:

Երբ պատրաստվում էի հեռանալ, երկու այրիներ ևս օգնություն խնդրեցին: Ես օգնեցի, որ նրանք հանգստանային և կարողանային հստակ մտածել, թե որտեղ կարող էին ապաստան գտնել: Երբ վերցնում էի իմ աշխատակիցներից մեկի իրերը, մեկ այլ տարեց այրի օգնություն խնդրեց: Մենք նրա կոտրվող իրերը ապահով տեղում դրեցինք և օգնեցինք նրան հեռանալ:

Միևնույն ժամանակ մեր մյուս աշխատակիցները հրավիրեցին ափին ապրող երկու ուսանողների մեր խմբի հետ հյուրանոցում մնալ: Նրանք ունեին միայն երկու բաժին նախաճաշիկ և մոտ մեկ լիտր հանքային ջուր: Բարեբախտաբար, ես կիսվելու շատ բան ունեի, ոչ միայն նրանց, այլև մյուսների հետ:

Ինչպիսի՜ օրհնություն էր՝ պատրաստվել և առաջնորդվել Տիրոջ կողմից: Դա ինձ հնարավորություն տվեց հանգստացնել մյուսներին տագնապի պահին և չմտածելով իմ մասին գրեթե ողջ ժամանակս ծախսել՝ օգնելով մյուսներին: Ես առավել քան երախտապարտ էի մեր քահանայության ղեկավարների կողմից տրված պատրաստված լինելու խորհրդի համար: ■

Բրենթ Ֆիշեր, Կալիֆոռնիա, ԱՄՆ

Երբ հարցրեցի, թե ինչով կարող եմ օգնել, այդ կինը շփոթված ասաց, որ չգիտի՝ ինչ անի և ուր գնա:

ՍՊԱՍԵԼՈՎ ԱՐԵՎԱԾԱԳԻՆ

Մթության մեջ ստվերներն ընկան սենյակի մեջ, երբ ես արթուն պառկած ականջ դրած ամուսնուս շնչառությանը, փորձում էի պարզել քնած է նա, թե ոչ: Երկու օր առաջ էր մեր 12-ամյա դուստրը մահացել անսպասելի վթարի ժամանակ: Կրկին փակեցի աչքերս, բայց քունս փախել էր: Այնքան էի կարոտում դստերս: Փրկության ծրագրի մասին ողջ գիտելիքը չէր օգնում, որ թեթևացներ նրա կորստի ցավը:

Լուսաբացին մոտ, ուժեղ կարոտը համակեց սիրտս: Շուտով արևը ծագելու էր, և ես մտովի տեսա վարդագույն լույսով պատված երկինքը: Դուստրս սիրում էր վարդագույնը: Վարդագույն արևածագը կօգներ ինձ կրկին մոտ զգալ նրան:

«Արի գնանք արևածագը դիտելու», - ասացի քնաթաթախ ամուսնուս:

Մենք դուրս եկանք բակ, շրջվեցինք դեպի արևելք և սպասեցինք . . . ու սպասեցինք: Թեպետ երկինքը լուսավորվում էր, սակայն արևը դուրս չէր գալիս ներքև կախված ամպերից:

Ես գլուխս դրեցի ամուսնուս ուսին և հոգոց հանեցի, փորձելով ձևացնել, որ դա կարևոր չէ: Բայց ես ավելին էի ուզում: Անշուշտ, Երկնային Հայրը կարող էր իրականացնել իմ ցանկությունը, մեր սիրելի դստերը Իր մոտ՝ տուն տանելուց հետո:

Երբ ամուսինս շրջվեց, որ տուն գնա, հայացքը դարձնելով դեպի արևմուտք, հանկարծ նա ասաց՝ նայի՛ր:

Ես շրջվեցի: Մեր ետևում ամպերը նուրբ շիկնել էին՝ ոսկեգույն լույսով օղակված: Նայում էի շունչս պահած և աչքերս արցունքով լցված: Դա ավելի գեղեցիկ էր, քան կարող էի պատկերացնել: Կարծես դուստրս փարվել էր մեզ: Ես գիտեի, որ Երկնային Հայրը տեղյակ է իմ կեղեքվող սրտից և հույսի խոստում էր ուղարկում ապագայի համար, քնքշորեն հիշեցնելով մեզ հավերժական ընտանիքների և գալիք բոլոր գեղեցիկ պահերի մասին:

Ես հաճախ եմ մտածել այդ հրաշալի պահի և ինձ տրված նոր հույսի մասին: Ո՞վ է արևածագ փնտրում արևմուտքում: Սակայն այնտեղից էր գալու իմ հրաշքը: Որքա՞ն շատ օրհնություններ և հրաշքներ եմ ես բաց թողնում, որովհետև դրանք գալիս են անսպասելի վայրերից: Քանի՞ անգամ եմ կենտրոնանում այն ամենի վրա, ինչն, իմ կարծիքով, պետք է լինի, բաց թողնելով դրա բուն հրաշագեղությունը:

Մենք անդուլ աղոթել էինք հրաշքի համար, որը մերժվեց, սակայն իմ նոր տեսանկյունից նայելով շուրջս, տեսա մեր դստեր օրգանների նվիրատվությունների շնորհիվ չորս վերականգնված կյանքերի հրաշքը, ընտանիքի սիրո և ծխի միասնության հրաշքը, և ծառայության հրաշքը: Ես խորը ցավ եմ կրել, բայց յուրաքանչյուր պայծառ արևածագի և վարդագույն ծաղկի հետ՝ հզոր հույսը միշտ պարուրում է հոգիս:

Այժմ, արևածագին նախ նայում եմ արևելք, ապա շրջվում դեպի արևմուտք: Ես ժպտում եմ գիտակցելով, որ միշտ կարող ենք գտնել հրաշքներ և օրհնություններ, և որ արևը միշտ ցրում է մեր վիշտը, եթե մենք թույլ ենք տալիս: ■

Ջուլիա Վագներ, Օհայո, ԱՄՆ

Երբ ամուսինս շրջվեց, որ տուն գնա, հայացքը դարձնելով դեպի արևմուտք, հանկարծ նա ասաց՝ նայի՛ր: Մեր ետևում ամպերը նուրբ շիկնել էին՝ ոսկեգույն լույսով օղակված:



Ինչպե՞ս կարող է լեզվով, վարքով և տեսքով համեստ լինելն օգնել մեզ լույս ճառագել և Աստծուն փառաբանել:

Եթե ձեր աչքն ուղղված լինի միայն Իմ փառքին

Քեթրին Նելսոն և Հեյդի Մակքոնկի

Նախաերկրային կյանքում Երկնային Խորհրդի ժամանակ Հիսուս Քրիստոսը կամեցավ մեր Փրկիչը լինել, Նա ասաց Հորը. «Քո կամքը կատարվի, և փառքը քոնը լինի հավիտյան» (Մովսես 4.2):

Տերը միշտ Հորը փառաբանելու օրինակ է ծառայել: Իր երկրային ծառայության ժամանակ Փրկիչը երբեք Ինքն Իր վրա ուշադրություն չէր հրավիրում, այլ Իր հետևորդների ուշադրությունն ուղղում էր դեպի Հայրը, ուսուցանելով. «Ինձ հավատացողը չէ թե ինձ է հավատում, այլ ինձ ուղարկողին» (Հովհաննես 12.44): Իր վերաբերմունքով, տեսքով, խոսքով և գործերով Փրկիչն ուսուցանում էր մեզ համեստության կարևորությունը:

Փրկչին հետևելու իրենց նվիրվածության մեջ այս հոդվածի երիտասարդ չափահասները դրսևորում են իրենց ներքին և արտաքին համեստությունը և ներկայացնում են, թե ինչպես է Աստծուն փառաբանելու իրենց պարտավորությունը ձևավորել իրենց բնավորությունը և ուղղորդել գործերում:

Փառաբանել Աստծուն և լույս ճառագել

Մենք ավելի լավ ենք գիտակցում, ինչպես է համեստությունը փառաբանում Աստծուն, երբ հասկանում ենք, թե ինչ է իրականում համեստությունը: *Հավատքին հավատարիմ* ձեռնարկը բացատրում է. «Համեստությունը հագուստով, հարդարանքով, լեզվով և վարքով խոնարհ և պարկեշտ լինելն է: Եթե դուք համեստ եք, անտեղի ուշադրություն չեք գրավի ձեզ վրա: Փոխարենը, դուք կձգտեք «փառավորել Աստծուն ձեր մարմնում և ձեր հոգում» (Ա Կորնթացիս 6.20)»:[1]

Սովորելով համեստություն դրսևորել, ինչպես Փրկիչն էր անում, մենք մեր կյանք ենք բերում Հոգին, կատարելով խոստումը, որ՝ «եթե ձեր աչքն ուղղված լինի միայն [Աստծո] փառքին, ձեր ամբողջ մարմինը լցված կլինի լույսով» (ՎԿՈ 88.67): Կարդալով, թե ինչպես են մյուս երիտասարդ չափահասները հասկանում համեստությունը, դուք կիմանաք ինչպես ավելացնել ձեր հոգևոր լույսը՝ հղկելով ձեր վարքը և բարելավելով համեստություն դրսևորելու ձեր ներքին պարտավորությունը:

Եղեք համեստ լեզվով և վարքով

«Ձեր խոսքերն ու արարքները կարող են խորը ազդեցություն թողնել ձեր և ուրիշների վրա: Արտահայտվեք մաքուր, դրական, վեհացնող լեզվով, և այնպիսի գործերով, որոնք ուրախություն կպարգևեն ձեր շրջապատի մարդկանց: Խոսքով և գործով համեստ լինելու ձեր ջանքերի արդյունքում էլ ավելի կմեծանա Սուրբ Հոգու առաջնորդությունն ու սփոփանքը»:[2]

Ռուսաստանի Վոլգոգրադ քաղաքից Դարյա Սերգեևնա Շվիդկոն բացատրում է, որ մենք համեստ ենք մեր խոսքով, երբ հարգանքով ենք վերաբերվում մյուսներին և խոսում ենք «մեղմ ձայնով, արտահայտելով մեր մտքերը չօգտագործելով կոպիտ կամ անհարկի խոսքեր»: Համեստ լեզուն զերծ է բամբասանքից, խայթոցից, ծաղրանքից և հեգնանքից: Այն երբեք չի նսեմացնում մյուսներին կամ արժեզրկում անհատին, այն պարզապես արտահայտում է բարություն և ընդունում

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՈՒՄ ՀԱՓՈՒՄՆԵՐ

Երկնային Հոր բոլոր զավակների աստվածային էությունը:

Մեր խոսքով նաև հարգանք պետք է ցուցաբերենք Աստվածագլխի հանդեպ. «Խուսափեք կեղտոտ լեզվից և Տիրոջ անունն անտեղի, անհարգալից օգտագործելուց, որը շատ տարածված է աշխարհում . . . Նման անհարգալից լեզվով խոսելու արդյունքում . . . [մենք] զրկվում ենք Սուրբ Հոգու մեղմ հուշումները ստանալու ունակությունից»:[3]

«Համեստությունը հագուստով, հարդարանքով, լեզվով և վարքով խոնարհ և պարկեշտ լինելն է: Եթե դուք համեստ եք, անտեղի ուշադրություն չեք գրավի ձեզ վրա»:

Ճիշտ ինչպես անպարկեշտ խոսքը, բամբասանքը և ծաղրը, կարող են խաթարել հարաբերությունները, նույնկերպ էլ համեստ խոսքն առավել խորացնում է նվիրվածությունն առ Աստված և, ինչպես Յուտայից Քելի Պրուն է բացատրում, «առավել մեծացնում է մյուսների հետ դրական հարաբերություններ ստեղծելու մեր ունակությունը: Մեր համեստ խոսքը կնպաստի ի հայտ բերելուն լավագույնը մյուսների մեջ»:

Միմյանց հետ անքակտելիորեն կապված են լեզվով համեստ և վարքով համեստ լինելը: «Կարևոր է համեստ լինել լեզվով և վարքով, որովհետև դա ցույց է տալիս, թե ով ես դու և ինչն ես արժեվորում»,- ասում է Մայք Օլսենը Յուտայից: Մարդիկ իսկույն նկատում են, երբ խոսքը և գործը չեն համընկնում: Մեր լեզուն, որը վեհացնում է մյուսներին և փառավորում է Աստծուն, պետք է ուղեկցվի համապատասխան գործերով: Ծառայության բարի գործերով մենք ցույց ենք տալիս, որ մյուսներին ոգեշնչելու և Աստծուն փառաբանելու մեր պարտավորվածությունը առավել խորն է, քան մեր խոսքերը:

«Ես իրոք գնահատում եմ վարքի և խոսքի համեստությունը, - ասում է Քերի Կարլսոնը Կոլորադոյից, ԱՄՆ,- հրաշալի ինչ-որ մի բան կա նրա մեջ, ով խոնարհ է և ոչինչ չի անում ուշադրություն գրավելու համար: Նրանք, ովքեր համեստ են իրենց խոսքով, դառնում են անոթներ Տիրոջ համար»:

Եղեք համեստ հագուստով և տեսքով

«Համեստ [հագուստը] օգնում է ի հայտ բերել լավագույնը մեր մեջ, օգնելով մեզ կենտրոնանալ ոչ թե բնական մարդու, այլ հոգևորի վրա, - ասում է Պոլ Քեյվը Յուտայից: Համեստ հագուստ կրելով մենք խրախուսում ենք մյուսներին ճանաչել մեզ և գնահատել ոչ թե մեր տեսքը, այլ մեր անձը և բնավորությունը:

Մեր հագնելառճը ոչ միայն ուրիշներին հուշում է, թե ինչպես պետք է վերաբերվեն մեզ, այլ այն նաև ազդում է ինքներս մեր հանդեպ ունեցած կարծիքի և վերաբերմունքի վրա: «Մենք ավետարանից սովորում ենք, որ մեր մարմինը պարգև է Աստծուց»,- ասում է Լուի դա Կրուզ կրտ. Բրազիլիայից: «Մեր մարմինն օգնում է մեզ առաջ ընթանալ և դառնալ ինչպես մեր Հայրն է: Այդ իսկ պատճառով կարևոր է համեստ հագնվելը: Այդպիսով, մենք ցույց ենք տալիս Աստծուն և մյուսներին, որ մենք հարգանք ենք տածում այդ պարգևի և մյուսների հանդեպ»:[4]

Քերին բացատրում է. «Անպարկեշտ հագուստը միտում ունի ի ցույց դնել մարմինը որպես ֆիզիկական օբյեկտ, որն առանձնանում է հոգուց անհատականությամբ և բնավորությամբ: Համեստ լինելը, թեպետ դրա համար ծախսել եմ ավելի շատ գումար և միանշանակ ավելի շատ ժամանակ, օգնել է ինձ սովորել, որ իմ մարմինը անգին հոգու անոթ է՝ աստվածային ներուժով և ճակատագրով, ծնված և դաստիարակված Երկնային Ծնողների կողմից: Այն արժանի է շատ ավելի մեծ հոգածության և հարգանքի, քան աշխարհը կարող է տալ»:

Հավատքին հավատարիմ ձեռնարկն ուսուցանում է. «Բացի նրանից, որ պետք է խուսափել [բաց հագուստներից], դուք պետք է խուսափեք հագուստի, արտաքինի և վարսահարդարման ծայրահեղ ոճերից: Հագուստով, հարդարանքով և շարժուձևով միշտ եղեք կոկիկ և մաքուր, երբեք մի եղեք թափթփված կամ անփույթ»:[5] Մեր հագուկապով և արտահայտվելու ձևով մենք մեր հարգանքն ենք արտահայտում Աստծո, մեր և մյուսների հանդեպ:

Հետևողական եղեք

Փորձելով հետևել համեստության վերաբերյալ ավետարանի չափանիշներին, մենք մեր նվիրվածությունն ենք ցույց տալիս, հետևողականորեն պահելով Տիրոջ պատվիրանները բոլոր ժամանակներում, այլ ոչ թե ըստ հայեցողության:

Ճշմարիտ պարտավորությունը միշտ արմատավորվում է ավետարանի սկզբունքներով: Յուտայից Էնթոնի Ռոբերտսը բացատրում է.

«Համեստությունը մտադրություն է, ցանկություն՝ ամեն օր քայլելու ավետարանի և փրկության ծրագրի հասկացողությամբ»: Երբ խորասուզվում ենք ավետարանում, կարող է խորանալ մեր դարձը և մեծանալ ավետարանի սկզբունքներով ապրելու մեր ցանկությունը:

Հասկացեք ձեր աստվածային էությունը

Մշտապես համեստություն դրսևորելը օգնում է մեզ հասկանալ

և գնահատել մեր ծննդյան իրավունքը, և մեր աստվածային էության մասին գիտելիքը կարող է ոգեշնչել մեզ դառնալ էլ ավելի համեստ: Իտալիայի Ֆլորենցիայից Ռաֆայելլա Ֆերինին բացատրում է. «Համեստությունն օրհնում է իմ կյանքը, քանի որ այն օգնում է ինձ զգալ իմ Երկնային Հոր հատուկ դուստր, իսկ այդ գիտելիքն, իր հերթին, համեստ լինելու ցանկություն է առաջացնում»:

Եթե թույլ տանք, որ աշխարհը սահմանի, թե ով ենք մենք, դա կարող է վնաս հասցնել մեր ինքնագնահատականին: Յուտայից Ջուլիանա Առնան ներկայացնում է իր փորձը. «Երբ չունեի համեստության սկզբունքի մասին վկայություն, ես դժբախտ և հոգևոր առումով անապահով էի զգում: Երբ աշխարհին էր բնորոշում ինձ, ճնշող և հոգին խաթարող ազդեցություն էր թողնում, քանի որ աշխարհիկ, ֆիզիկական բաներով տարված մոլուցքը դաժան է և անողոք: Մի անգամ ես որոշեցի չլսել աշխարհին և փոխարենը թույլ տալ, որ Աստծո հետ իմ կապը բնորոշի ինձ, կյանքը դարձավ ավելի դյուրին, ազատ և երջանիկ»: Երբ փնտրենք ոչ թե աշխարհի, այլ Երկնային Հոր հավանությունը, մենք կգտնենք ավելի մեծ ուրախություն և համեստ լինելու ավելի մեծ ոգևորություն կյանքում:

Ապրեք համեստ կյանքով

«Համեստությունը դրսևորվում է ամեն ինչում՝ մեր խոսքի, արտաքինի, մեր պահվածքի մեջ և անգամ այն բանում, թե ինչպիսի վայրեր ենք մենք այցելում», - ասում է Գալինա Վիկտորովնա Սավչուկը Նովոռոսիյսկից, Ռուսաստան: Համեստ ապրելակերպը սերտորեն կապված է ավետարանի հանդեպ մեր նվիրվածության և Աստծո հետ մեր հարաբերության հետ:

Իրական համեստությունը վարքագծի և վերաբերմունքի համակցություն է: Երբ փորձենք բարելավել մեր վարքը, դա կօգնի բարելավել մեր մտածելակերպը, և հակառակը: Եթե մեր վարքով և արտաքինով համեստ լինելու հետ մեկտեղ չզարգացնենք ողջ կյանքում դա պահպանելու պարտավորությունը, կզրկվենք համեստ ապրելու բոլոր օրհնություններից: Եվ ինքնախաբեություն կլինի, եթե հավատանք, որ համեստ մարդիկ ենք, սակայն ցույց չտանք դա մեր գործերով:[6]

Եթե համեստության առումով ասենք, որ պարզ աչքով ուղղված ենք Աստծո փառքին, նշանակում է, մենք արտաքուստ և ներքուստ նվիրված ենք համեստ ապրելակերպին: Ճիշտ ինչպես աչքը պետք է ուղղված լինի դեպի Աստված, մեր արտաքին տեսքը և գործերը ևս պետք է համահունչ լինեն համեստության սկզբունքներին: Բայց միայն աչքն ուղղել դեպի Աստված չի նշանակում ուղղել այն դեպի Նրա փառքը, այն պետք է կենտրոնանա Նրա վրա: Նմանապես համեստ հագուստը և հարդարանքը պետք է ուղեկցվեն հավերժական սկզբունքների մտապատկերով:

Մեր աչքերն ուղղելով դեպի Աստված, մեզ համար ավելի հեշտ կլինի կենտրոնացնել մեր հայացքը Նրա վրա: Նմանապես, երբ կենտրոնացնենք մեր հայացքն Աստծո վրա, մեր աչքերը բնականաբար կուղղվեն դեպի Նա:

Երբ ձգտենք համեստ ապրել, մենք կզգանք Հոգու ազդեցության աճը մեր կյանքում: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսն ուսուցանել է. «Համեստությունը Հոգուն արժանանալու կարևոր գրավականն է: Լինել համեստ նշանակում է լինել խոնարհ, իսկ խոնարհությունը հրավիրում է Հոգին մեզ հետ լինել»:[7] Երբ Հոգին ուղղորդի մեր մտքերն ու գործերը, մեր աչքերն ուղղված կլինեն Աստծո փառքին և մենք կլինենք լույսով լցված: ■

Քեթրին Նելսոնն ապրում է Յուտայում, ԱՄՆ: Հերդի Մակքոնկիին ապրում է Դելավերում, ԱՄՆ:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում* (2004), 106:
2. *Հավատքին հավատարիմ,* 108:
3. *Հավատքին հավատարիմ,* 108:
4. Տես *Հավատքին հավատարիմ,* 107:
5. *Հավատքին հավատարիմ,* 107:
6. Տես Լին Գ. Ռոբինս, «Ինչպիսի տղամարդ և կին պետք է դուք լինեք», *Լիահոնա,* մայիս 2011, 103:
7. Ռոբերտ Դ. Հեյլ, «Համեստություն՝ ակնածանք առ Տերը», *Լիահոնա,* օգոս. 2008, 18:

Դարձ և զոհաբերություն

Ֆինլանդիայում

Մելիսա Զենտենո

Ֆինլանդիայում Հելսինկիի ծովափից մի քանի մղոն հեռու է գտնվում ծովային ամրոց Սուոմենլինան, որը կառուցվել է 18-րդ դարում՝ որպես պաշտպանություն ասպատակողների դեմ: Տարածվելով վեց կղզիների վրա, այս ամրությունը Ֆին ժողովրդի հզոր կամքի և վճռականության խորհրդանիշն է:

Բայց ֆին անդամները, ուղևորվելով իրենց մայրաքաղաք, մեկ այլ կառույց են այցելում: Հելսինկի Ֆինլանդիա Տաճարը իրենց դարձի և պաշտպանության խորհրդանիշն է՝ պաշտպանության, որը ստանում են կենդանի ավետարանից:

Ֆինլանդիայում Ռովանիեմիից 24-ամյա երիտասարդ չափահաս Նիիլո Կերվինենի համար 10-ժամյա գնացքով ուղևորությունը դեպի Հելսինկի, փոքր գին է, որ վճարում է տաճարում ծառայելու օրհնության դիմաց:

2006թ. հոկտեմբերին Հելսինկի Ֆինլանդիա Տաճարի նվիրագործումից առաջ Նիիլոն և իր ծխի այլ անդամներն ուղևորվում էին Շվեդիայի Ստոկհոլմ կամ Դանիայի Կոպենհագեն տաճար: «Ճամփորդությունը կատարվում էր ամառային արձակուրդներին և տևում էր մեկ շաբաթ»,- հիշում է նա: Ավտոբուսով ճամփորդություններն ու վրաններում քնելը այդ ճամփորդություններից մնացած լավագույն հիշողություններն են:

Սակայն իր հայրենիքում տաճար ունենալը հրաշալի օրհնություն է: «Երբ հայտարարվեց Հելսինկի տաճարի կառուցման մասին, ես այնքան երջանիկ էի, - ասում է Նիիլոն: - Ամեն անգամ այնտեղ լինելիս նվիրագործման աղոթքը դեռևս արձագանքում է իմ սրտում»:

Տաճարի հանդեպ այդ սերը Նիիլոյին առանձնացնում է իր ընկերներից: «Ֆինները տքնաջան աշխատում են և վայելում են ակտիվ կյանքը, սակայն իրենց կյանքում հոգևորին շատ քիչ ժամանակ են հատկացնում»,- բացատրում է նա: Թեպետ Նիիլոն ասում է, որ միշտ օրհնված է եղել լավ ընկերներով, մեծանալու հետ զգացել է հստակ տարբերություն իր ընկերների ապրելակերպի և իրեն ուսուցանված ապրելակերպի միջև: Այդ տարբերությունն էր, որ Նիիլոյին ստիպեց փնտրել իր անձնական վկայությունը, երբ նա դարձավ 17 տարեկան: «Ես պետք է որոշում կայացնեի, թե որտեղ պետք է կանգնեի և ով պետք է լինեի, - ասում է նա: - Տիրոջ օրհնությունների հետ և ընտանիքի ու լավ ընկերների առաջնորդությամբ ես Եկեղեցու մասին ամուր վկայություն ձեռք բերեցի»:

Ի՞նչ է նշանակում լինել երիտասարդ հավատարիմ չափահաս Ֆինլանդիայում: Մի երիտասարդ տղա ներկայացնում է իր մշակույթն ու հավատքը:

Դարձի մասին խոսելով Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա Բեդնարն ասել է. «Ես խոստանում եմ, որ եթե ունենանք ճշմարտության մասին գիտելիք և դարձի զանք դեպի Տերը, մենք կմնանք անսասան, հաստատակամ և երբեք չենք հեռանա»:[1] Թեպետ դեպի Հելսինկի ուղևորությունը ժամանակ և գումար է պահանջում, Նիիլոն պարտավորվել է լինել Քրիստոսի աշակերտը: Իսկ Նիիլոյի համար դա ամենևին էլ զոհաբերություն չէ: ■

ՀՂՈՒՄ

1. Դեյվիդ Ա. Բեդնար, «Դարձ դեպի Տերը», *Լիահոնա,* նոյ. 2012, 109:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԿՈՒԼԱ ՖՐԻՍՊՈՄԻ

ԱՎԵԼԻՆ ՆԻԻԼՈՅԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ են սովորաբար ուտում ֆինները:
Իմ սիրելի ուտեստներից են՝ սաղմոնի ապուրը և եղնիկի միսը՝ կարտոֆիլի պյուրեով: Մենք նաև շատ ենք ուտում տարեկանի հաց:

Ի՞նչ եք անում զվարճանալու համար:
Ես սիրում են սնոուբորդինգով զբաղվել, կինոնկար դիտել կամ պարզապես քայլել դրսում: Ես միսիա եմ ծառայել Ճապոնիայում և հնարավորության դեպքում ճապոներեն եմ սովորում:

Ինչպե՞ս եք ժամադրվում Ֆինլանդիայում:
Մենք ժամադրության խիստ կանոններ չունենք: Մարդիկ հիմնականում ինչ-որ մեկին ժամադրում են միայն այն ժամանակ, երբ բավականաչափ հետաքրքրված են նրանով: Այստեղ ժամադրությունը մեկ ուրիշին ճանաչելու մեխանիզմ չէ: Այստեղ հավատարիմ երիտասարդ չափահասներ կան, անգամ եթե անդամների թիվն այդքան էլ շատ չէ: Երբեմն երիտասարդ չափահաս անդամները երկար ճամփորդում են, որպեսզի հանդիպեն այն անձնավորությանը, ում հետ ծանոթացել են երիտասարդ ամուրի չափահասների պարերի միջոցառման ժամանակ:

ԵԿԵՂԵՑԻՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ

4715 Վերջին Օրերի Սրբեր
15 ծխեր
15 ճյուղեր
2 ցցեր
1 միսիա
1 տաճար, նվիրագործվել է 2006թ. հոկտեմբերի 22-ին

ԹՎԵՐՈՎ

5 250 000 մարդ (2012թ. հունվարի դրությամբ)
187 888 լճեր
179 584 կղզիներ
2.2 միլիոն շոգեբաղնիքներ

ՓԱՍՏԵՐ

Մայրաքաղաքը՝ Հելսինկի
Լեզուն՝ ֆիններեն (սուոմի)

ՏՂԱՄԱՐԴԻԿ ԵՎ ԿԱՆԱՅՔ

ՏԻՐՈՋ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Մեր Երկնային Հոր քահանայության օժտման ծրագրում տղամարդիկ և կանայք ունեն տարբեր, սակայն սակայն հավասարապես արժեքավոր դերեր։

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ես գիտեմ, որ կան ճշմարտություններ, որոնք թե տղամարդիկ, և թե կանայք պետք է հասկանան կնոջ դերի վերաբերյալ՝ Երկրի վրա Աստծո արքայությունը կառուցելու և ամրապնդելու գործում։ Շատ առումներով կանայք հանդիսանում են Եկեղեցու սիրտը։ Այսպիսով Տիրոջ օգնությամբ ես կցանկանայի արժանին մատուցել Եկեղեցու հավատարիմ կանանց և երիտասարդ աղջիկներին։ Դուք՝ սիրելի քույրեր, որտեղ էլ որ ապրելիս լինեք աշխարհում, տեղյակ եղեք այն մեծ ջերմությունից և վստահությունից, որ Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Քվորումը ունեն ձեր հանդեպ։

Թույլ տվեք սկսել մի վերապատրաստական նյութից, թե ինչ ենք մենք անում այստեղ Երկրի վրա։

Մենք մեր Երկնային Հոր սիրելի հոգևոր որդիներն ու դուստրերն ենք։ Մենք ապրել ենք Նրա հետ նախաերկրային կյանքում։ Որպեսզի իրագործի «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» Իր առաքելությունը (Մովսես 1.39), Երկնային Հայրը ստեղծեց մի ծրագիր, որը նախատեսված էր օգնելու Իր զավակներին հասնելու իրենց վերջնական ներուժին։ Ըստ Մեր Հոր ծրագրի մարդը կոչված էր ընկնելու և ժամանակավորապես բաժանվելու Նրանից, որպեսզի ծնվեր որպես մահկանացու, ստանար մարմին և անցներ ստուգման և փորձաշրջանի ժամանակահատված։ Ըստ Նրա ծրագրի Փրկիչը պետք է փրկագներ մարդկությանը անկումից։ Մեր Տեր Հիսուս Քրիստոսի քավությունը ուղի էր նախապատրաստում վերադառնալու Աստծո ներկայություն՝ ավետարանի արարողությունների և սրբազան ուխտերի շնորհիվ։ Քանի որ մենք պետք է ապրեինք վտանգներով և խառնաշփոթություններով լի մահկանացու կյանքում, Երկնային Հայրը և Նրա Որդին գիտեին, որ մենք ավելի մեծ զորության կարիք կունենանք, քան մեր անձնականն է։ Նրանք գիտեին, որ մենք Նրանց զորության կարիքը կունենայինք։ Քրիստոսի ավետարանը և վարդապետությունը բոլոր նրանց ովքեր փնտրում են դրա զորությունը, կտան հնարավորություն ստանալու հավերժական կյանք և ուրախություն իրենց կյանքում։

Կան մարդիկ, ովքեր կասկածի տակ են դնում կնոջ դերը Աստծո ծրագրում և Եկեղեցում։ Ես տեղական և միջազգային լրատվամիջոցներով բավականին հարցազրույցներ եմ տվել և կարող եմ ասել ձեզ, որ իմ հանդիպած լրագնողներից մեծամասնությունը կանխակալ մտածելակերպ ունեին այս թեմայի վերաբերյալ։ Տարիների ընթացքում շատերն են հարցրել, ենթադրելով, որ կանայք երկրորդական կարգի մարդիկ են Եկեղեցում։ Դա այնքան հեռու է ճշմարտությունից։

Թույլ տվեք առաջարկել հինգ հիմնական կետեր այս կարևոր հարցի շուրջ։

1. Աստված ծրագիր ունի օգնելու համար մեզ ձեռք բերել հավերժական կյանք:

Մեր Երկնային Հայրը ստեղծել է և կանանց,և տղամարդկանց, ովքեր Նրա հոգևոր դուստրերն ու որդիներն են: Դա նշանակում է, որ սեռը ունի հավերժական կարևորություն: Նա ունի ծրագիր՝ օգնելու համար բոլոր նրանց, ովքեր կհետևեն Նրան և Նրա Որդի Հիսուս Քրիստոսին հասնելու իրենց ճակատագրին՝ որպես հավերժական կյանքի ժառանգորդներ:

Եթե մեր վերջնական վեհացումը Նրանց կարևոր նպատակն է, և եթե Նրանք ամենագետն ու կատարյալն են, որը ինչպես գիտենք այդպես է, ապա Նրանք լավագույնս են հասկանում, թե ինչպես նախապատրաստել, ուսուցանել և առաջնորդել մեզ այնպես, որպեսզի մենք առավելագույնս ունենանք հնարավորություն արժանանալու վեհացմանը:

Մեզանից յուրաքանչյուրն ունի ընտանիքի անդամներ կամ ընկերներ, ովքեր բախվել են սոցիալական մտահոգիչ խնդիրներին: Հարցի մասին քննարկումը, ընդհանուր առմամբ, չի բերում որևէ լուծման, այլ ընդհակառակը՝ կարող է ստեղծել վիճաբանություն: Կան որոշ հարցադրումներ նուրբ հարցերի շուրջ Եկեղեցու դիրքորոշման վերաբերյալ, որոնց պատասխանները, դժվար, թե բավարարեն բոլորին: Այնուամենայնիվ, երբ մենք աղոթքով Տիրոջն ենք դիմում այն հարցով, թե ինչպես զգալ կամ վարվել այդպիսի իրավիճակներում, ներշնչումը գալիս է. «Արդյո՞ք դու հավատում ես Հիսուս Քրիստոսին և հետևում Նրան և Հորը»: Ես գիտեմ, որ Եկեղեցում շատերը ժամանակ առ ժամանակ մտածել են, թե արդյոք նրանք կարող են անել այն բոլորը, ինչ նրանց խնդրել են անել: Սակայն, եթե մենք իսկապես հավատում ենք Տիրոջը, ապա հավաստիացումը հետևում է. «Ես հավատում եմ Հիսուս Քրիստոսին և կանեմ այն ամենը, ինչ Նա ցանկանում է, որ անեմ»: Եվ այսպիսով առաջ ենք շարժվում: Որքա՜ն զորավոր են խոսքերը «Ես հավատում եմ Հիսուս Քրիստոսին»:

Մեր վկայությունները, մեր մտքի խաղաղությունը և մեր բարեկեցությունը սկսվում են մեր հավատալու ցանկությունից, որ մեր Երկնային Հայրն իսկապես ամեն ինչ գիտի:

2. Եկեղեցին կառավարվում է քահանայության բանալիների միջոցով

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Տիրոջ Եկեղեցին է, և Նրա Եկեղեցին կառավարվում է քահանայության իշխանության և քահնայության բանալիների շնորհիվ և կողմից: «Քահանայության բանալիները Աստծո կողմից քահանայության

ղեկավարներին տրված իշխանությունն է՝ առաջնորդելու, վերահսկելու և ղեկավարելու Երկրի վրա Իր քահանայության կիրառությունը»:[1]

Նրանք, ովքեր ունեն քահանայության բանալիներ՝ սարկավագը, ով ունի բանալիներ իր քվորումի համար, կամ եպիսկոպոս, ով ունի բանալիներ իր ծխի համար, կամ Եկեղեցու Նախագահը, ով կրում է քահանայության բոլոր բանալիները, հնարավոր են դարձնում բոլոր նրանց համար, ովքեր նրանց ենթակայության տակ ծառայում կամ աշխատում են հավատարմորեն, կիրառելու քահանայության իշխանությունը և զգալու քահանայության զորությունները:

Բոլոր տղամարդիկ և կանայք ծառայում են այն մարդկանց ենթակայության տակ, ովքեր ունեն բանալիներ: Դա է այն եղանակը, որով Տերը ղեկավարում է Իր Եկեղեցին:

Թույլ տվեք ինձ կրկնել 2013թ. ապրիլյան գերագույն համաժողովի ժամանակ իմ արտասանած խոսքերը. «Մեր Երկնային Հոր քահանայության օժտման մեծ ծրագրում տղամարդիկ կրում են հատուկ պատասխանատվություն՝ սպասավորելու քահանայությունը, սակայն նրանք քահանայությունը չեն: Տղամարդիկ և կանայք ունեն տարբեր, սակայն հավասարապես արժեքավոր դերեր: Ինչպես կինը չի կարող երեխա բերել առանց տղամարդու, այնպես էլ տղամարդը չի կարող լիարժեք կիրառել իր քահանայության զորությունը առանց կնոջ՝ հավերժական ընտանիք կազմելու համար: . . . Հավերժական տեսանկյունից նայելով, և՛ բազմանալու ստեղծարար ուժերը, և՛ քահանայության զորությունը ամուսինը և կինը միմյանց հետ կիսում են»:[2]

Ինչո՞ւ են տղամարդիկ կարգվում քահանայության կոչումներում, իսկ կանայք ոչ: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին բացատրել է, որ Տերը, այլ ոչ թե մարդն է, «նախատեսել տղամարդկանց կրելու քահանայությունը Իր Եկեղեցում», և նաև Տերն է օժտել կանանց «կարողություններով մեծացնելու այս մեծ և հրաշալի կազմակերպության շրջանակները, որը Տիրոջ Եկեղեցին և թագավորությունն է»: . . .[3] Երբ ամեն ինչ ասվեց և արվեց, Տերը չհայտնեց, թե ինչու Նա կազմակերպեց Իր Եկեղեցին ինչպես որ կա:

Եկեք չմոռանանք, որ Եկեղեցու ուսմունքների շուրջ կեսը գրվել է քույրերի կողմից: Ղեկավարման մեծ մասը ապահովել են մեր քույրերը: Բազմաթիվ ծառայություններ և միջոցառումներ պլանավորվել և ղեկավարվել են կանանց կողմից: Ծխի ու ցցի խորհուրդներում և Եկեղեցու գլխամասային գրասենյակներում անցկացված գերագույն խորհուրդներում կանանց մասնակցությունն ու խորհուրդները ապահովել են անհրաժեշտ պատկերացում, իմաստություն և հավասարակշռություն:

Եկեղեցու ցանկացած նախաձեռնության մեջ երկնային ողջ օրհնությունները հրավիրելու համար պահանջվում է երկուստեք մասնակցություն, թե տղամարդկանցից, ովքեր հարգում են կանանց և նրանց ունեցած բնորոշ հոգևոր շնորհները, և թե կանանցից, ովքեր հարգում են տղամարդկանց քահանայության բանալիները:

3. Տղամարդիկ և կանայք հավասարապես կարևոր են

Աստված և Եկեղեցին հավասար աչքով են նայում տղամարդկանց և կանանց, սակայն հավասար լինելը չի նշանակում, որ նրանք նույնն են: Տղամարդկանց և կանանց պարտականություններն ու աստվածային շնորհները իրենց բնույթով տարբեր են, սակայն տարբեր չեն իրենց կարևորությամբ և ազդեցությամբ: Մեր Եկեղեցու վարդապետությունը կանանց դասում է հավասար, բայց և տարբեր տղամարդկանցից: Աստված չի համարում մի սեռը մյուսից լավը կամ կարևոր: Նախագահ Հինքլին ասել է կանանց «մեր Հավերժական Հայրը . . . երբեք նկատի չի ունեցել, որ դուք պետք է ավելի պակաս լինեք, քան Նրա ստեղծագործությունների թագադրյալ փառքը»:[4]

Տղամարդիկ և կանայք ունեն տարբեր շնորհներ, տարբեր կարողություններ և տարբեր տեսակետներ ու հակումներ: Դա է այն հիմնական պատճառներից մեկը, թե ինչու մենք միմյանց կարիքն ունենք: Դա ստիպում է տղամարդուն և կնոջը ստեղծել ընտանիք, և դա ստիպում է տղամարդկանց և կանանց իրականացնել Տիրոջ աշխատանքը: Ամուսինը և կինը՝ արդարացիորեն աշխատելով իրար հետ լրացնում ենք: Եկեք լինենք զգույշ, որպեսզի մենք չխափանենք մեր Երկնային Հոր ծրագիրը և մեր կյանքի նպատակները:

4. Բոլորը օրհնված են քահանայության զորության շնորհիվ

Երբ տղամարդն ու կինը այցելում են տաճար, նրանք երկուսն էլ օժտում են ստանում այդ նույն զորության շնորհիվ, որը քահանայության զորությունն է: Թեև քահանայության իշխանությունը առաջնորդվում է քահանայության բանալիների միջոցով և քահանայության բանալիները կրում են միայն արժանի տղամարդիկ, այդ քահանայության զորությունն ու օրհնությունները կարող են զգալ Աստծո բոլոր զավակները:

Մեր Երկնային Հայրն առատաձեռն է իր զորությունները բաշխելիս: Բոլոր տղամարդիկ և բոլոր կանայք իրենց կյանքում օգնության համար կարող են զգալ այդ զորությունը: Բոլոր նրանք, ովքեր սրբազան ուխտեր են կապել Տիրոջ հետ և ովքեր պատվում են այդ ուխտերը, ունակ են ստանալու անձնական հայտնություն, օրհնվել հրեշտակների սպասավորումից,

հաղորդակցվել Աստծո հետ, ստանալ ավետարանի լրիվությունը և, ի վերջո, Հիսուս Քրիստոսի հետ միասին դառնալ այն ամենի ժառանգորդը, ինչ մեր Հայրն ունի:

5. Մենք պետք է իմանանք և վկայենք վարդապետության մասին

Անհրաժեշտ է, որ Եկեղեցու կանայք իմանան Քրիստոսի վարդապետությունը և ամեն կերպ վկայեն վերականգնման մասին: Երկրի պատմության մեջ երբեք չի եղել այսքան բարդ ժամանակ: Սատանան և նրա ջատագովները կատարելագործում են իրենց զինանոցի զենքերը և նրանք փորձառու են մարդկային ընտանիքի մեջ Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքն ու վստահությունը ոչնչացնելու գործում:

Մենք բոլորս՝տղամարդիկ, կանայք, երիտասարդ ամուրիները, երիտասարդները և տղաներն ու աղջիկները, պետք է Տիրոջն ու Նրա Եկեղեցին պաշտպանենք, պահպանենք և տարածենք աշխարհով մեկ: Մեզ ավելի շատ են անհրաժեշտ կանանց առանձնահատուկ, ազդեցիկ ձայները և հավատքը: Մեզ անհրաժեշտ է, որպեսզի դուք սովորեք վարդապետությունը, որպեսզի հասկանաք, թե ինչին ենք մենք հավատում, որպեսզի դուք բերեք ձեր վկայությունները բոլոր բաների ճշմարտացիության վերաբերյալ, անկախ նրանից, թե այդ վկայություններն արված են Երիտասարդ աղջիկների ճամբարի խարույկի շուրջ, վկայության ժողովին, համացանցում, թե Ֆեյսբուկում: Միայն դուք կարող եք ցույց տալ աշխարհին, թե ուխտեր կապած Աստծո կանայք ովքեր են և ինչի են հավատում:

Քույրեր, ձեր աղդեցության շրջանակը յուրահատուկ շրջանակ է,—մի բան, որը չի կարող կրկնօրինակվել տղամարդկանց կողմից: Ոչ ոք չի կարող պաշտպանել մեր Փրկչին ավելի շատ համոզվածությամբ և զորությամբ, քան դուք՝ Աստծո դուստրեր, որ ունեք այդքան մեծ ներուժ և համոզմունք: Դարձի եկած կնոջ ձայնի զորությունը անչափելի է, և Եկեղեցին ձեր ձայների կարիքն ունի այժմ, քան երբևէ նախկինում:

Ես իմ վկայությունն եմ բերում ձեզ, որ մենք մի ժամանակաշրջանում ենք, երբ պետք է համախմբվենք: Մենք պետք է համախմբվենք՝ տղամարդիկ և կանայք, երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք, տղաները և աղջիկները: Մենք պետք է պաշտպանենք մեր Երկնային Հոր ծրագիրը; Մենք պետք է պաշտպանենք Նրան: Նա հեռու է քշվել մեզանից: Մենք չենք կարող ձեռքներս ծալած նստել, որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, և թույլ տալ, որ դա շարունակվի առանց բավարար համարձակության, որպեսզի թույլ տանք մեր ձայները լսելի լինեն:

Թող Աստված օրհնի ձեզ համարձակությամբ, որպեսզի ուսումնասիրեք և ճանաչեք ավետարանի պարզ ճշմարտությունները, իսկ հետո ամեն պատեհ առիթով կիսվեք դրանցով: ■

2013թ. օգոստոսի 20-ին Բրիգամ Յանգ Համալսարանում իր ելույթից: Անգլերեն լեզվով ողջ հոդվածը կարդալու համար այցելեք speeches.byu.edu:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Զեռնարկ 2: Սպասավորելը Եկեղեցում* (2010), 2.1.1:
2. Մ. Ռասսել Բալլարդ, «Սա է իմ գործը և փառքը» *Լիահոնա,* մայիս 2013, 19:
3. Gordon B. Hinckley, “Women of the Church,” *Ensign,* Nov. 1996, 70.
4. Gordon B. Hinckley, “Stand Strong against the Wiles of the World,” *Ensign,* Nov. 1995, 98.

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԾԱՌԱՅԵԼՈՒ,

ԾԱՌԱՅԵԼ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ

Աստված ձեզ կարգել է Ահարոնյան Քահանայությանը, քանի որ Նա գործ ունի ձեզ համար– այժմ և ապագայում:

Դեյվիդ Լ. Բեք
Երիտասարդ տղամարդկանց գերագույն նախագահ

Ջոնաթանը իմ ընկերն է, ով Եկեղեցուն է միացել չորս տարի առաջ: Նա իր ընտանիքում Եկեղեցու միակ անդամն է: Ահարոնյան քահանայություն ստանալուց հետո նա սկսեց ծառայել այլոց, ինչպես երբևէ նախկինում: Ջոնաթանը գիտեր, որ ծառայելով, նա պետք է շատ բան սովորեր: Նա նաև ցանկանում էր արժանի և ավելի հուսալի լիներ, այսպիսով, նա ուսումնասիրեց ավետարանը, աղոթեց և հաճախեց իր Կիրակնօրյա ժողովներին և սեմինարիային: Պատվիրանները և Եկեղեցու չափանիշները պահելու համար նա ջանասիրաբար աշխատեց: Նա ջանասիրաբար կատարեց քահանայության իր պարտականությունները, այդ թվում լինելով հիանալի տնային ուսուցիչ: *Կատարել իմ պարտականությունը Աստծո առաջ* ձեռնարկը օգնեց նրան հասկանալ այդ պարտականությունները և սովորել, թե ինչպես կատարել դրանք;

Ջոնաթանի հավատարիմ քահանայության ծառայությունը շնորհեց նրան հոգևոր ուժ: Այն օգնեց նրան պաշտպանվել չարի ազդեցություններից: Ծառայելով և նախապատրաստվելով իր ապագայի համար, նա չափազանց աճեց: Անցյալ տարի նա արժանիորեն ստացավ Մելքիսեդեկյան քահանայությունը և տաճարային օժտումը: Այժմ նա ծառայում է Բրազիլիայի միսիայում:

Ահարոնյան Քահանայությունը հաճախ կոչվում է «նախապատրաստական քահանայություն»: Աստված ձեզ կարգել է Ահարոնյան Քահանայությանը, քանի որ Նա գործ ունի ձեզ համար— այժմ և ապագայում: Ահարոնյան քահանայության մեջ ձեր հավատարիմ ծառայությունը նախապատրաստում է ձեզ ավելի մեծ հնարավորություններով ծառայելուն եկող տարիների ընթացքում: Ջոնաթանի նման, դուք պատրաստվում եք «ստանալու Մելքիսեդեկյան քահանայությունը, ստանալու տաճարային օրհնությունները, ծառայելու լիաժամկետ միսիայում, լինելու հոգատար ամուսին և հայր և շարունակելու ձեր ցկյանս ծառայությունը առ Տերը» (*Հավատքին Հավատարիմ. ավետարանական վկայակոչում* [2004], 4):

Դուք, միգուցե, չգիտեք բոլոր մանրամասները այն հիանալի հնարավորությունների, որոնք Երկնային Հայրը պահել է ձեզ համար, սակայն ես վստահ եմ, որ դուք կնախապատրաստվեք զգալու դրանք, եթե դուք անեք այս բոլորը որպես Ահարոնյան քահանայության կրող:

Հետևեք Հիսուս Քրիստոսին

Որպես քահանայության կրող դուք Հիսուս Քրիստոսի ներկայացուցիչն եք : Դա նշանակում է, որ դուք պետք է հետևեք Նրան և անեք այն ամենը, ինչը Նա կաներ: Ի՞նչ կաներ Նա: Բոլոր իրավիճակներում Նա նվիրել է Իր կյանքը ուրիշներին ծառայելուն և օրհնելուն: Այնպես, որ դուք նույնպես պետք է դա անեք: Նվիրեք ինքներդ ձեզ ուրիշներին ծառայելու գործին, — իսկ հետո զարգացեք և կատարելագործվեք, որպեսզի ինքներդ ձեզանից ավելի շատ նվիրելու բան ունենաք: Հիշեք, թե ինչպես էր Հիսուսը զարգանում իր երիտասարդության տարիներին. Նա

ՆԱՄԵՐԸ՝ ԹՈՒՅՆ ՄՈՐԻՑ

ԱՇԱՐՈՆՅԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՈՂՆԵՐ.

Հետևեք Հիսուս Քրիստոսին՝

- ամենօրյա աղոթքով և ավետարանի ուսումնասիրությամբ
- հնազանդությամբ
- փնտրելով Աստծո կամքը

Սպասավորելով քահանայության արարողությունները, ինչպիսիք են՝

- հաղորդության օրհնումը
- մարդկանց մկրտելը

Մշտապես ծառայեք՝

- ամրացնելով ընտանիքի և քվորումի անդամներին
- փրկագնելով քիչ-ակտիվ անդամներին
- ծառայելով կարիքավորներին

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ՝

Ստանալ Մելքիսեդեկյան քահանայություն

_____

_____

_____

Ստանալ տաճարային օրհնություններ

_____

_____

_____

Ծառայել միսիայում

_____

_____

_____

Դառնալ ամուսին և հայր

_____

_____

_____

«զարգանում էր իմաստութիւնով եւ հասակով, եւ շնորհքով՝ Աստուծոյ եւ մարդկանց մօտ» (Ղուկաս 2.52):

Հիսուս Քրիստոսին հետևելու մի ձև իմաստություն և առողջություն ձեռք բերելն է ձեր երիտասարդության տարիներին: Դա պահանջում է տքնաջան աշխատանք և լավագույնս գործելու ցանկություն (տես ՎԵՈՒ 4.2): Դուք Աստծո բարեհաճությունն եք ստանում, երբ նրան եք մոտենում ամենօրյա աղոթքներով, ավետարանի ուսումնասիրությամբ, հնազանդությամբ և ծառայությամբ: Դուք մյուսների բարեհաճությունն եք ստանում, երբ բարի եք, հավատարիմ ձեր ընտանիքին և Քրիստոսանման ընկեր բոլորին:

Հիշեք, որ Հիսուսը միշտ կատարել է Հոր կամքը: Դուք հետևում եք Քրիստոսին, երբ փնտրում եք Աստծո կամքը ամբողջ օրվա ընթացքում՝ առաջնորդելու ձեր ծառայությունը և գործելու համապատասխան ձեր ստացած հոգևոր հուշումների:

Սպասավորել Քահանայության արարողությունները

Քահանայության արարողությունները անհրաժեշտ են Աստծո բոլոր զավակների համար և օրհնում են Նրա հավասարապես որդիներին ու դուստրերին: Մարկավագ դառնալու պահից, դուք օգնում եք սպասավորել արարողությունները՝ հաղորդությունը բաժանելով: Հետագայում Ահարոնյան քահանայության մեջ դուք կշարունակեք սպասավորել քահանայության արարողությունները՝ պատրաստելով և օրհնելով հաղորդությունը, մկրտելով և մասնակցելով այլ Ահարոնյան քահանայության կրողների կարգումներին:

Որպեսզի մասնակցեք սրբազան արարողություններին, դուք պետք է մաքուր լինեք: Ձեր բարոյական մաքրությունը կարող է մեծ հոգևոր զորություն ավելացնել այն արարողություններին, որոնք դուք սպասավորում եք: Ամեն կերպ ձգտեք լինելու արժանի, որպեսզի կրեք Տիրոջ սպասները (տես ՎԵՈՒ 38.42): Երբ դուք անեք դա, դուք կարող եք ձեր ծխի կամ ճյուղի առաջ կանգնել որպես Հիսուս Քրիստոսի իրական ներկայացուցիչներ: Նրանք կօրհնվեն ձեր վճռականությամբ՝ պահելու այն ուխտերը, որոնք դուք նրանց օգնում եք թարմացնել:

Մշտապես ծառայեք

Որպես Ահարոնյան Քահանայություն կրող դուք ծառայություն եք մատուցում: Բոլոր ժամանակներում հնարավորություններ փնտրեք ծառայելու ձեր ընտանիքին, ընկերներին, քվորումի անդամներին և այլոց: Այն ամենը, ինչ դուք անում եք քահանայության մեջ, օգնում է ձեզ թե ֆիզիկապես, թե հոգեպես ծառայել ուրիշներին: Օրինակ, երբ տնային այցելության ծառայություն անելով դուք օգնում եք ձեր եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին, դուք սովորում եք, թե ինչպես բացահայտել և հոգալ ուրիշների կարիքները: Դուք նաև ծառայում եք ուրիշներին, երբ օգնում եք ամրապնդել ձեր քվորումի անդամներին և փրկել քիչ-ակտիվներին, հավաքագրել ծոմապահությունը, որպեսզի օգնեք աղքատներին և կարիքավորներին, կատարում եք ֆիզիկական աշխատանք հիվանդների և հաշմանդամների համար, ուսուցանում և վկայում եք Քրիստոսի և Նրա ավետարանի մասին և թեթևացնում եք հուսահատվածների բեռը:

Դուք ծառայում եք, երբ դասավանդում եք ձեր քվորումի ժողովների և ընտանեկան երեկոների ժամանակ: Դուք ծառայում եք, երբ բոլորին հրավիրում եք գալ դեպի Քրիստոսը (տես ՎԵՈՒ 50.29)—տանը, ձեր քվորումներում, դպրոցում, լիաժամկետ միսիոներների հետ և որտեղ որ լինեք:

Ձեր ապագան

Ձեր ծնողների կամ խորհրդատուների հետ քննարկեք, թե ինչ կպահանջվի ձեզանից ձեր ապագա դերերում որպես Մելքիսեդեկյան Քահանայության կրողներ, միսիոներ, ամուսին և հայր: Տրված հատվածում գրեք այդ մեծ պարտականություններից մի քանիսը և թե ինչպես դուք այսօր կարող եք պատրաստվել դրանց՝ ծառայելով Ահարոնյան քահանայությունում: Այժմ կարող է այն ճնշող լինել, սակայն հիշեք, որ լավագույն նախապատրաստությունը, դա պարզապես անելն է այն, ինչը ձեր Երկնային Հայրը այսօր խնդրել է անել ձեզ: Թող որ դուք գտնեք ձեր երջանկությունը, երբ այսօր ծառայում եք և նախապատրաստվում ձեր փառավոր ապագային: ■

ՁՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ՕՐՇՆԵԼՈՒ ԲՈԼՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ

Եկեղեցու ղեկավարներն ուսուցանել են մեզ, որ քահանայության ծեսերն ու ուխտերը հասու են Աստծո բոլոր զավակներիտղամարդկանց և կանանց։

«Քահանայությունը Աստծո զորությունն ու իշխանությունն է՝ տրված բոլոր տղամարդկանց, կանանց և երեխաների փրկության և օրհնության համար։. . .

Աստծո կողմից հատուկ օրհնություններ են նախատեսված յուրաքանչյուր արժանի անձնավորության համար, ով մկրտվել է, ստացել Սուրբ Հոգին և կանոնավոր ճաշակում է հաղորդությունից։ Տաճարը բերում է լրացուցիչ լույս և ուժ՝ հավերժական կյանքի խոստումի հետ միասին [տես ՎևՈւ 138.37, 51]։

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ Անդերսեն, «Զորություն քահանայությունում», *Լիահոնա,* նոյ. 2013, 92։

«Քահանայության ծեսերն ու ուխտերը մեզ համար հնարավոր են դարձնում Աստծո կողմից խոստացված օրհնությունների լիությունը, որը հնարավոր է դարձել Փրկչի Քավությամբ։ Դրանք զինում են Աստծո որդիներին և դուստրերին զորությամբ՝ Աստծո զորությամբ, և մեզ հնարավորություն են տալիս հավերժական կյանք ստանալ՝ վերադառնալով Աստծո ներկայություն և ապրելով Նրա հետ՝ Իր հավերժական ընտանիքում»։

Քերոլ Մ. Սթեֆենս, Սփոփող Միության գերագույն նախագահության առաջին խորհրդական, «Գիտե՞նք արդյոք ինչ ունենք», *Լիահոնա,* նոյ. 2013, 12։

«Մեզ համար վճռորոշ է հասկանալը, որ Երկնային Հայրը ուղի է տվել Իր բոլոր որդիների և դուստրերի համար, որ նրանց հասու լինեն քահանայության օրհնությունները, և որ նրանք ուժեղացվեն քահանայության զորությամբ։ Իր հոգևոր զավակների համար Աստծո ծրագրի առանցքում է Նրա իսկ հայտարարությունը. «Սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39)»։

Երեց Մ. Ռասսել Բալլարդ, Տասներկու Առաքյալների Քվորումից, «Սա է իմ գործը և իմ փառքը», *Լիահոնա,* մայիս 2013, 19։

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԳԱԼ ԱՐՄՍՏՐՈՆԳԻ

ՁԵՐ ՏՈՒՆ ԲԵՐԵՔ

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՕՐՇՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բոննի Լ. Օսկարսոն
Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ

Երբ պահում եք ձեր ուխտերը, դուք քահանայության զորությունն եք ստանում, որն օրհնում է ձեր տունն ու ընտանիքը։

Ինչպե՞ս կարող եք որպես երիտասարդ տղամարդ կամ երիտասարդ կին, անկախ ձեր ընտանեկան հանգամանքներից, ուժ քաղելով մկրտության ժամանակ կապած քահանայության ուխտերի զորությունից՝ ամրացնել ձեր տունն ու ընտանիքը։ Հասկանալով Տիրոջ ծրագրում մեր ընտանիքների ունեցած դերն ու կարևորությունը, կարող է ոգեշնչվենք պատվելու մեր տված խոստումները, հավաստիանալով, որ մեր լավագույն և ամենախանդավառ ծառայությունը կատարվել է մեր իսկ տներում։ Եկեք տեսնենք, թե ինչպես կարող ենք ուժ քաղելով մեր ուխտերի զորությունից ամրացնել և ծառայել նրանց, ովքեր մեծ նշանակություն ունեն մեզ համար։

Ինչպե՞ս դուք կարձագանքեք։

Երկուշաբթի երեկո է, և դուք շատ տնային աշխատանք ունեք։ Ձեր հայրը կանչում է ընտանիքին՝ հավաքվել ընտանեկան երեկոյի։ Ի՞նչ եք դուք անում։

Ընտրություն 1. Դուք պատասխանում եք. «Ա՜խ, հայրիկ, ես դրա համար ժամանակ չունեմ։ Պետք է դասերս պատրաստեմ»։

Ընտրություն 2. Դուք արագ հավաքում եք ձեր քույրերին և եղբայրներին և ուրախ մասնակցում եք աղոթքներին, երգին և ուղերձին։

Երբ Քահանայության ղեկավար կա տանը

Օգնելը ձեր ծնողներին և պատրաստակամորեն մասնակցել ընտանեկան երեկոյին, ընտանեկան աղոթքին և սուրբ գրությունների ընտանեկան ուսումնասիրությանը քահանայության ղեկավարությունը ձեր տանը ամրացնելու միջոց է։ Կան շատ այլ միջոցներ, օրինակ՝

- Աղոթեք ձեր ծնողների համար։ (Նրանք անշուշտ ամեն օր աղոթում են ձեզ համար։)
- Օգնեք ձեր ծնողներին իրենց եկեղեցական կոչումներում և տնային գործերում, հատկապես՝ երբ նրանք զբաղված են հատուկ հանձնարարություններում։
- Օգնեք ձեր ծնողներին ընդունել տնային ուսուցիչներին, երբ նրանք գալիս են, և հետո՝ քաղաքավարությամբ լսեք նրանց բերած ուղերձը։

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՍԻՐԻ ՄԱԿԳՈՒՆԻՆԻ

- Եթե ձեր տարածքում տաճար կա, կարող եք խնամել ձեր փոքր քույրերին և եղբայրներին, որ ձեր ծնողները կարողանան գնալ տաճար և մասնակցել քահանայության ծեսերին:

Հիշեք, որ ձեր տուն Հոգին հրավիրելը և պահպանելը միայն ձեր ծնողների պարտականությունը չէ: Շատ բան կարող եք անել՝ ձեր գործերով և վերաբերմունքով Հոգին հրավիրելու համար: Արդյո՞ք ձեզանից կախված ամեն ինչ անում եք, որպեսզի ձեր տուն բերեք Հոգու ազդեցությունը:

Երբ քահանայության ղեկավարություն չկա տանը

Բոլոր ընտանիքները տարբեր են իրենց կառուցվածքով կամ գործելակերպով: Դուք կարող եք լինել միայնակ ծնողով ընտանիքում կամ չունենաք ձեր տանը նախագահող քահանայության կրող: Ձեզ և ձեր ընտանիքն ամրացնող քահանայության զորությունը հրավիրելու դեռևս շատ ուղիներ կան: Անկախ մեր պայմաններից, մենք բոլորս էլ պետք է՝

- Աղոթենք, ուսումնասիրենք սուրբ գրությունները և ծոմ պահենք: Այդ ջանքերը ձեզ կօգնեն հոգեպես ամուր լինել և Հոգին հրավիրել ձեր կյանք և ձեր ազդեցության ոլորտ:
- Ժամանակ տրամադրենք մեծարելու մեր կոչումները կամ Եկեղեցու հանձնարարությունները և պատրաստվենք կիրակնօրյա դասերին: Այդ ամենը կօգնի ձեզ ինքնավստահություն ձեռք բերել և աջակցություն ցուցաբերել քահանայության ծրագրերին:
- Հարգանք դրսևորենք մեր ընտանիքի բոլոր անդամների հանդեպ և աջակցենք նրանց առողջ և ստեղծարար միջոցառումներին: Այդ ընտրություններն օգնում են ամրացնել ողջ ընտանիքը:
- Ձեր ընտանիքի հետ կիսվեք այն ամենով, ինչ սովորել և կատարել եք Եկեղեցու դասարաններում և քվորումներում: Այդպես կարող եք ավետարանի ուսմունքները ձեր տուն բերել:
- Գտեք՝ ձեր շրջապատի մարդկանց համար բարի գործեր կատարելու ուղիներ:
- Օգնեք տնային գործերում կամ օգնեք ձեր եղբորը կամ քրոջը:
- Քրիստոսանման սեր ցուցաբերեք ձեր ընտանիքի հանդեպ՝ դա առավել, քան որևէ այլ բան, ավելի մեծ ազդեցություն կթողնի ամուր ընտանեկան կապեր հաստատելու գործում:

Պատվեք ձեր ուխտերը

Ծառայելով, սիրելով և ամրապնդելով մեր ընտանիքները, մենք հավատարիմ ենք մնում մկրտության ժամանակ կապած ուխտերին՝ կանգնել որպես Հիսուս Քրիստոսի վկաներ, պահել Նրա պատվիրանները և ամրացնել մեր շուրջը գտնվողներին: Մենք կարող ենք ապավինելով քահանայության ուխտերի ուժին օրհնություն և օգնություն լինել մեր տանը և ընտանիքում: *Քահանայություն, ծառայություն* և *տուն*,- այս բառերը պետք է հավերժ կապված լինեն մեր մտքում: Մեր ընտանիքների անդամները պետք է առաջնահերթություն լինեն, երբ ուղիներ ենք գտնում մասնակցելու փրկության աշխատանքին: Երբ ամրացնում ենք մեր ընտանիքները, մենք նաև ամրացնում ենք Եկեղեցին, մեր համայնքները և աշխարհը: ■

«Ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում՝ Իր զավակների հավերժական ճակատագրի համար»:

«Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա*, նոյ. 2010, 129:

«Տիրոջ աշխատանքում երբևէ կատարած ձեր ամենակարևոր գործը կլինի ձեր տան պատերի ներսում»:

***Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Հարոլդ Բ. Լի* (2000), 134. (35892)**

ԱՐԺԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

Ուզում եմ խոսել հատկապես նշելով, թե ինչպես ունենալ հատուկ վստահություն։

Երեց
Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու
Առաքյալների
Քվորումից

Իմ ուղերձը ձեզ ուղղված հույսի և քաջալերման խոսք է այժմ և ձեր հետագա կյանքի համար։ Կան բազմաթիվ դժվարություններ աշխարհում, բայց դժվար ժամանակներ եղել են բոլոր դարերում և դարաշրջաններում։ Ուշադրություն մի դարձրեք դրանց և մի հուսահատվեք դրանցից։ Գալիք տարիներն իրենց հետ կբերեն հրաշալի հնարավորություններ և մեծ օրհնություններ։ Մենք կշարունակենք առաջադիմել գիտության և տեխնոլոգիայի, բժշկության, հաղորդակցման և այն բոլոր ոլորտներում, որոնք մեծ ներդրում ունեն մեր կյանքը հարստացնելու առումով։ Դուք ապրում եք փառահեղ ժամանակաշրջանում, որ երբևէ եղել է աշխարհում, երբ օրվա մեջ ավելի շատ օրհնություններ են գալիս ավելի շատ մարդկանց ողջ աշխարհում, քան պատմության որևէ այլ դարաշրջանում։ Հիշեք, ձեր տատիկը երբեք չի երազել թվային սարքերի մասին, երբ ձեր տարիքին էր, իսկ ձեր պապիկը դեռևս գաղափար չունի, ինչպես պետք է հաղորդագրություն ուղարկել։ Ուրեմն, եղեք երջանիկ, առողջ և լավատես։

Մասնավորապես ընդգծեցի դա, քանի որ վերջերս մի հոդված կարդացի, որտեղ ասվում էր, որ ամենատարածված հիվանդությունը երիտասարդների մեջ այսօր շաքարախտը, քաղցկեղը կամ սրտի արատը չէ։ (Առողջական նման խնդիրները հիմնականում առաջանում են ոչ թե ձեր, այլ իմ տարիքի մարդկանց մոտ։) Ոչ, հիվանդությունը, որից դեռահաս կամ 20-ին անց տարիքում տառապում են շատերը անվստահությունն է, վախը ապագայի հանդեպ, ցածր ինքնագնահատականը և ընդհանուր առմամբ՝ վստահության պակասը իրենց և իրենց շրջապատող աշխարհի հանդեպ։

Ձեզանից տարիքով շատ մեծ լինելու հետ մեկտեղ, ես հասկանում եմ նմանատիպ մտահոգությունները, որովհետև երիտասարդ տարիքում ես ևս թվում էր հայտնվում եմ այնպիսի իրավիճակներում, որտեղ այդքան էլ ինքնավստահություն չէի դրսևորում։ Հիշում եմ, որ պայքարում էի լավ թվանշանների համար, հույս փայփայելով, որ կրթաթոշակի կարժանանամ, և մտածելով, թե ինչու էին մյուսներն ավելի շնորհալի այդ առումով։ Հիշում եմ, տարիներ շարունակ սպորտային մրցույթներում փորձում էի վստահորեն խաղալ, որն անհրաժեշտ էր ավագ դպրոցում և քոլեջի տարիներին սպորտում հաջողության հասնելու համար, շատ ցանկանալով հաղթել կարևոր խաղում կամ տուն բերել այնքան բաղձալի հաղթանակը։ Հատկապես հիշում եմ, վստահության պակասը աղջիկների հետ շփվելիս, որը երիտասարդ տղաների համար հաճախ մեծ անհանգստություն առաջացնող թեմա է։ Այնքան

երախտապարտ եմ Քույր Հոլլանդին, որ վերցրեց այդ նախաձեռնությունը: Այո, հիշում եմ բոլոր բաները, ինչ դուք եք հիշում, անվստահ իմ տեսքի առումով, կամ մտահոգությունը ընդունված լինելու կամ ապագայի վերաբերյալ:

Ես նպատակ ունեմ այստեղ ոչ թե քննարկել երիտասարդների առաջ ծառացած այն բոլոր խնդիրները, որոնք անվստահության և կասկածի տեղիք են տալիս, այլ ցանկանում եմ հատկապես խոսել, թե ինչպես ունենալ հատուկ վստահություն, որը իրավամբ վաստակելու դեպքում հրաշքներ է գործում մեր կյանքի բոլոր բնագավառներում, հատկապես մեր ինքնագնահատականի և մեր ապագան տեսնելու առումով: Սա հիմնավորելու համար մի պատմություն կպատմեմ:

Անձնական արժանավորության արժեքը

Տարիներ առաջ, Բարձրագույն Իշխանություն կանչվելուց շատ առաջ, ես ելույթ ունեցա երիտասարդ չափահասների համաժողովում: Համաժողովն ավարտվեց վկայության ժողովով, որի ժամանակ միսիայից վերադարձած մի երիտասարդ, գեղեցիկ միսիոներ կանգնեց, որ իր վկայությունը բերի: Նա լավ, մաքուր և վստահ տեսք ուներ, ճիշտ ինչպիսին վերադարձած միսիոները պետք է լինի:

Երբ սկսեց խոսել, արցունքներ հայտնվեցին նրա աչքերում: Նա ասաց, որ երախտագիտություն է զգում Վերջին Օրերի երիտասարդ Սրբերի նման մեծ խմբի մեջ կանգնելու հնարավորության և իր վարած լավ կյանքի համար: Բայց նա ասաց, որ այդ զգացողությունը միայն հնարավոր դարձավ մի քանի տարի առաջ ունեցած մի փորձառության պատճառով, փորձառություն, որը հավերժ կերտեց նրա կյանքը:

Այնուհետև նա պատմեց, որ 18 տարեկանում երեց կարգվելուց շատ չանցած մի օր ժամադրությունից տուն եկավ: Այդ ժամադրության ժամանակ ինչ-որ բան էր կատարվել, որի համար նա հպարտ չէր: Նա մանրամասներից չխոսեց, որի կարիքը չկար: Մինչ այսօր ես չգիտեմ ինչ էր տեղի ունեցել, բայց դա մեծ ազդեցություն էր թողել նրա հոգու և ինքնագնահատականի վրա:

Երբ տան մոտ նա մեքենայի մեջ նստած մտածում էր և ցավում տեղի ունեցածի համար, նրա ոչ անդամ մայրը տնից շնչակտուր վազելով մոտեցավ մեքենային: Նա արագ պատմեց, որ փոքր եղբայրը տանը ընկելով գլուխը ուժեղ հարվածել է և գտնվում է տագնապի ու ցավի մեջ: Ոչ անդամ հայրն անմիջապես շտապ օգնություն էր կանչել, սակայն այն դեռ որոշ ժամանակից տեղ կհասնի:

Երբ նա նստած էր իր մեքենայի մեջ, իր տան մուտքի մոտ, մտածելով այդ ամենի մասին և անկեղծ զղջալով, նրա մայրը, որն անդամ չէր, խուճապահար դուրս վազեց տնից:

«Արի ու մի բան արա,—բղավում էր նա,—ձեր Եկեղեցում նման դեպքերում ինչ-որ բան եք անում, չէ՞: Դու նրանց քահանայությունն ունես: Արի ու մի բան արա»:

Այդ ժամանակ նրա մայրը շատ բան չգիտեր Եկեղեցու մասին, բայց գիտեր քահանայության օրհնությունների մասին: Չնայած որ այդ գիշեր իր համար շատ սիրելի անձնավորությունն իր հավատքի և ուժի կարիքն ուներ, այդ երիտասարդը չկարողացավ ոչինչ ձեռնարկել: Նա չկարողացավ ստիպել իրեն գնալ Տիրոջ առաջ և անհրաժեշտ օրհնությունը խնդրել:

Նա արագ դուրս գալով մեքենայից վազեց փողոցն ի վար մի արժանի տարեց մարդու տուն, ով երկու-երեք տարի առաջ տղայի դարձից հետո նրա ընկերն էր դարձել: Բացատրություն տալուց հետո, նրանք երկուսով արագ եկան, նախքան շտապօգնության ժամանելը: Վկայության ժողովին տրված այդ պատմության լավ ավարտն այն էր, որ այդ տարեց տղամարդը իսկույն քահանայության մի հրաշալի, հզոր օրհնություն էր տվել, որից հետո վնասված երեխան հանգստացել էր և նրա վիճակը կայունացել էր: Հիվանդանոցում արդեն մանրազննին ստուգումից պարզ էր դարձել, որ առողջության համար ոչ մի վտանգավոր վնասվածք չի հասցվել: Ընտանիքի համար ծանր պահն արդեն ետևում էր:

Այնուհետև այդ վերադարձած միսիոներն ասաց հետևյալ խոսքերը. «Ով չի եղել այն իրավիճակում, որի մեջ հայտնվեցի ես այդ գիշեր, երբեք չի զգա այն ամոթն ու ցավը, որ ես ապրեցի գիտակցելով, որ արժանի չեմ օգտագործելու քահանայությունը, որ ես էի կրում: Դա նույնիսկ ավելի ցավալի հիշողություն է ինձ համար, քանի որ իմ փոքր եղբայրն իմ կարիքն ուներ և իմ սիրելի ոչ անդամ ծնողներն անչափ վախեցած էին և իրավունք ունեին ինձանից ավելին

«Այդ օրվանից ես երբեք չեմ արել որևէ բան, որը թույլ չէր տա ինձ վստահ կանգնել Տիրոջ առաջ և խնդրել Նրա օգնությունը կարիքի պահին», - ասաց նա:

ակնկալելու: Բայց այսօր ձեր առջև կանգնած կարող եմ ձեզ հավատացնել, որ ճիշտ է ես կատարյալ չեմ, սակայն այդ օրվանից ի վեր երբեք չեմ արել մի բան, որն ինձ ետ կպահեր կարիքի դեպքում Տիրոջ առաջ վստահորեն կանգնելու և Նրա օգնությունը խնդրելու համար: Բայց դա ճակատամարտ է, որը ես հաղթում եմ: Ես իմ կյանքում զգացել եմ դեպի ինձ ուղղված դատապարտող մատը, և չեմ ուզում երբևէ կրկին զգալ դա, եթե կարող եմ ինչ-որ բան անել այդ առումով: Եվ իհարկե,- եզրափակեց նա,- դրա համար ես կարող եմ *ամեն ինչ* անել»:

Նա ավարտեց իր վկայությունը և նստեց: Նա դեռևս իմ աչքի առաջ է: Կարող եմ դեռևս տեսնել այդ պատկերը: Եվ մինչ այժմ հիշում եմ դրանից հետո դահլիճում տիրող բացարձակ լռությունը, երբ ամեն ոք հնարավորություն ուներ ավելի խորը քննելու իր հոգին, ավելի հաստատակամորեն խոստանալով ապրել Տիրոջ կողմից տրված այս զորեղ խոսքերով.

«Թող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար. *այն ժամանակ քո վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ.* և քահանայության վարդապետությունը կիջնի քո հոգու վրա, ինչպես ցողը երկնքից:

Սուրբ Հոգին կլինի քո մշտական ընկերը, և քո գավազանը կլինի արդարության ու ճշմարտության անփոփոխ գավազան» (ՎևՈ 121.45–46; շեշտադրումն ավելացված է):

Վայելեք Աստծո Հոգին

Իմ սիրելի երիտասարդ ընկերներ, ես ձեզ մաղթում եմ հրաշալի կյանք: Մտածեք լավագույն ձևով և հույս տածեք լավագույնի համար, հավատ ունեցեք ապագայի հանդեպ: Հրաշալի կյանք է սպասվում ձեզ: Ձեր Երկնային Հայրը սիրում է ձեզ: Եթե սխալներ են գործվել, կարող եք ապաշխարել և թողություն ստանալ, ինչպես այս երիտասարդ տղայի դեպքում: Դուք ունեք այն ամենը, ինչի համար պետք է ապրեք, ծրագրեր կազմեք և հավատաք: Ձեր խղճի հավաստիացումն ունենալով, երբ մնում եք մենակ ձեր հիշողությունների հետ, կարող եք շատ անձնական ձևով զգալ Աստծո Հոգին: Ես ուզում եմ, որ դուք վայելեք այդ Հոգին, և ձեզ միշտ վստահ զգաք Տիրոջ ներկայությամբ: Թող որ առաքինի մտքերը դրդեն մեզ մաքուր գործերի այսօր, վաղը և հավերժ: ■

Հատված 2006թ. դեկտեմբերի 31-ին տրված Երիտասարդների հավաքի ելույթից:

ԴՈՒՌԸ և ՈՒՂԻՆ

Քահանայության ծեսերն ու ուխտերը մեզ դնում են հավերժական կյանք տանող ուղու վրա և օրհնում ուժով, որի կարիքն ունենք այժմ:

Ենք բոլորս ձգտում ենք հավերժական կյանքին, որը նշանակում է փրկվել և համբարձվել սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանում, որտեղ կարող ենք ընտանիքներով ապրել Երկնային Հոր ներկայության մեջ:

Ի լրումն Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի և ապաշխարության, քահանայության ծեսերն ու ուխտերը հնարավորություն են տալիս ոտք դնել դեպի հավերժական կյանք տանող ուղու վրա: Կարևոր չէ, թե երբ եք սկսել այդ ուղին կամ որ մասում եք գտնվում, ծնվել եք Եկեղեցում, թե հետագայում եք դարձի եկել, ձեր ողջ կյանքում ակտիվ եք եղել, թե վերջերս եք վերադարձել Եկեղեցու ակտիվությանը, դուք կարող եք առաջ գնալ այդ ուղով, եթե կենտրոնանաք ձեր ուխտերի և այն ամենի վրա, ինչ կարող եք անել դրանք ստանալու և պահելու համար:

Եվ կարևոր է իմանալ, որ քահանայության ծեսերն ու ուխտերը լոկ փառահեղ ապագայի խոստում չեն: Դրանք նաև մեզ ուժ, սփոփանք և աջակցություն են պարգևում, որի կարիքը մենք ունենք այժմ, որպեսզի առաջ գնանք այդ ուղով և արդարակեցության մեջ համբերենք մինչև վերջ: ■

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԿՅԱՆՔ ՏԱՆՈՂ ՈՒՂԻ (ՀԱՄԲԵՐԵԼ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ)

Տես 2 Նեփի 31:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

«Եկեղեցում քահանայության իշխանության միջոցով կատարվում են սուրբ արարողություններ և ուխտեր, որոնք կապում են **ընտանիքները միասին** և մեզանից յուրաքանչյուրին արժանի դարձնում **վերադառնալ Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի** մոտ՝ սելեստիալ արքայություն: Այդ արարողությունները խաղաղություն են բերում, քանի որ դրանք ուխտեր են կապում Տիրոջ հետ»:

Երեց Քվենթին Լ. Քուք, Տասներկու Առաքյալների Քվորումից, «Անձնական խաղաղություն՝ արդարակեցության վարձք», *Լիահոնա*, մայիս 2013, 34:

Հաղորդություն— մկրտության ուխտի ամենշաբաթյա նորոգում

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՊԱՐԳԵՎ

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԵՍԵՐ ԵՎ ՈՒԽՏԵՐ

ՕԵՍԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԱՄՐԱՑՈՒՄ

Հայրապետական օրհնություններ—հատուկ անհատական առաջնորդություն և խոստացված օրհնություններ

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀՈՒՄ ԵՎ ԿԱՐԳՈՒՄ (ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ)

ՏԱՃԱՐԱՅԻՆ ՕԺՏՈՒՄ

Հիվանդների օրհնություններ—օգնություն և բժշկում

Հայրական օրհնություններ, սփոփանքի և խորհրդի այլ օրհնություններ—խաղաղություն և ուղեցույց անհրաժեշտության դեպքում

ԸՆԹԱՑԻԿ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սուրբ գրություններ—առաջնորդություն և հրահանգներ՝ տրված որպես Աստծո և Նրա ժողովրդի միջև ուխտի մաս (տես ՎԵՈՒ 84.57)

Աղոթք—«[Վարդապետը] առաջարկում է մեզ «միշտ Իրեն հիշելու» ուխտը և զգուշացնում «միշտ աղոթել», մեր հույսը դնելով միայն Իր՝ մեր միակ ապավենի վրա» (President Henry B. Eyring, First Counselor in the First Presidency, "Always," *Ensign,* Oct. 1999, 9)

Ծառայություն—մեր ուխտերի կատարում՝ ծառայելով Աստծուն և Նրա զավակներին, ներառյալ՝ կոչումներ, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանք, ավետարանով կիսվել, լիաժամկետ միսիոներական ծառայություն

Ապաշխարություն—հիշել մեր ուխտերը և մոտենալ Փրկչին, երբ շեղվել ենք, երբեմն ստանալով քահանայության ղեկավարների օգնությունը

ՏԱՃԱՐԱՅԻՆ ԿՆՔՈՒՄ

«Ավետարանի պատվիրանների, արարողությունների և ուխտերի ուղու վրա մնալը **պաշտպանում** և **պատրաստում** է մեզ կատարելու Աստծո գործն այս աշխարհում»:

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս, Տասներկու Առաքյալների Քվորումից, «Հաստատ կանգնեք սուրբ տեղերում», *Լիահոնա,* մայիս 2013, 49:

«Եթե դուք արժանիորեն մասնակցեք քահանայության արարողություններին, Տերը ձեզ կտա ավելի մեծ **ուժ, խաղաղություն և հավերժական հեռանկար»:**

Երեց Նիլ Լ. Անդերսեն՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, «Զորություն քահանայությունում», *Լիահոնա,* նոյ. 2013, 95:

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԿՅԱՆՔ (ՍԵԼԵՍՏԻԱԼ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԵՏ)

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԲՐԱՅԱՆ ԲԻՇԻ

«Ի՞նչ պետք է անեմ ես, երբ դպրոցում բարձրացվում է մի թեմա, որը դեմ է ավետարանի ուսմունքներին, ինչպես օրինակ՝ արհեստական վիժեցումը»:

Կան շատ ձևեր պատասխանելու կամ չպատասխանելու՝ կախված իրավիճակից: Նախ, մտածեք, թե ինչ տեղի կունենա, եթե դուք ասեք կամ չասեք ինչ-որ բան: Եթե ձեր լռությամբ դուք ցույց կտաք մյուսներին, որ համաձայն եք նրան, ինչը գիտեք, որ սխալ է, դուք կարող եք պարզ եղանակ գտնել, ձեր անհամաձայնությունը արտահայտելու համար: Ձեր կարծիքով, եթե ձեր մեկնաբանությունները միայն վեճի առիթ կդառնան, ապա կարող եք մեկ ուրիշ անգամ հայտնել ձեր կարծիքը: Ինչևէ, եթե ձեր դասարանում տիրում է հարգանք միմյանց հանդեպ և ուսուցիչը ոգևորում է մասնակցությունը, դուք կարող եք աղոթել ոգեշնչման համար, որից հետո միայն հայտնել ձեր կարծիքը:

Դուք կարող եք նաև նախորոք պատրաստվել, եթե գիտեք դասարանում ինչ թեմայի շուրջ է քննարկում ծավալվելու: Բացի տվյալ թեմային վերաբերող սուրբ գրություններից և համաժողովի ելույթներից, աչքի անցկացրեք՝ *Հավատքին հավատարիմ, Ավետարանի սկզբունքները* կամ *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկները: Կարող եք նաև պարապել՝ այդ թեման բացատրելով ընտանեկան երեկոյի ժամանակ: Պատրաստվելուց հետո զրուցեք ձեր ուսուցչի կամ դասընկերների հետ:

Պատասխանելու *ձևը* նույնքան կարևոր է, որքան ձեր *խոսքը*: Եղեք հարգալից և մի փորձեք օգտագործել Եկեղեցու տերմինաբանությունը: Ձեր դասընկերները կշփոթվեն, երբ ասեք. «Իմ ծխի Երիտասարդ Կանանց խորհրդատուն ուսուցանել է ինձ, որ . . .»:

Կարևոր է, որ հիշեք, թե ինչ է Եկեղեցին ուսուցանում և ինչ է Սուրբ Հոգին ասում ձեզ, որպեսզի չխաբվեք դասարանում լսած կամ կարդացած սխալ մեկնաբանություններով:

Հիշեք՝ ում եք դուք ներկայացնում

Նման իրավիճակներում հայտնվելիս փորձեք հիշել, որ ուրիշները, հնարավոր է, չկիսեն ձեր տեսակետը տվյալ հարցում: Մի համառեք և պնդեք ձեր տեսակետը, բայցև մի վախեցեք պաշտպանել ձեր համոզմունքները: Հիշեք, որ դուք ներկայացնում եք Քրիստոսին:

Մաղլեն Կ., 16 տարեկան, Վայոմինգ, ԱՄՆ

Եղեք քաղաքավարի

Կարծում եմ, պետք է քաղաքավարի կերպով կիսվեմ իմ տեսակետով, ինչպես նաև հիմնավորեմ, թե ինչու եմ հավատում դրան: Չեմ կարծում, որ պետք է մյուսներին ստիպեմ կիսել իմ տեսակետը, սակայն կարծում եմ, որ նրանք պետք է իմանան, թե ինչպիսի դիրքորոշում ունեմ տվյալ թեմայի վերաբերյալ, և հասկանան իմ տեսակետը:

Սաբրինա Ս., 16 տարեկան, Օրեգոն, ԱՄՆ

Իմացեք Եկեղեցու դիրքորոշումը

Ես մասնակցել եմ մի դասընթացի, որտեղ վիճելի թեմաներ հաճախ էին քննարկվում: Պետք է նախ հարգել մյուսների համոզմունքները, որը և ակնկալում եք ձեր դասընկերներից: Եթե թեման ուղղակիորեն հակասում է Եկեղեցուն, անկաշկանդ ներկայացրեք ձեր կարծիքը: Կարիք չկա ձեր պատասխանում հիշատակել Եկեղեցին: Այնուամենայնիվ, համոզվեք, որ գիտեք Եկեղեցու դիրքորոշումը տվյալ թեմայի վերաբերյալ:

Ջոզեֆ Զ., 18 տարեկան, Մերիլենդ, ԱՄՆ

Պատասխանները Եկեղեցու վարդապետության մասին պաշտոնական հայտարարություններ չեն, այլ միտված են օգնելու և խորհուրդ տալու:

Եղեք հարգալից

Կարևոր է, որ մենք լսելի լինենք, սակայն նաև շատ կարևոր է հարգել մյուսների համոզմունքները: Մի վիճեք: Վիճաբանությունը ստեղծում է թշնամիներ և խառնաշփոթ: Եթե մեր կրոնին դեմ միտք է արտահայտվել, մնացեք հանգիստ, կենտրոնացած և եղեք հարգալից, մի մոռացեք լսել Հոգուն: Կան բաներ, որ մենք չենք հասկանում, իսկ Աստված հասկանում է: Մենք պետք է լսենք և սովորենք Նրա Հոգուց:

Հաննա Մ., 18 տարեկան, Յուտա, ԱՄՆ

Կիսվեք այն ամենով, ինչ ուսուցանում է Եկեղեցին

Ես փորձում եմ պատասխանել նման հարցերին իմ ունակությունների չափով, որովհետև ընկերներս և ուսուցիչներս չգիտեն, մինչև որ չեմ ասում նրանց, թե ինչպիսին է Եկեղեցու դիրքորոշումը տվյալ հարցում: Այդպիսով, նրանք կիմանան դա հետագայի համար, իսկ դուք կշահեք հոգևոր առումով: Հիշեք՝ «Այսպէս լուսաւորէ ձեր լոյսը մարդկանց առաջին, որ ձեր բարի գործերը տեսնեն, եւ փառաւորեն ձեր Հօրը որ երկնքումն է» (Մատթեոս Ե.16):

Ջոշուա Մ., 16 տարեկան, Մանչեսթեր, Անգլիա

Օգնեք մյուսներին մտածել, թե ինչն է ճիշտ

Ազնվորեն կիսվեք ձեր զգացմունքներով: Դպրոցում շատ թեմաների շուրջ են քննարկումներ ծավալում, որոնցից է՝ արհեստական վիժեցումը, այնպես որ մի ամաչեք ձեր կարծիքը հայտնել: Դա լավ առիթ է կիսվելու ավետարանով և այն չափանիշներով, որոնց մենք հավատում ենք: Ձեր համոզմունքներով կիսվելով կօգնեք մարդկանց մտածել այն մասին, թե ինչն է ճիշտ:

Մեդիսոն Ռ., 14 տարեկան, Հյուսիսային Կարոլինա

Ուղղեք կեղծ վարդապետությունը

Մենք պատկանում ենք միսիոներական-ուղղվածությամբ Եկեղեցու, որտեղ բոլորս կանչված ենք քարոզելու, ուստի, մենք չենք կարող թույլ տալ, որ կեղծ վարդապետություն տարածվի: Նման իրավիճակում մենք պետք է հայտնենք մեր կարծիքը, որպեսզի ուղղենք որևէ կեղծ վարդապետություն և օգնենք մարդկանց հասկանալ տվյալ թեմայի վերաբերյալ վերականգնված ավետարանի տեսակետը:

Դերլիդ Մ., 16 տարեկան, Կասայ-Օկիդենտալ նահանգ, Կոնգոյի դեմոկրատական հանրապետություն

Խուսափեք հակառակությունից

Ես կբացատրեմ իմ կարծիքը, պաշտպանելով իմ սկզբունքները և Եկեղեցու վարդապետությունները, հարգելով մյուսների մտքերը: Ես չեմ վիճաբանի, որը կհեռացնի Հոգին, որը կարող էր դրական ազդեցություն թողնել մյուսների վրա:

Դայանա Վ., 15 տարեկան, Բուենոս Այրես, Արգենտինա



ԵՂԵՔ ԱՆՍԱՍԱՆ

«Մեր պարտքն է մեր դիրքորոշումը բացատրել խելամտորեն, ընկերաբար համոզելով և բերելով ճշգրիտ փաստեր: Մենք պետք է ամուր և անսասան լինենք օրվա բարոյական հարցերի, ավետարանի հավերժական սկզբունքների վերաբերյալ, բայցև չվիճել ոչ մարդու և ոչ էլ կազմակերպության հետ: Վիճաբանությունը կառուցում է պատեր և դնում խոչընդոտներ, իսկ սերը բացում է դռներ»:

Երեց Մերվին Ջ. Էշտոն՝ (1915–94) Տասներկու Առաքյալների Քվորումից, «Ժամանակ չկա հակառակությունների», *Ensign,* May 1978, 8.

ՀԱՋՈՐԴ ՀԱՐՑԸ

«Ինչպե՞ս կարող եմ այնքան անկաշկանդ զգալ ինձ, որպեսզի իմ եպիսկոպոսի հետ խոսեմ ինձ մտահոգող խնդիրների կամ հարցերի մասին»:

Ուղարկեք ձեր պատասխանը և ցանկության դեպքում, բարձրորակ լուսանկարը մինչև 2014թ. մայիսի 15-ը liahona@ldschurch.org կամ փոստով (տես հասցեն էջ 3):

Պատասխանները կարող են խմբագրվել չափերի կամ հստակության համար:

Հետևյալ տեղեկությունը և թույլտվությունը պետք է ներառված լինի ձեր է-փոստի կամ նամակի մեջ. (1) լրիվ անունը, (2) ծննդյան թիվը, (3) ծուխը կամ ճյուղը, (4) ցիցը կամ շրջանը, (5) ձեր գրավոր թույլտվությունը և, եթե դուք 18 տարեկանից ցածր եք, ձեր ծնողի գրավոր թույլտվությունը (է-փոստը ընդունելի է) ձեր պատասխանը և լուսանկարը տպագրելու համար:

ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴԱՍԵՐ

Այս ամսվա թեման՝
Ուրացություն և Վերականգնում

ՃԻՇՏ է թե ՍԽԱԼ

Երբեմն ճիշտը սխալից տարբերելը դժվար է, սակայն մեր Երկնային Հայրը տվել է մեզ հզոր պարգևներ, որպեսզի օգնի մեզ տարբերել Աստծո ճշմարտությունը սատանայի ստերից։

Դեյվիդ Ա. Էդվարդս
Եկեղեցու ամսագրեր

Եթե երբևէ ճիշտ կամ սխալ պատասխաններով ստուգողական հարցերի եք պատասխանել, գիտեք, որ երբեմն դժվար է գտնել սխալը։ Նմանապես, հավատքի, համոզմունքի և ամենօրյա կյանքի մեծ հարցերում երբեմն նաև դժվար է ճիշտը սխալից տարբերել, որն անչափ կարևոր է։

Սակայն, մենք չպետք է վախենանք անպատրաստ քննություն հանձնողների պես։ Մեր Երկնային Հայրը օրհնել է մեզ շատ պարգևներով, օգնելով մեզ ընկալել Իր ճշմարտությունը և հակառակորդի սուտը։

Տարբեր տեսակի ստեր

Նախ, ավելի պարզորոշ ներկայացնելու համար, տրվում է ճիշտ-կամ-սխալ վիկտորինա ձեզ համար.

1 Լուսինը կանաչ է։

❍ ՃԻՇՏ ❍ ՍԽԱԼ

2 Ապոլո 12 տիեզերանավի տիեզերագնաց Նիլ Արմստրոնգը, որն առաջին մարդն էր, որ քայլեց լուսնի վրա, ասել է, որ այդ իրադարձությունը մի «հսկա թռիչք էր մարդկության համար»։

❍ ՃԻՇՏ ❍ ՍԽԱԼ

3

Ազգային ավիացիայի և տիեզերական հետազոտությունների կենտրոնի (NASA) ծրագիրը 1969թ. չկարողացավ գնալ Մարս, այնպես որ նրանք ստիպված գնացին լուսին:

❍ ՃԻՇՏ ❍ ՍԽԱԼ

4

Արևային քամիները, ճառագայթումը, տիեզերական ճառագայթները և այլ խոչընդոտները թույլ չէին տա մարդուն իջնել լուսնի վրա, բացի այդ լուսանկարները փոփոխված են և ականատեսների պատմությունները որոշ մանրամասների վերաբերյալ չեն համընկնում, այնպես որ ԱՄՆ-ի կառավարությունը հավանաբար բեմականացրել է այդ ողջ իրադարձությունը:

❍ ՃԻՇՏ ❍ ՍԽԱԼ

Ժամանակակից ստեր

Երբ խոսքը վերաբերում է այն ամենին, ինչն ազդում է ձեր մտքերի, համոզմունքների, ընտրությունների և վարքագծի վրա, որոնք ունեն հավերժական հետևանքներ, արժե դիտարկել տարբեր տեսակի կեղծիքներ, քանի որ սատանան «ստերի հայրը» (2 Նեփի 9.9), մեզ խաբելու համար կօգտագործի ամեն եղանակ: Տրված են մի քանի օրինակներ, թե ինչպես է նա դա անում այսօր, ինչպես նաև բերված են օրինակներ, թե ինչպես կարող ենք մենք ճիշտ պատասխանել:

Այս հարցերի պատասխանն է՝ *Սխալ*, և այդ հարցերում առկա են հիմնական տեսակի անճշտություններ, որոնց ամենայն հավանականությամբ դուք կհանդիպեք:

Հարց 1-ը *սովորական անճշտություն* է՝ բացահայտ սխալ: Հարց 2-ը *մասնակի ճշմարտություն* է, որը բարդ է, քանի որ զուգորդում են մեկ կամ ավելի ճշմարտությունները անճշտության հետ (դա Ապոլո 11 էր, և ոչ Ապոլո 12— բռնվեցի՞ք): Հարց 3-ը պարունակում է *սխալ երկակիություն,* կամ իրավիճակ, որտեղ միայն երկու տարբերակներ են ներկայացված, որոնք իրականում միակ տարբերակները չեն (օրինակ՝ NASA-ն կարող էր ընտրել չգնալ ոչ մի տեղ): Հարց 4-ը *«տրամաբանական» փաստարկ* է, որը գուցե հնչում է ողջամիտ, սակայն հաճախ ունի թերի ապացույցներ, որ հանգեցնում է որոշակի սխալ եզրակացության:

Սովորական անճշտություն

Սխալ միտք.
Պոռնոգրաֆիան նորմալ է և ոչ մեկին վնաս չի պատճառում:

Ուր է այն տանում (Մեծ սուտ).
Վստահ եղեք և դիտեք պոռնոգրաֆիա:

ճշմարտությունը.
Պոռնոգրաֆիան աղավաղում է սեքսուալության վերաբերյալ մեր պատկերացումը, կարող է հակում առաջացնել, խորապես վնասում է մեզ հոգևոր առումով և կարող է կործանել հարաբերությունները:

Մասնակի ճշմարտություն

Սուտ միտք.
Յուրաքանչյուր մարդ յուրահատուկ է և կարող է ապրել ըստ իր կամքի, այնպես որ ձեր կյանքում ամենակարևորն այն է, թե ինչպես եք զգում և դրսևորում ձեզ:

Ուր է այն տանում (Մեծ սուտ).
Դուք չպետք է թույլ տաք Աստծուն կամ Եկեղեցուն թելադրել ձեզ ինչպես պետք է ապրել, այնպես որ վստահորեն արեք այն, ինչ ուզում եք, եթե դա ձեզ համար հաճելի է:

ճշմարտությունը.
Մեզանից յուրաքանչյուրը Երկնային Հոր առանձնահատուկ զավակն է, ով ցանկանում է, որ մենք հնարավորինս զարգանանք և նմանվենք Իրեն: Նրա պատվիրաններին հնազանդվելն օգնում է մեզ լիարժեք ուրախություն ունենալ:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ISTOCK/THINKSTOCK

Ինչպես իմանալ ճշմարտությունը

Ուրեմն, որտեղի՞ց է բխում ճշմարտության մասին ավելի լիարժեք պատկերացումը: Ինչպե՞ս կարող ենք բացահայտել սուտը: Ահա մի քանի հզոր պարգևներ, որոնք Երկնային Հայրը տվել է մեզ՝ ճշմարտությունը կեղծիքից զանազանելու համար:

- ***Քրիստոսի Լույսը:*** «Քրիստոսի Լույսը . . . հուշում է բոլոր բանական մարդկանց երկրի վրա տարբերելու ճշմարտությունը մոլորությունից, ճիշտը սխալից: Այն ակտիվացնում է ձեր խիղճը»:[1]
- ***Սուրբ Հոգին:*** «Ճշմարտության Հոգին . . . կուղղորդի ձեզ դեպի ողջ ճշմարտությունը» (Հովհաննես 16.13):
- ***Սուրբ գրությունները:*** «Աստված օգտագործում է սուրբ գրությունները, որպեսզի դիմակազերծի սխալ մտածելակերպը, կեղծ ավանդույթները և մեղքը՝ իր կործանարար հետևանքներով»:[2] Այդ առումով կարևոր է Մորմոնի Գիրքը, քանզի այն «բացահայտում է Քրիստոսի թշնամիներին: Այն հերքում է կեղծ վարդապետությունները և դադարեցնում հակառակությունը (տես 2 Նե. 3.12)»:[3]
- ***Ժամանակակից մարգարեները:*** «[Մարգարեի] պարտականությունն է՝ մարդկությանը հայտնի դարձնել Աստծո կամքը և իրական բնավորությունը: . . . Մարգարեն դատապարտում է մեղքը և զգուշացնում դրա հետևանքների մասին»:[4]
- ***Կրթություն:*** «Սուրբը . . . ձգտում է սովորել ուսումնառությամբ և նաև հավատքով: Կրթությունը . . . հնարավորություն է տալիս մարդուն ճշմարտությունը տարբերել կեղծիքից, հատկապես՝ սուրբ գրություններն ուսումնասիրելով (տես Վևու 88.118)»:[5]

Թեպետ երբեմն հեշտ չէ պատասխանել *Ճիշտ*, թե *Սխալ* հարցին, երբ մի քանի տարբերակներ են տրված, Երկնային Հայրը պարգևներ է տվել, որոնք կարող են օգնել ձեզ պատասխանել նման հարցերին: ■

Սխալ երկակիություն (միայն երկու տարբերակ)

Սխալ գաղափար.
Եկեղեցին քարոզում է որոշակի ապրելակերպերի դեմ, հետևաբար, այն հանդուրժող չէ և ատում է մարդկանց, ընդունող և սիրող չէ:

Ուր է այն տանում (Մեծ սուտ).
Քանի որ Եկեղեցին անհանդուրժող է և ատում է մարդկանց, պետք է այն քննադատել, ծաղրել և դատապարտել, և դուք պետք է դադարեցնեք կապը Եկեղեցու հետ:

Ճշմարտությունը.
Չընդունել ինչ-որ մեկի ապրելակերպը չի նշանակում ատելություն և անհանդուրժողականություն դրսևորել: Մենք կարող ենք կարեկցանք, հարգանք և բարյացակամություն դրսևորել բոլորի, այդ թվում՝ այն մարդկանց հանդեպ, ում ապրելակերպը հակասում է Աստծո օրենքներին, հավատարիմ մնալով Աստծուն և Նրա պատվիրաններին:

«Տրամաբանական» փաստարկ

Սուտ գաղափար
Մորմոնի Գրքում որոշ բաներ հերքվում են ներկայից գիտական ապացույցներով, և դրա թարգմանության մասին պատմությունները հակասական են, ուստի Ջոզեֆ Սմիթն ամենայն հավանականությամբ այդ ամենը հորինել կամ արտագրել է ինչ-որ տեղից:

Ուր է այն տանում (Մեծ սուտ).
Մորմոնի Գիրքը ճշմարիտ չէ և Ջոզեֆ Սմիթը մարգարե չէ, հետևաբար, դադարեցրեք կապը Եկեղեցու հետ:

Ճշմարտությունը.
Գիտությունը հաստատում է Մորմոնի Գրքում գրված շատ բաներ, իսկ ընդդեմ դրա «ապացույցները» թերի են: Սակայն գրքի համար ամենակարևոր ապացույցը Հոգու վկայությունն է առ այն, որ այն ճշմարիտ է և Ջոզեֆ Սմիթը ճշմարիտ մարգարե էր:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ռիչարդ Գ. Սքոթ, «Գիտակցության խաղաղություն և մտքի խաղաղություն», *Լիահոնա,* նոյ. 2004, 15:
2. Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Սուրբ գրությունների օրհնությունը», *Լիահոնա,* մայիս 2010, 33–34:
3. Ezra Taft Benson (1899–1994), "The Book of Mormon Is the Word of God," *Ensign,* May 1975, 64.
4. Guide to the Scriptures, "Prophet," scriptures.lds.org.
5. Russell M. Nelson, "Thus Shall My Church Be Called," *Ensign,* May 1990, 16.

ՄԻԱՑԵՔ ԶՐՈՒՅՑԻՆ

Ինչի մասին պետք է խորհել կիրակի օրը

- Ինչպե՞ս է Երկնային Հայրն օգնել քեզ հասկանալ ճշմարտությունը:
- Ինչպե՞ս կարող ես պայքարել սխալի դեմ:
- Ինչպե՞ս կարող ես մյուսներին քաջալերել՝ գտնել ճշմարտությունը:

Ինչ կարող ես դու անել

- Եկեղեցում կիսվեք, թե ինչպես եք համոզվել, որ վերականգնված ավետարանը ճշմարիտ է:
- Սոցիալական կայքերում կիսվեք մի ճշմարտությամբ և այն մասին, թե ինչպես գիտեք դա:

Երեց Էնրիկե Ռ. Ֆալաբելլա
Յոթանասունից

«Դա շատ հեշտ է, պապիկ»:

«Քննեցէք գրքերը որ դուք կարծում էք թէ նորանցով ունիք յաւիտենական կեանք, եւ նորանք են որ ինձ համար վկայում են» (Հովհաննես 5.39):

Ես սիրում եմ Մորմոնի Գիրքը և իմ Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Մի օր ես ասացի իմ թոռնուհուն՝ Ռաքելին, թե չի ուզում արդյոք Մորմոնի Գիրքը կարդալու նպատակ դնել: Ռաքելը նոր էր կարդալ սովորել:

«Բայց, պապիկ,- նա ասաց,- դա շատ դժվար է: Դա մեծ գիրք է»:

Ապա ես նրան խնդրեցի ինձ համար կարդալ մի էջ: Ես հանեցի վայրկենաչափը և չափեցի նրա կարդալու ժամանակը: Այդ էջը կարդալու համար նրանից ընդամենը երեք րոպե պահանջեց:

Մենք կարդում ենք Մորմոնի Գրքի իսպաներեն տարբերակը, իսկ իսպաներեն Մորմոնի Գիրքը ունի 642 էջ: Ես ասացի նրան, որ ողջ գիրքը կարդալու համար իրենից կպահանջվի 1926 րոպե:

Սա, գուցե, ավելի շատ վախեցրեց նրան, ուստի ես բաժանեցի այդ թիվը 60 րոպեի: Ես նրան ասացի, որ գիրքը կարդալու համար նա պետք է հատկացնի 32 ժամ, որը մեկ ու կես օրից էլ պակաս է:

Ապա նա ասաց ինձ. «Դա շատ հեշտ է, պապիկ»:

Ի վերջո, Ռաքելը, նրա եղբայր Էստեբանը և մեր մյուս թոռնիկները Մորմոնի Գիրքը կարդալու համար մի փոքր ավելի շատ ժամանակ տրամադրեցին: Քանի որ երբ կարդում ենք այն, մենք պետք է ժամանակ հատկացնենք աղոթելու և մեր կարդացածի շուրջ խորհելու համար:

Ռաքելի և Էստեբանի նման մենք բոլորս կարող ենք սովորել սիրել սուրբ գրությունները: Այդ ժամանակ մեզանից յուրաքանչյուրը կարող է բացականչել. «Որքան քաղցր է քո խոսքն իմ քիմքին. մեղրիցն էլ ավելի է իմ բերանին» (Սաղմոս 119.103): ■

2013թ. ապրիլի գերագույն համաժողովի ելույթից:

ՆԿԱՐԱԳՐՈՂՈՒՄԸ: ՋԵՅՄՍ Լ. ՋՈՆՍՈՆԻ

ՓՈՐԹԵՐԻ

Քերոլ Մ. Սթեֆենս
Սփոփող Միության Գերագույն Նախագահության Առաջին Խորհրդական

Երբ սկեսրայրս մահացավ, մեր ընտանիքը հավաքվեց միասին՝ ընդունելու նրանց, ովքեր գալիս էին իրենց հարգանքի տուրքը մատուցելու: Այդ երեկո ես հաճախ էի տեսնում մեր 10-ամյա թոռնիկին, Փորթերին, կանգնած սկեսրոջս՝ իր մեծ տատի կողքին: Երբեմն նա կանգնում էր նրա ետևում՝ հսկելով նրան: Մի անգամ նկատեցի նրանց ձեռքերը միասին, տեսնում էի, ինչպես էր նա շոյում տատի ձեռքերը, փարվում նրան և կանգնում կողքին:

Մի քանի օր անց այդ պատկերը դեռևս իմ աչքի առաջ էր: Ես հուշում ստացա, որ էլեկտրոնային նամակ ուղարկեմ Փորթերին: Ես գրեցի այն ամենի մասին, ինչ տեսել և զգացել էի: Նաև հիշեցրեցի Փորթերին այն **ուխտերի** մասին, որ նա կապել էր մկրտվելիս, մեջբերելով Ալմայի խոսքերը Մոսիա 18 գլխում.

«Եվ այժմ, քանի որ դուք փափագում եք գալ Աստծո հոտը և կոչվել նրա ժողովուրդը, և հոժար եք կրելու մեկդ մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն,

Այո, և հոժար եք՝ սգալու նրանց հետ, ովքեր սգում են. այո, և մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության, և կանգնելու, որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ դուք կարող է լինեք, նույնիսկ՝ մինչև մահ, . . . որպեսզի դուք կարողանաք հավերժական կյանք ունենալ,

. . . Եթե սա է ձեր սրտի իղձը, ի՞նչ ունեք դուք դեմ Տիրոջ անունով մկրտվելուն՝ որպես մի վկայություն նրա առաջ, որ դուք մտել եք նրա հետ **ուխտի** մեջ,

ՆԱԽԱՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՅ ՄԻԹՐ

ԽՈՍՏՈՒՄԸ

Ուխտը խոստում է ձեր և Երկնային Հոր միջև:

որ կծառայեք նրան և կպահեք նրա պատվիրանները, որպեսզի նա իր Հոգին ավելի առատորեն դուրս թափի ձեր վրա» (հատվածներ 8–10):

Փորթերին բացատրեցի, որ Ալման ուսուցանում էր, որ ովքեր ցանկանում են մկրտվել, պետք է ցանկություն ունենան ծառայել Տիրոջը՝ ծառայելով մյուսներին իրենց ողջ կյանքում: Ես ասացի. «Չգիտեմ, դու գիտակցո՞ւմ էիր, թե ոչ, բայց դու պահում էիր քո **ուխտերը,** երբ տատիկի կողքին էիր՝ ցույց տալով քո սերը և հոգ տանելով նրա մասին: Մենք պահում ենք մեր **ուխտերն** ամեն օր՝ լինելով բարի, սեր դրսևորելով և միմյանց համար հոգ տանելով: Պարզապես ուզում եմ իմանաս՝ ես հպարտանում եմ քեզանով, որովհետև դու **ուխտ** պահող ես: Մկրտվելիս կապած քո **ուխտը** պահելով՝ դու կպատրաստվես կարգվելու քահանայությանը: Այդ հավելյալ **ուխտը** քեզ ավելի շատ հնարավորություն կտա օրհնելու և ծառայելու մյուսներին, և պատրաստվելու տաճարային **ուխտերին**: Շնորհակալություն ինձ լավ օրինակ ծառայելու համար: Շնորհակալություն, որ ցույց տվեցիր ինձ՝ ինչ է նշանակում լինել **ուխտ** պահող»:

Փորթերը պատասխանեց. «Շնորհակալություն, տատիկ: Երբ գրկում էի տատիկին, չգիտեի, որ պահում եմ իմ **ուխտերը,** սակայն ջերմություն էի զգում իմ սրտում և ինձ շատ լավ էի զգում: Ես գիտեմ, որ դա Սուրբ Հոգին էր իմ սրտում»:

Ես ևս ջերմություն զգացի իմ սրտում, երբ հասկացա, որ Փորթերը գիտի, որ իր **ուխտերը** պահելով, նա «միշտ [Երկնային Հոր] Հոգին [իր] հետ կունենա» [ՎևՈ 20.77]: Դա խոստում է, որը հնարավոր է դարձել Սուրբ Հոգու պարգևը ստանալու շնորհիվ: ■

«Մենք ուրախանալու մեծ պատճառ ունենք» ելույթից, Լիահոնա, *նոյ. 2013, 115–116:*

ԵՂԻՐ ՈՒԽՏ ՊԱՀՈՂ:

Մկրտվելով ես խոստանում եմ . . .

Որ սեր ու բարություն դրսևորեմ,

Սփոփեմ նրանց, ովքեր տխուր են,

Երկնային Հոր պատվիրանները պահեմ,

Եվ մյուսներին Երկնային Հոր մասին պատմեմ:

Ի պատասխան, Երկնային Հայրը ինձ խոստանում է . . .

Որ ես միշտ կունենամ Սուրբ Հոգին:

Ստորագրեց,

_____

Ավելին սովորեք այս ամսվա Երեխաների խմբի թեմայի մասին:

Ընտանիքն առանցքային դեր ունի Երկնային Հոր ծրագրում

Ջեն Թեյլոր

Միշան սիրում էր խորանարդիկներից աշտարակներ կառուցել, սակայն նա երբեմն տխրում էր, երբ դրանք թափվում էին գետնին: Ապա նա մի գաղտնիք սովորեց: Երբ նա ավելի շատ խորանարդիկներ էր դնում աշտարակի ներքևում, դա ամուր հիմք էր ստեղծում իր աշտարակի համար: Համբերությունն և փորձ պահանջվեց, որպեսզի շուտով նա կարողանար կառուցել աշտարակներ, որոնք անմիջապես չէին փլվում:

Ինչպես Միշան սովորեց ամուր աշտարակներ կառուցել, մենք էլ կարող ենք կառուցել ամուր ընտանիք: Ընտանիքները մեզ համար Երկնային Հոր ծրագրի շատ կարևոր մասն են: Նախքան մեր ծնվելը մենք ապրում էինք որպես Երկնային Հոր հոգևոր որդիներ և դուստրեր: Երբ երկիր գալու ժամանակը եկավ, ըստ Նրա ծրագրի, մենք ծնվեցինք ընտանիքներում: Նա ցանկանում է, որ մեր ընտանիքները մեզ պաշտպանեն, ուսուցանեն և օգնեն վերադառնալ Իր մոտ:

Մենք կարող ենք աշխատել մեր ընտանիքին ավելի ամուր հիմք ապահովել: Մենք կարող ենք ծառայել և օգնել միմյանց: Մենք կարող ենք լսել և բարյացակամորեն խոսել միմյանց հետ: Մենք կարող ենք միասին աղոթել և ուսումնասիրել սուրբ գրությունները: Մենք կարող ենք միասին աշխատել և միասին հաճելի ժամանակ անցկացնել: Համբերությամբ և փորձ ձեռք բերելով մենք կարող ենք ավելի ամուր ընտանիք կառուցել: ■

ԵՐԳ ԵՎ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆ

- «Ընտանիքները կարող են հավերժ միասին լինել», (*Children's Songbook*, 188)
- Ղուկաս 6.47–49

ՄՏՔԵՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

Ընտանիքով կարդացեք Ղուկաս 6.47–49: Այնուհետև զրուցեք, թե ինչ են այդ հատվածներն ուսուցանում մեզ ընտանիքների մասին: Ինչպե՞ս է ձեր ընտանիքն օգնել միմյանց դժվար պահերին: Ի՞նչ կարող եք անել ավելի ամուր հիմք կառուցելու համար:

ՆԱՐԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ՝ ՋԵՆԻՖԵՐ ԱՅՎԱԶԵԲԵՐԳԵՐԻ

Ընտանեկան աղոթք

Նամակ գրել մի միսիոների

Ընտանեկան երեկո

Ճաշել միասին

Ընտանեկան սուրբ գրությունների ուսումնասիրություն

Խաղալ միասին

Այցելել հիվանդի

Սովորել պատմություններ մեր նախնիների մասին

Գրեք ձեր մտքերը դատարկ մասերում:

ԱՄՐԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ

Կարող եք պաստառ պատրաստել՝ օգնելով ձեր ընտանիքին էլ ավելի ամրանալ:

- Չափահասի օգնությամբ կտրեք մասերը: Թղթի վրա սոսնձեք այն մասերը, որոնք ցույց են տալիս այն, ինչ ձեր ընտանիքն արդեն անում է: Այդ մասերը կներկայացնեն ձեր ընտանիքի հիմքը:
- Ընտրեք մեկ ուրիշ մաս, որը ցույց կտա այն, ինչ ձեր ընտանիքը կցանկանար անել կամ ավելի լավ անել: Այդ նպատակն ավարտելուց հետո, ավելացրեք այն ձեր աշտարակին: Կախեք պաստառն այնպիսի տեղում, որ բոլորը կարողանան տեսնել այն և շարունակեք ավելացնել մասեր, որոնք կամրացնեն ձեր ընտանիքը:

Սկրտությունը աշակերտ լինելու մեր ճամփորդության մեկնարկն է:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական 2013թ. հոկտեմբերի գերագույն համաժողովից

ՆԱՄՈՒՇԻՐ՝ ՍԱՌԹ ԳՐԻԵՐԻ

Երեց
Տերենս Մ. Վինսոն
Յոթանասունից

Որո՞նք են այն բաները, որոնք շատ դժվար է քեզ համար անել:

Ինչպե՞ս կարող ես խնդրել Երկնային Հորը՝ օգնել դժվար գործեր անելիս:

Ուրիշ ումի՞ց կարող ես օգնություն խնդրել:

Տեղաշարժել քարը

Մի անգամ մի փոքր տղա փորձում էր իր տան ետևի մասում մաքրել աղբոտ տարածքը, որպեսզի իր մեքենաներով խաղար այնտեղ: Այնտեղ կար մի մեծ քար, որը խանգարում էր նրա աշխատանքին: Տղան հրում էր և քաշում իր ողջ ուժով, բայց որքան էլ շատ էր տքնում, քարը տեղից չէր շարժվում:

Հայրը որոշ ժամանակ նայելուց հետո, մոտեցավ որդուն և ասաց. «Այսքան մեծ քարը տեղաշարժելու համար դու պետք է օգտագործես քո ողջ ուժը»:

Տղան պատասխանեց. «Ես օգտագործել եմ իմ ողջ ուժը»:

Նրա հայրն ուղղեց նրան. «Ոչ դու չես օգտագործել: Դու դեռ չես դիմել իմ օգնությանը»:

Ապա նրանք միասին կռացան և քարը հեշտությամբ տեղից շարժեցին:

Տերը ցանկանում է, որ մենք ապավինենք Իրեն՝ մեր խնդիրները լուծելիս: Այդ ժամանակ մենք կարող ենք զգալ Նրա սերն ավելի հաճախ, ավելի ուժգին, ավելի հստակ և ավելի անձնական ձևով: Մենք միավորվում ենք Նրա հետ և կարող ենք դառնալ Նրա պես: ■

«Ավելի մոտենալ Աստծուն» ելույթից, Լիահոնա, *նոյ. 2013, 105:*

ԼՈՒՍԱԲԱՆԱՐԸ՝ ՋԱՅ ՖՐԵԱՐԻՍԻ

Ես Դրիան եմ Ֆիլիպիններից

*Մաբուհայ, Կայբիգան**

Հատված հարցազրույցից՝ Էմի Ջեյն Լիվիթ

Երբևէ երազե՞լ ես ապրել կղզու վրա: Սա Ալեխանդրան է, իսկ ընտանիքի և ընկերների համար՝ կարճ՝ Դրիա: Նա ապրում է Ֆիլիպինների Մեբու կղզում մայրիկի, հայրիկի և երկու քույրերի հետ: Նա նաև ավագ եղբայր ունի, որը մահացել է Դրիայի ծնվելուց առաջ: «Ես գիտեմ, որ նա դեռևս մեր ընտանիքի մասն է, և ես մի օր կտեսնեմ նրան, որովհետև ընտանիքները հավերժ են», - ասում է նա: ■

** «Ողջույն, ընկերներ» տաղավոգերեն:*

Իմ սիրելի զբաղմունքներից մեկը պարն է: Ես բալետի պարուհի եմ: Հուսով եմ, հաջորդ տարի կտեղափոխվեմ հաջորդ մակարդակ, որը պուանտն է: Դա նշանակում է՝ ես հագնելու եմ բալետի հատուկ մաշիկներ, որոնք կօգնեն ինձ պարել ոտքի մատների վրա:

Ֆիլիպիններն ունի ավելի քան 7000 կղզի, այնպես որ կան այցելելու շատ գեղեցիկ վայրեր: Մեր տունը ծովափին է, և ես սիրում եմ խաղալ օվկիանոսում: Իմ սիրելի զբաղմունքներից է լողալը, որն ինքնուրույն եմ սովորել:

ՊԵՏՈՒՄԱԿԻՐ ԴԱՄԸ՝ ԹՈՒՄԱՍ ՋԵՅՆ, ԱՆՁՆԱԳՐԻՐ ԿԻՐՔԸ՝ ԷՄԻ ԹՐՈՒՆ

ՈՒԶՈՒՄ ԵՄ ՏԵՍՆԵԼ ՏԱՃԱՐԸ

Դպրոցում մեկ օր դասընկերներիցս մի քանիսը ասացին, որ Մորմոնները չեն հավատում Աստծուն: Ես ասացի նրանց, որ մենք հավատում ենք Աստծուն: Հաջորդ օրը ես դասարան տարա և բաժանեցի բացիկներ, որոնց դիմացի էջում Հիսուսի նկարն է, իսկ ետևի կողմում՝ Հավատո հանգանակները: Երբ դասընկերներս տեսան նկարը և կարդացին մեր հավատամքները, նրանք ուրախացան, համոզվելով, որ մենք հավատում ենք Աստծուն:

Մեր բախտը բերել է, որ ապրում ենք Ֆիլիպինների Սեբու տաճարին մոտ: Նախքան տաճարի նվիրագործումը ես ընտանիքիս հետ շրջել եմ տաճարում: Դա այնքան գեղեցիկ, խաղաղ վայր է: Ես երախտապարտ եմ, որ տաճարների շնորհիվ իմ ընտանիքը կարող է հավերժ միասին լինել:

ՊԱՏՐԱՍՏ ԵՄ:

Դրիայի պայուսակը լցված է նրա սիրելի իրերով: Դրանցից ինչը դու կդնեիր քո պայուսակում:

Ես սիրում եմ ընտանիքիս հետ այցելել տարբեր ծովափեր: Մի անգամ գնացել էինք Պալավան, դա կղզի է, որտեղով հոսում է աշխարհի ամենամեծ ստորգետնյա գետը: Շնչառական խողովակ հագած ես սուզվել եմ այնտեղ և դիտել բոլոր գույնզգույն ձկներին:

Մտածել Հիսուսի մասին

Մեյբլ Ջոնս Գեբոթ

Դժվար չէ հանգիստ նստել Եվ Հիսուսի,
բլրի վրա Նրա խաչի մասին մտածել,
Նրա բոլոր տառապանքների, որ կրեց ինձ համար,
Դժվար չէ լուռ նստել:

ՆԱՄՈՒՇԱՀԱՐՈՒՄՆԵՐԸ՝ ՔԵԹԻ ՄԱԿԴԻՐԻ

Մտածում եմ՝ ման
եկավ Նա ճամփեքով
փոշոտ,

և երեխաներին Նա
օգնեց սիրել և վստահել,

Դժվար չէ ուղիղ նստել,
ուշադիր լսել, ոտքերը չշարժել։
Ճիշտ է ես փոքր եմ, բայց դժվար չէ,
Մտածել Հիսուսի մասին՝ ամենևին դժվար չէ։ ■

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ ՄՏԱԾԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ԺԱՄԱՆԱԿ

Հաղորդության ժողովը հանգիստ նստելու և Փրկչի մասին մտածելու հատուկ ժամանակ է:

Հիսուսը մկրտվեց Հորդանան գետում:

Հիսուսը բժշկեց մարդկանց:

Հիսուսը սիրում էր երեխաներին:

Հիսուսը տառապեց և մահացավ մեզ համար:

Հիսուսը հարություն առավ Զատկի առավոտ:

Հիսուսի շնորհիվ մենք կրկին կապրենք:

Նկարեք ձեզ այստեղ կամ փակցրեք ձեր լուսանկարը:

ՀՈՒԱՆ ՆԵՍԸ ՄԿՐՏՈՒՄ Է ՀԻՄՈՒՄԻՆ, ԱՄԻՍ ՍՆՈՒՄՈՒՆ, ՔՐԻՍՏՈՍԸ ԲԺՇԿՈՒՄ Է ԿՈՒՅՐԻՆ, ԴԵԼ ԹԱՐՍՈՒՆ, ՊՍՏՄՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ, ԴԵԼ ԹԱՐՍՈՒՆ, ԳՈՂԳՈԹԱ, ՍԹՈՓ Մ ՍՏՈՐՈՒՆ; ՆԱ ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԿԱ, ԴԵԼ ԹԱՐՍՈՒՆ

ՀՈՒՅՍ ՏԵՄՆԵԼ ԱՊԱԳԱՅՈՒՄ

Սթան Փագսլի

2001 թ. սեպտեմբերի 12-ին կինս և ես քայլում էինք հիվանդանոցային հարկով Տուկսոնում, Արիզոնա, ԱՄՆ, անհանգիստ ժամեր անցկացնելով և սպասելով մեր որդու ծննդին: Մեր հեռուստացույցին և հիվանդանոցի բոլոր հեռուստացույցներին ցուցադրվում էին տեսանյութեր, թե ինչպես են նախորդ օրը Նյու Յորքում երկու երկնաքերները փլուզվում, վերածվելով փոշու և քարերի կույտի: Ժամեր տևող այդ տեսապատկերների ազդեցության տակ մենք հուսահատության գիրկն էինք ընկել: Թվում էր, երեխա աշխարհ բերելու համար դա ամենասոսկալի ժամանակն էր, երբ աշխարհը թվում էր այնքան խավար և ահաբեկող:

Հաջորդ օրը վաղ առավոտյան մեր որդին ծնվեց: Երբ գրկել էի մեր փոքրիկին, ես հիշեցի վերջին օրերի ավերիչ դեպքերը, որոնք ինձ հիշեցրեցին դեռևս 1988թ. բռնկված Յելոուսթոուն ազգային այգու հրդեհները: Կրակի բոցերին կուլ էր գնացել անտառի մոտ 800 000 ակր (323 750 հա) տարածք: Թվում էր, այդ պուրակը լիովին ամայացել էր: Նորությունների թողարկումով ցուցադրվում էր միայն խանձված հողը և երկինք բարձրացող թանձր սև ծուխը: Ոչ մի մարդկային ջանք չէր կարող կորսված արագ վերականգնել: Թվում էր, թե բնության անխոնջ վերածունդն ու ուժը չեն կարող համեմատվել կործանիչ կրակի ուժի հետ:

Այն նույն քամիները, որոնք հարվածում և սպառնում են մեզ տապալել, նաև փոփոխության և աճի սերմեր են ցանում:

Սակայն հաջորդ գարնանը մի անպաճույճ հրաշք տեղի ունեցավ՝ այրված հողի միջից փոքր բույսեր և ծաղիկներ սկսեցին ծլարձակել: Աստիճանաբար, շատ ավելի ծառեր, ծաղիկներ ու թփեր ծաղկեցին: Այգու վերածնունդը դանդաղ էր ընթանում՝լի աննշան, փառավոր մանրամասներով և ժամանակի ընթացքում արդյունքը տպավորիչ էր:

Այն պահին, երբ երկյուղը, կարծես, Յելոուսթոնի բորբոքվող հրդեհի պես կլանում է մեզ, երբ մեր հույսն ու հավատը, կարծես, իրենց հնարավորության եզրագծում են, մենք պետք է հիշենք, որ ունենք մի կայուն, անսասան հիմք, որն ավելի հզոր է, քան մեր դեմ ծառացած չարի որևէ ուժ: Հելամանը բացատրում է, որ այդ հիմքը «մեր Քավիչի վեմն է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին»: Եթե մենք հաստատվենք Նրանում, ապա «երբ դևն առաջ ուղարկի իր զորեղ քամիները, այո, իր նետերը պտտահողմում, այո, երբ նրա ողջ կարկուտը և նրա զորեղ փոթորիկը հարվածի ձեզ, այն չի ունենա զորություն ձեր վրա՝ քաշելու ձեզ վար՝ դեպի թշվառության ու անվերջ վայի անդունդը, այն վեմի շնորհիվ, որի վրա դուք կառուցված եք, որը հաստատուն հիմք է, հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն կարող ընկնել» (Հելաման 5.12):

Աշխարհի չարի և գայթակղության կատաղի ուժերին դիմակայելիս, գուցե մտածենք, որ ավետարանի փոքր և պարզ ազդեցությունն անհամեմատելիորեն փոքրանում է և ստվերում մնում: Գուցե կասկածենք և հուսահատվենք, երբ զուր սպասենք, որ սխալը կշտկվի, ցավը կմեղմվի և հարցերը կլուծվեն: Այն նույն քամիները, որոնք հարվածում և սպառնում են մեզ տապալել, նաև փոփոխության և աճի սերմեր են ցանում, և ավետարանի անսահման ուժը հանդարտ գործում է երկրային կյանքի հողում, պատրաստելով կյանքի և հույսի հազարավոր փոքր սերմեր: ■

Հեղինակն ապրում է Վաշինգտոնում, ԱՄՆ:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԷՐԻԿ ՍԱՆԴՍՏՐԻՄ

ՆԿԱՐԸ՝ ՌՈԲԵՐՏ Թ. ԲԱՐԵՏ

ՀՈՎԱՐԴ Վ. ՀԱՆԹԵՐ

Հովարդ Վ. Հանթերը 15 տարեկանում արժանացել է **Արծիվ սկաուտ պարգևին** (երիտասարդ տղաների նվաճումների ծրագրի բարձրագույն պարգևին)։ Նա հրապուրվել էր **տոհմաբանությամբ** և հաճախ ժամանակ էր անցկացնում Եկեղեցու տոհմաբանական գրադարանում կամ ընտանիքներ այցելելով։ Առաքյալի պաշտոնում ծառայելիս նա օգնեց հողատարածք ընտրել **Բրիգամ Յանգ Համալսարանի Երուսաղեմի կենտրոնի** համար։ Որպես Եկեղեցու Նախագահ նա խրախուսում էր անդամներին հաճախ երկրպագել տաճարում և նվիրագործեց **Բաունթիֆուլ Յուտա Տաճարը** իր մահից ընդամենը երկու ամիս առաջ։

Նաև այս համարում

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եթե ձեր աչքն ուղղված լինի միայն

Իմ փառքին

էջ 40

Երիտասարդ չափահասները ողջ աշխարհից խորհում են այն մասին, թե ինչ է նշանակում հետևել Փրկչի օրինակին և համեստորեն ապրել:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Լուսինը կանա՞չ է: Լուսնի վրա մարդու իջնելը հորինվա՞ծ պատմություն էր: Լրացրեք այս վիկտորինան, սովորելով, թե ինչպես տարբերել Աստծո ճշմարտությունը սատանայի ստերից:

ՃԻՇՏ է, թե ՍԽԱԼ

էջ 64

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Դա շատ հեշտ է, պապիկ»:

էջ 67

Կզարմանա՞ք, եթե պարզեք, որ կարող եք Մորմոնի Գիրքը կարդալ մեկուկես օրում:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 021098 42015